ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Երևանի զարգացման 2024 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2024 թվականի ծրագիրը ենթակա է հրապարակման օրենքով սահմանված կարգով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » « » 2023թ.
հ. որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6
ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ 10
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ 12
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 15
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 20
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ 26
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 31
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ 38
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 43
ՄՇԱԿՈՒՅԹ 46
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ 51
ՏՐԱՆՍՊՈՐՏ 55
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 64
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ 80
ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ 84
ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՆՆ ՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ 88
ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 91
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 96
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 102
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 110
ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 115
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 120
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 129
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 137
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 142
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 147
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 152
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ 161

ՆԱԽԱԲԱՆ

Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է: Մայրաքաղաքի տարածքը կազմում է 223 քառ.կմ, բնակչությունը՝ 1098,9 հազ. մարդ: Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ և կայուն զարգացումը:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն:

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակները, Հայաստանում գործող բանկերն ու ֆինանսական հաստատությունները: Երևանը հանդիսանում է նաև կարևորագույն տրանսպորտային հանգույց:

Երևանի զարգացման 2024 թվականի ծրագիրը նպատակ ունի ապահովել բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ երաշխավորելով երևանցիների կյանքի որակի բարելավումը:

Երևանը պետք է լինի մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի, ավանդույթների և ապագայի քաղաք, որտեղ ապահովված կլինի հասարակության յուրաքանչյուր անդամի անվտանգ և արժանավայել կյանքը, ինքնաարտահայտման հնարավորությունը, բավարարված կլինեն սոցիալական ապահովության կարիք ունեցող քաղաքացիների նվազագույն անհրաժեշտ կարիքները: Զարգացման ծրագրի իրականացման գրավականը հանդիսանում է քաղաքացիների վստահությունը վայելող և արդյունավետ գործող քաղաքային իշխանությունը, ինչպես նաև Երևանի ավագանին, որոնք հիմնված են՝ հարգելու իրավունքները և ազատությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանն ակտիվ երկխոսության միջոցով կառավարման գործընթացներին մասնակից դարձնելը: Ծրագիրը ներկայացնում է Երևան քաղաքի ընդհանուր վիճակի բնութագիրը, քաղաքային տնտեսության առանձին բնագավառներում և վարչական շրջաններում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև 2024 թվականին նախատեսված միջոցառումները՝ հիմք ընդունելով Երևանի զարգացման 2024-2028թթ. հնգամյա ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակում
2. Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծի լրամշակում
3. Քաղաքաշինական կադաստրային համակարգի նպատակի և տեխնիկական հնարավորությունների վերանայում (GIS) (Երևան քաղաքի համար GIS-Աշխարհագրական տեղեկատվական համակարգի ստեղծում (ԱՏՀ/GIS) (Geographic Information System))
4. Ճանապարհափողոցային ցանցի զարգացում և բարելավում, այլընտրանքային կապերի ստեղծում, կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովում
5. Երևան քաղաքի առանձին հատվածների կառուցապատման հատակագծերի և վերակառուցման քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի մշակում՝ բացառելով կետային կառուցապատումները
6. Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման լիարժեք մատչելիության ապահովում
7. Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմանն ու հարմարվողականությանն ուղղված ծրագրերի իրականացում
8. Վերականգնվող էներգետիկայի զարգացմանը և վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմանն ուղղված քաղաքականության իրականացում
9. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավում
10. Վերելակային տնտեսության արդիականացում
11. Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, մուտքերի, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովում
12. Ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգերի ընդլայնում և գործող ինժեներական ենթակառուցվածքների արդիականացում
13. Հանրային տրանսպորտի կառավարման համակարգերի ներդրում
14. Հանրային տրանսպորտի հավաքակազմի թարմացում և համալրում, այդ նպատակով նոր շարժակազմերի՝ ավտոբուսների, նոր սերնդի տրոլեյբուսների, էլեկտրաավտոբուսների ձեռք բերում
15. Լուսացուցային տնտեսության արդիականացում, նոր լուծումների ներդրում
16. Զբոսաշրջության դիվերսիֆիկացում
17. Ինքնակազմակերպված զբոսաշրջիկների համար ենթակառուցվածքների և տեղեկատվության հասանելիության բարձրացում
18. Երևանի զբոսաշրջային պոտենցիալի հանրահռչակում տարբեր թիրախային շուկաներում, զբոսաշրջության կայուն զարգացում
19. Փողոցների, բակային տարածքների, հուշարձանների, պուրակների, պատմամշակութային արժեք ունեցող շենքերի արտաքին լուսավորության ապահովում
20. Արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգում և վերանորոգում
21. Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում
22. Ջրային տարածքների էկոլոգիական վիճակի բարելավում
23. Հանգստի գոտիների ստեղծում, մայրաքաղաքի կանաչ ֆոնդի երիտասարդացում և ծերացած ծառերի փոխարինում, անտառապաշտպանիչ, բուֆերային տարածքների հիմնում

24. Պայքար մթնոլորտային օդի աղտոտման դեմ, օդի որակի մոնիթորինգի արդիական համակարգի ստեղծում
25. Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում
26. Սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավում, գույքի արդիականացում, վերազինում
27. Երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի աշխատանքների արդյունավետության բարձրացում՝ համայնքային սոցիալական ծառայությունների ներդրման միջոցով
28. Զբաղվածության ծրագրերի կազմակերպում և իրականացում բոլոր խոցելի խմբերի համար
29. Ուսումնական հաստատությունների կրթական միջավայրի բարելավում՝ ապահովելով մատչելիությունն ու համապատասխանեցումը ժամանակակից կրթական պահանջներին
30. Աջակցություն որակյալ կրթական ծառայությունների մատուցմանը՝ ձեռնարկելով կարողությունների զարգացմանն ու արժեհամակարգի ձևավորմանը միտված միջոցառումներ
31. Թվայնացման արդյունքում առաջացող կիբեր անվտանգության ապահովում
32. Արտադպրոցական ուսուցմանն ու մշակութային կրթության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում, ոլորտի ենթակառուցվածքների շարունակական զարգացման ապահովում
33. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթի բոլոր ճյուղերում մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովում

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևան քաղաքում գործում է թվով 13430 օբյեկտ, որից առևտրի՝ 8125, հանրային սննդի՝ 2628, կենցաղային ծառայության՝ 2677, հեղուկ վառելիքի՝ 193, սեղմված բնական և հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետեր՝ 80, հյուրանոցային համալիր, 10 սպառողական և 14 գյուղատնտեսական արտադրանքի շուկա, 23 առևտրի կենտրոն՝ 202, հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման սրահ՝ 22:

Երևան քաղաքում գործող առևտրի օբյեկտներից 23,7%-ը կենտրոնացված է Կենտրոն, 13,3%-ը՝ Արաբկիր, 12,8%-ը՝ Նոր Նորք վարչական շրջաններում, հանրային սննդի օբյեկտների 36,4%-ը՝ Կենտրոն, 13,9%-ը՝ Շենգավիթ, 11,2%-ը՝ Արաբկիր վարչական շրջաններում, կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 39,5%-ը՝ Կենտրոն, 10,8%-ը՝ Շենգավիթ, 10,1%-ը՝ Արաբկիր վարչական շրջաններում:

Գյուղատնտեսական արտադրանքի առևտրի շրջանառության մեծ ծավալն իրականացվում է խոշոր առևտրի օբյեկտներում և խանութներում, իսկ գյուղատնտեսական արտադրանքի շուկաները թերծանրաբեռնված են և կատարվող առևտրի շրջանառությունը հասնում է փոքր ծավալների:

Հիմնախնդիրներ

1. Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենսդրական դաշտի կարգավորում,
2. Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելման և արգելման ուղղությամբ հսկողության ուժեղացում,
3. Առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների տրամադրման և կառավարման էլեկտրոնային հարթակի ստեղծում,
4. Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և դրանց ապամոնտաժման աշխատանքների իրականացում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում, ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում	Ավտոմատ սարքավորումների միջոցով առևտրի և ծառայությունների մատուցման գործունեությունն օրենքով կանոնակարգված չէ, ուստի նախատեսվում է դրանց գործունեության համար սահմանել տեղական տուրքի տեսակ և ավագանուն վերապահել համայնքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ սարքավորման միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու կարգը, պայմանները, սահմանափակումները, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների թույլատրվող տեսակները սահմանելու լիազորություն: Առաջարկություններ կներկայացվեն նաև առևտրի և ծառայությունների ոլորտի այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:		2024 թվականի ընթացքում
2.	Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում	Բացօթյա ապօրինի առևտուրը բերում է բազմաթիվ բացասական հետևանքներ: Առաջին հերթին բացօթյա ապօրինի առևտուրը վտանգում է սպառողների առողջությունը: Արևի, անձրևի ու ձյան ազդեցության, փոշու և մեքենաների արտանետումների հետևանքով գյուղատնտեսական արտադրանքն արագ որակազրկվում և փչանում է, քիմիական պրոցեսների հետևանքով դրանցում առաջանում են թունավոր նյութեր և սպառնում բնակչության առողջությանը: Բացօթյա ապօրինի առևտուրն առաջացնում է նաև փողոցներում հակասանիտարական վիճակ, խոչընդոտում հետիոտնին և տրանսպորտի երթևեկին, երբեմն ստեղծում ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման իրավիճակ: Առևտրի գործունեությունից առաջացած աղմուկի հետևանքով խանգարվում է մարդկանց հանգիստն ու անդորրը՝ առաջացնելով նրանց շրջանում դժգոհություններ: Առևտուր իրականացնելու համար անհրաժեշտ զանազան պարագաների տեղադրման հետևանքով աղճատվում է քաղաքի տեսքը՝ ստեղծելով գեղագիտական տեսանկյունից ոչ հաճելի պատկեր: Վերոգրյալի կապակցությամբ 2024 թվականի ընթացքում բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելման ուղղությամբ կձեռնարկվեն լայնածավալ միջոցառումներ, կառգրավվեն ապօրինի առևտրի իրականացման և ծառայությունների մատուցման առարկաները:	ՀՀ ՆԳՆ ոստիկանություն	2024 թվականի ընթացքում
3.	Շաբաթ, կիրակի և տոն օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների	2011 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության համագործակցության շնորհիվ մայրաքաղաքում գյուղատնտեսական արտադրանքի առևտուրը կանոնակարգելու, բացօթյա ապօրինի առևտուրը վերացնելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, բնակչությանը թարմ ու որակյալ, մատչելի մթերքներով	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2024 թվականի ընթացքում

	կազմակերպում	ապահովելու նպատակով Արաբկիր, Ավան և Կենտրոն վարչական շրջաններում հաջողությամբ գործունեություն են իրականացրել գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառները, որտեղ առևտուրն իրականացրել են միայն գյուղմթերք արտադրողները: Ներկայումս նշված տոնավաճառը կազմակերպվում է Կենտրոն վարչական շրջանում՝ Հրազդան մարզադաշտի հարակից տարածքում: 2024 թվականի ընթացքում Երևան քաղաքի մյուս վարչական շրջաններում պահանջարկ առաջանալու դեպքում աշխատանքներ կտարվեն գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառների և նոր շուկաների կազմակերպման և գործունեության իրականացման ուղղությամբ:		
4.	Համայնք–մասնավոր հատված համագործակցությամբ Երևան քաղաքում կենդանիների շուկաների կառուցում	Երևան քաղաքում չկան կենդանիների շուկաներ, ինչի արդյունքում շատ հաճախ մայրաքաղաքի փողոցներում իրականացվում է կենդանի կենդանիների վաճառք, որն առաջացնում է օրենսդրական պահանջների խախտում, ինչպես նաև հակասանիտարական վիճակ: Վերոգրյալի կապակցությամբ կկատարվեն ուսումնասիրություններ, կորոշվեն դրանց տեղակայման վայրերը և աշխատանքներ կտարվեն մասնավոր ներդրումների ներգրավմամբ դրանց կառուցման համար:		2024 թվականի ընթացքում
5.	Առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների տրամադրման և կառավարման էլեկտրոնային հարթակի ստեղծում	Տնտեսվարող սուբյեկտների շահերի պաշտպանություն: «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով սահմանված է առևտրի և ծառայությունների ոլորտի թվով 18 թույլտվության տեսակ: 2022-2023թթ. ընթացքում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից ֆինանսավորվող «Երևան 2.0 դեպի ավելի ընդգրկուն ու կանաչ վերականգնում» ծրագրի շրջանակներում ստեղծվել է https://dimum.yerevan.am/ առցանց հարթակը, որի միջոցով տնտեսվարող սուբյեկտները, նշված թույլտվություններից թվով 3-ը, ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի և հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվություններ ստանալու համար դիմումները ներկայացնում են էլեկտրոնային եղանակով, նախորոք գրանցվելով առցանց համակարգում, իսկ տեղական տուրքի գումարը՝ վճարում առցանց, ինչի արդյունքում նշված թույլտվությունները տնտեսվարող սուբյեկտները ստանում են ավելի արագ և դյուրին: Բարձրացել է կառավարման արդյունավետությունը և նվազել կոռուպցիոն ռիսկերը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ նախատեսվում է առևտրի և ծառայությունների ոլորտի մնացած բոլոր թույլտվությունների տրամադրման և կառավարման նպատակով ստեղծել էլեկտրոնային հարթակ և թույլտվությունների դիմումներն ընդունել և թույլտվությունները տրամադրել բացառապես էլեկտրոնային եղանակով:		2024 թվականի ընթացքում

6.	Ընդհանուր օգտագործման տարածքներում կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում	Երևան քաղաքում իրականացվում են առևտրի և ծառայությունների ոլորտի մեծ թվով կրպակների ապամոնտաժման աշխատանքներ, սակայն դեռևս ապամոնտաժման կարիք ունեն Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում, փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների) և ժամանակավոր այլ շինությունների մի մասը: Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու, հետիոտնի ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, հողամասի վարձակալության պայմանագրի ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող կրպակների ապամոնտաժման ուղղությամբ: Առաջնահերթությունը կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը:		2024 թվականի ընթացքում

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Գովազդային գործունեությունը մայրաքաղաքում իրականացվում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Բազմաբնակարան շենքերի մասին» ՀՀ օրենքի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, Երևան քաղաքի ավագանու 2009թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի և գովազդի միջոցի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» 37-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին ձևավորման և գովազդի վարչությունն իրականացնում է մեծ, միջին և փոքր գովազդային վահանակների (միջոցների), ինչպես նաև շենք-շինություններին տեղադրված գովազդային ուրվանկարների համաձայնեցում, գովազդային մակերեսների գույքագրում, արտաքին գովազդի էլեկտրոնային բազայի կառավարում, գովազդի ոլորտով վարչական շրջանների համապատասխան աշխատակազմի կողմից կատարված աշխատանքների նկատմամբ վերահսկողություն: Գովազդային կազմակերպությունների տնօրենների հետ պարբերաբար տեղի են ունենում հանդիպում քննարկումներ՝ վահանակների արդիականացման, ուժի մեջ մտած չափորոշիչներին համապատասխանեցման, գովազդային դաշտի օպտիմալացմանն և արդիականացմանն ուղղված այլ ծրագրերի վերաբերյալ:

Իրականացվում են իրավական ակտերին չհամապատասխանող, ինչպես նաև ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքներ:

Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքում գովազդային գործունեություն է իրականացնում թվով 79 գովազդային կազմակերպություն, տեղադրված (տեղաբաշխված) գովազդային միջոցների թիվը 1749 հատ է՝ ընդամենը 31,200 քմ մակերեսով:

Երևանում գտնվող շենք/շինությունների վրա գովազդ տեղադրած տնտեսվարող սուբյեկտների թիվը կազմում է 8534 հատ, իսկ շենք/շինությունների վրա տեղադրված գովազդի ընդհանուր մակերեսը կազմել է 37,456 քմ :

Հիմնախնդիրներ

1. Արտաքին գովազդի համապատասխանեցման անհրաժեշտություն չափորոշիչներին և այլ իրավական ակտերին,
2. Գովազդային տարածքների գույքագրման, հաշվառման անհրաժեշտություն,
3. Համայնքային հողերի և գույքի, շենքերի և շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների կանոնակարգման և ապօրինի տեղադրված գովազդների (միջոցների) ապամոնտաժման աշխատանքների անհրաժեշտություն,
4. Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտություն,
5. Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման աշխատանքներ,
6. Տոնական ձևավորման հայեցակարգի և արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների մշակման անհրաժեշտություն,
7. Համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման անհրաժեշտություն,
8. Երևան քաղաքում արդեն իսկ տեղադրված քաղաքային գույքի (նստարան, աղբաման) վերանորոգում և արդիականացում,
9. Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն բնակիչների մասնակցության ապահովմամբ:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում	Նախատեսվում է 2024 թվականին իրականացնել էլեկտրոնային կայքի գործարկումը: Առցանց հարթակի միջոցով տնտեսվարողները հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր և ստանալ Երևան քաղաքում արտաքին գովազդի տեղադրման թույլտվություն: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը: Ծրագրի նպատակն է վերահսկելիության և թափանցիկության ավելացումը, թույլտվությունների տրամադրման գործընթացների օպտիմալացումը և արագացումը:	Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն ՓԲԸ	2024 թվականի հունվար-դեկտեմբեր
2.	Քաղաքի կահավորում	Նախատեսվում է իրականացնել բնակչության համար քաղաքն ավելի հարմարավետ դարձնելու, տեղեկատվական և հայտարարությունների վահանակներ ավելացնելու և հները նորով թարմացնելու գործընթաց: Կիրականացվի քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակների տեղադրման աշխատանքներ, մասնավորապես, մշակութային կրթօջախների և տուն-թանգարանների դիմաց:		2024 թվականի հունվար-դեկտեմբեր
3.	Վահանակների տեղադիրների տրամադրման, տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմների ներդրումներ	Նախատեսվում է իրականացնել տուրքերի և վարձավճարների հստակ տարեկան պլանավորում, տուրքերի գանձման կարգի արդյունավետ կատարման ապահովում, գովազդային վահանակների կրճատում՝ համայնքի եկամուտների ավելացմանը զուգահեռ, գովազդային վահանակների տեղադիրների և տեսակների սահմանում ըստ համայնքի նպատակահարմարության՝ հաշվի առնելով փողոցների և շենքերի արտաքին տեսքը, վահանակների տեղադիրների տրամադրման ավելի պարզ և նպատակային մեխանիզմի սահմանում, կառավարման համակարգի արդիականացում և արդյունավետության բարձրացում:	Գովազդային կազմակերպություններ	2024 թվականի ապրիլ-դեկտեմբեր

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի գերակայությունն առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Երևան քաղաքում բնակչությանն արտահիվանդանոցային և հիվանդանոցային անվճար բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններ են մատուցվում ավելի քան 110 առողջապահական կազմակերպությունների կողմից, որից 23-ը գործում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ, այդ թվում՝

Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպություններ	
Առողջապահական հիմնարկ	**23**
Բժշկական կենտրոն, այդ թվում	**4**
- Մասնագիտացված հիվանդանոց	1
- Ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց (ներառյալ պոլիկլինիկական ծառայություն)	2
- Ընդհանուր պրոֆիլի բժշկագիտական կենտրոն	1
Շտապբուժօգնության ծառայություն	1
Ծննդատուն	1
Պոլիկլինիկա	1 5

Երևան քաղաքի բնակչության որակյալ բուժծառայությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հագեցվածությունը: Երևանի ենթակայության պոլիկլինիկական բուժհաստատություններից 15-ը գրեթե հագեցած են անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, հիվանդանոցային ծառայություններից 2-ը հագեցած են, 3-ը՝ միջին հագեցվածության են:

Շարունակական բնույթ ունեցող «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում բուժհաստատությունները հագեցվել են 778 անուն նոր բուժսարքավումներով, այդ թվում՝ լաբորատոր ախտորոշիչ, գործիքային հետազոտությունների, ֆիզիոթերապևտիկ սարքավորումներ, բժշկական պարագաներ (վիրահատական սեղաններ, լամպ, գինեկոլոգիական աթոռներ և այլն) և այլ անհրաժեշտ սարքավորումներ ու պարագաներ: Երևանի ենթակայության պոլիկլինիկական բոլոր հաստատություններն ապահովվել են շարժական և ստացիոնար ռենտգեն սարքավորումներով: Ծրագրի իրականացման արդյունքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններից սկսեցին օգտվել ոչ միայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք՝ պետական պատվերի շրջանակներում, այլ նաև վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից օգտվող քաղաքացիներ:

Վճարովի հիմունքներով մատուցվող ծառայությունների ծավալի ավելացումը հնարավորություն է ընձեռում ստանալ լրացուցիչ եկամուտներ, ինչն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում ոչ միայն ապահովել բուժհաստատությունների ընթացիկ գործունեությունը, այլև ստեղծել ֆոնդեր՝ հետագա զարգացման համար: Մասնավորապես՝ ընկերություններն իրենց միջոցների հաշվին իրականացրել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող սոցիալապես անապահով բուժաշխատողների համար կազմակերպվում են վերապատրաստման գործընթացներ:

Կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային (սոնոգրաֆիայի և մամոգրաֆիայի), կորոնորագրաֆիկ հետազոտությունները պետության կողմից երաշխավորված դժվարամատչելի հետազոտությունների ցանկում, իսկ սրտի կորոնար անոթների ստենտավորման ծառայությունը նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական ծառայությունների ցանկում ներառված լինելու պատճառով հասանելի չեն հասարակության լայն շերտերի համար, ուստի սոցիալական լարվածությունը որոշ չափով մեղմելու նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից ձեռք են բերվում վերոնշյալ բժշկական հետազոտությունները և ծառայությունը: Ընդ որում՝ կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայությունից 2014-2022 թվականներին օգտվել է 1449 քաղաքացի, իսկ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունից 2018-2022 թվականներին՝ 417 քաղաքացի, 2021 թվականին առաջին անգամ ձեռք է բերվել կրծքագեղձի սքրինինգային հետազոտության ծառայություն, որից օգտվել է 216 քաղաքացի, իսկ 2022 թվականին ձեռք է բերվել ախտորոշիչ կորոնարոգրաֆիկ ծառայություն, որից օգտվել է 70 քաղաքացի: 2023 թվականին, նշված հետազոտություններից բացի, մինչև 104 անձի համար ձեռք է բերվել նաև սրտի անոթների ստենտավորման ծառայություն՝ 1 դեղապատ ստենտով:

Հիմնախնդիրներ

1. Բժշկական ծառայությունների որակի բարելավում, բժշկական հաստատությունների շենքային պայմանների բարելավում,
2. Տեխնիկական հագեցում, այդ թվում՝ վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքավորումներով և պարագաներով, գույքի արդիականացում,
3. Վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական և ոչ բժշկական ծառայությունների ծավալի ավելացում, վերջիններից ստացված մուտքերից աշխատակիցներին լրավճարների տրամադրում,
4. Երևան քաղաքի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում,
5. Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժիշկների, բուժքույրերի և դեղագետների վերապատրաստում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և գույքի ձեռքբերում	Ծրագրի շրջանակներում 2024 թվականին նախատեսվում է ձեռք բերել. 1) ռենտգեն ապարատ՝ 1 հատ, 2) արյան բաղադրամասերի համար նախատեսված ցենտրիֆուգ՝ 1 հատ, 3) դոնորի արյունատվության համար նախատեսված բազկաթոռ՝ 2 հատ, 4) արյան մեջ հեմոգլոբինի չափման քանակական վերլուծիչ՝ 1 հատ, 5) հիվանդի մոնիտոր՝ 10 հատ, 6) ստացիոնար ուլտրաձայնային հետազոտման սարք՝ 3 տվիչով՝ 1 հատ, 7) հոսանքի գեներատոր՝ 1 հատ, 8) սնուցման սարք՝ 1 հատ:		2024 թվականի ընթացքում
2.	Բնակչությանը դժվարամատչելի հետազոտությունների տրամադրում	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել. 1) կոնտրաստավորմամբ կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն՝ 100 հատ, 2) առանց կոնտրաստավորման կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն՝ 30 հատ, 3) մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն՝ 120 հատ, 4) կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծառայություն՝մինչև 80 անձի համար, 5) կորոնորագրաֆիկ հետազոտություն՝ մինչև 125 անձի համար, 6) սրտի կորոնար անոթների ստենտավորման ծառայություն-մինչև 100 անձի համար՝ 1 դեղապատ ստենտի տեղադրումով:		2024 թվականի ընթացքում
3.	Երևանի ենթակայության բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավում	Նախատեսվում է «Արշակունյաց պոլիկլինիկա», «Թիվ 22 պոլիկլինիկա», «Թիվ 15 պոլիկլինիկա», «Թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ների, «Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի Լեո ստորաբաժանման, «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի Սարի Թաղ ստորաբաժանման հիմնանորոգման աշխատանքների իրականացում:		2024 թվականի ընթացքում

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի բնապահպանական քաղաքականության հիմնական նպատակը մայրաքաղաքի շրջակա բնական միջավայրի պահպանությունը, պաշտպանությունը և բարելավումն է՝ քաղաքային տնտեսության կայուն, առողջ և համաչափ զարգացման և բնակչության բարեկեցության ապահովման համար:

Երևան քաղաքում շրջակա միջավայրի կառավարումը պայմանավորված է դրա հիմնական բաղկացուցիչ տարրերի՝ հողային ռեսուրսների, մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների և կենսաբազմազանության մշտադիտարկման, դրանց վիճակի բարելավման ուղղությամբ ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթների հետևողականորեն իրագործելու մակարդակով:

Կանաչապատ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման և հողապաշտպան միջոցառումների իրականացման նպատակով ներկայումս քաղաքը կանաչապատման ոլորտում որդեգրել է հետևյալ գիտահեն քաղաքականության իրագործումը.

1. կայուն և արժեքավոր ծառատեսակների ընտրություն՝ գազի, փոշու, ծխի և այլ աղտոտիչների նկատմամբ,
2. գեղազարդ և մշտադալար ծառատեսակների ընտրություն՝ հաշվի առնելով դրանց տնկման տարածքի միկրոկլիմայական և էկոլոգիական պայմաններն ու առանձնահատկությունները,
3. հողերի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ թփաշերտով մեկուսացում փողոցին հարող տարածքից,
4. կանաչ ցանկապատերի ներդրման մշակույթ տարբեր հարկաշարքային բուսականության տեղադրությամբ,
5. միամյա մեծաքանակ ծաղիկների փոխարինումը բազմամյա և սեզոնային հերթագայմամբ ծաղկող թփերով՝ լանդշաֆտային ճարտարապետական նախագծերի իրականացմամբ:

Ներկայումս մասնագիտական գործիքների միջոցով իրականացվում են կանաչ տարածքների գույքագրման աշխատանքներ: Այս աշխատանքների միջոցով հնարավոր կլինի հստակ և թվային տեղեկատվություն ունենալ կանաչ տարածքների վիճակի վերաբերյալ, որն էլ կնպաստի կանաչ տարածքների առավել արդյունավետ խնամքին և սպասարկմանը, նոր կանաչ տարածքների ստեղծմանը:

Կանաչապատման նորարական մոտեցումները ներդրվում են նաև Երևանի քաղաքապետարան ներկայացվող կանաչապատման նախագծերում, որտեղ կանաչապատման նախագծերի ներկայացման պարտադիր պահանջներ են համարվում պատնեշային և ծաղկող թփերի առկայությունը, ինչպես նաև էկոլոգիապես կայուն և մեր տարածքի կլիմային առավելապես հարմարված ծառատեսակների ընտրությունը, ինչը կարող է առավել արդյունավետ դարձնել ծառերի և թփերի էկոհամակարգային ծառայությունները:

Կանաչ տարածքների բարելավման և ընդլայնման նախապայման է հանդիսանում ոռոգման ցանցի կառուցումը և արդիականացումը: Ոռոգման ջրագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքները կրում են շարունակական բնույթ: Նոր ջրագծերի կառուցումը թույլ է տալիս զգալիորեն կրճատել ջրցանների կիրառումը, ինչը ծախսատար պրակտիկա է:

Հաշվի առնելով Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) չափորոշիչները՝ ըստ որի՝ մեկ անձին բաժին ընկնող կանաչ տարածքների մինիմալ մակերեսը 9 մ^2 է՝ առաջիկա 5 տարիների ընթացքում նոր այգիների և անտառների հիմնման միջոցով Երևանի կանաչ տարածքները կավելանան և կգերազանցեն Խորհրդային ժամանակահատվածի Երևանի ընդհանուր

օգտագործման կանաչ տարածքների 900 հա մակերեսին (այս պահին այն կազմում է 860 հա): Այսպիսով կհաղթահարենք և կգերազանցենք ԱՀԿ-ի սահմանած մինիմումի շեմը:

Կենսաանվտանգության ապահովման առումով Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում են Երևան քաղաքում թափառող կենդանիների գլխաքանակի կառավարման վերահսկման և զոոնոտիկ հիվանդությունների տարածման կանխարգելման աշխատանքներ՝ «Կենդանիների խնամքի կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ԿԽԿ) կողմից: ԹԿՎԿ-ի գործառույթներն են այդ կենդանիների հավաքումը, տեղափոխումը, նախնական զննումը, պատվաստումը, ստերջացումը և համարակալումը: ԹԿՎԿ-ին է վերապահվել նաև անկած կենդանիների դիերի հավաքման և դիակիզման կազմակերպման, տնային կենդանիների հաշվառման համակարգման գործառույթները:

Մթնոլորտային օդի աղտոտման մշտադիտարկման նպատակով 2022 թվականին Երևանի Շենգավիթ և Կենտրոն վարչական շրջաններում տեղադրվել են 5 փոշու աղտոտման չափման սենսորներ՝ Արգավանդ-Շիրակ և Բաբաջանյան-Աշտարակ նոր կառուցվող ճանապարհների վրա: Տեղադրված սարքերը թույլ են տալիս իրականացնել փոշու կախված մասնիկների՝ PM_1, $PM_{2.5}$ և PM_{10}, ազոտի երկօքսիդի NO_2, ջերմաստիճանի և խոնավության անընդհատ, առցանց դիտարկվող չափումներ: Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի հունիսի 27-ի հ՝ 815-Ն որոշման՝ Երևան քաղաքում 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարության ողջ ընթացում կառուցապատողը շինարարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրումը՝ առցանց հարթակի հասանելիությամբ:

Երևան քաղաքի էկոլոգիական վիճակի կարևոր բաղադրիչներից է ջրային ավազանի էկոլոգիական վիճակը, որը բնութագրվում է Երևանյան լճի, Հրազդան գետի և Գետառ գետի ջրերի որակով: Ներկայումս Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածությունը հիմնականում պայմանավորված է մեծ քանակությամբ կենցաղային և պոլիէթիլենային աղբի, ներհոսող կոմունալ-կենցաղային և գյուղատնտեսական կեղտաջրերի շնորհիվ տարբեր քիմիական տարրերի սահմանային թույլատրելի խտությունների նորմերի նկատմամբ բարձր պարունակությունների առկայությամբ: Պետական բյուջեից բնապահպանական վճարներից Երևան քաղաքին տրամադրված մասհանումների հաշվին 2022 թվականին հաջողությամբ իրականացվեց Երևանի ավագանու կողմից 2021 թվականի մայիսի 25-ի N 383-Ա որոշմամբ հաստատված «Հրազդան գետի և երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը: Հրազդան գետի և Երևանյան լճի ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելման նպատակով 2022 թվականին իրականացվեցին մերձափնյա շուրջ 10 հա տարածքում վնասակար բույսերի և կենցաղային աղբի մաքրման աշխատանքներ, Հրազդան գետի վրա տեղադրվեց աղբահավաք պատնեշ՝ կոշտ կենցաղային լողացող թափոնների որսման համար: 2022 թվականին իրականացվեցին նաև Երևանյան լճի մերձափնյա տարածքի բարեկարգման աշխատանքներ, որի շնորհիվ լիճը վերածվեց քաղաքացիների համար հարմարավետ հանգստի գոտու:

Միաժամանակ, Երևանի ավագանու 2022 թվականի հունիսի 21-ի N 609-Ա որոշմամբ հաստատվեց «Գետառի վրա ջրերի մաքրման կայանի կառուցման բնապահպանական 2023 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը, որը իրականացման փուլում է: Ծրագրի նպատակն է մաքրել Գետառը կեղտաջրերից՝ միաժամանակ կանխարգելելով աղտոտված, կեղտաջրերով հարուստ Գետառի միախառնումը Հրազդան գետին, որն էլ թափվում է Երևանյան լիճ:

2022 թվականին Երևանի քաղաքապետարանը նախաձեռնել է Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ տալու աշխատանքները, որի վերաբերյալ առկա է նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության դրական կարծիքը: Որպես բնության հատուկ պահպանվող տարածք՝ Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակի տրամադրումը թույլ կտա էապես սահմանափակել տարածքում տնտեսական գործունեությունը, սահմանել առավել մեծ հսկողություն աղտոտման կանխարգելման ուղղությամբ և պահպանել տարածքում առկա բնության էական տարրերը, կարմիրգրքյան բուսական և կենդանական տեսակները, պատմամշակութային արժեք ներկայացնող հուշարձանները, տարածքը դարձնել գրավիչ քաղաքացիների հանգստի ու զբոսաշրջության համար:

Երևանի քաղաքապետարանի կողմից 2020 թվականից իրականացվում է Երևան քաղաքի տարածքում թափոնների տեսակավորման պիլոտային ծրագիրը, որի ծավալները նախատեսվում է ընդլայնել: 2021 թվականին Երևան քաղաքում տեղադրվել է թափոնների տեսակավորման 135 կետ, առանձին տնտեսվարող սուբյեկտների հետ պայմանավորվածություններ են ձեռք բերվել տեսակավորված թափոնների կանոնավոր հավաքման ու հեռացման վերաբերյալ: Աշխատանքներն իրականացվում են ԿՇՄՊ ՀՈԱԿ-ի կողմից, որը համալրվել է անհրաժեշտ ժամանակակից մեքենամեխանիզմներով և նոր թափոնամաններով՝ տեսակավորման ևս 200 կետ ավելացնելու նպատակով:

Հիմնախնդիրներ

1. Մայրաքաղաքի հնացած, հիվանդ, չոր, տապալման ենթակա և/կամ ինվազիվ ծառերի փոխարինման անհրաժեշտություն առավել գեղազարդ, արժեքավոր ծառատեսակներով,
2. Ներհամայնքային ոռոգման ցանցի ընդլայնման և բարեկարգման անհրաժեշտություն,
3. Մայրաքաղաքի տարբեր հատվածներում բուֆերային անտառաշերտի ստեղծման, կանաչ տարածքների ավելացման անհրաժեշտություն,
4. Կլիմայի փոփոխության դեմ կանխարգելիչ և հարմարվողական միջոցառումների իրականացման անհրաժեշտություն,
5. Օդի աղտոտվածության նվազեցման միջոցառումների, մոնիթորինգի ժամանակակից համակարգի ներդրման անհրաժեշտություն,
6. Ջրային համակարգերի էկոլոգիական վիճակի բարելավման միջոցառումների անհրաժեշտություն,
7. Հողի բարելավման միջոցառումների անհրաժեշտություն, պայքար հողի էրոզիայի դեմ,
8. Կենցաղային աղբի տեսակավորման կետերի ընդլայնում, թափոնների վերամշակման մշակույթի ձևավորման անհրաժեշտություն:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտը**
1.	Կենդանաբանական այգու ընդլայնում	Ծրագրի արդյունքում Երևանի կենդանաբանական այգու ընդլայնման գործընթացների շրջանակներում կստեղծվի նոր ազատավանդակ փղերի համար՝ առավել լավ պայմաններով:	Միջազգային կառույցներ	2024 թվականի ընթացքում
2.	«Դալմայի այգիներ» հանրապետական նշանակության նորահայտ հուշարձանի տարածքում համայնքային զբոսայգու հիմնում	«Դալմայի այգիներ» հանրապետական նշանակության նորահայտ հուշարձանի տարածքում համայնքային զբոսայգու հիմնման ելակետային ուսումնասիրություններ, նախագծային աշխատանքներ: Կիրականացվի նախադեպը չունեցող՝ մոտավորապես 230 հա տարածքով համայնքային զբոսայգու ստեղծման առաջին փուլը: Նոր անտառպուրակը ունենալու է անտառային գոտի, մարզահրապարակներ, խաղահրապարակներ և ջրային ավազան:	Միջազգային կառույցներ	2024 թվականի ընթացքում
3.	Երևանի ջրային տարածքների էկոլոգիական վիճակի բարելավում	Ծրագրով նախատեսված է բարելավել Երևանի ջրային տարածքների էկոլոգիական վիճակը: Կիրականացվի Հրազդան գետի վրա թվով 2 աղբարոսիչ ճաղավանդակների տեղադրում: Կիրականացվի Հրազդանի կիրճի կանաչ տարածքներում և ջրային տարածքներում կուտակված շուրջ 9000 խմ աղբի հավաքում և տեղափոխում աղբավայր: Աղբորսիչ ճաղավանդակների տեղադրմամբ կիրականացվի կոշտ կենցաղային թափոնների հավաքումը և կբացառվի դրանց տեղափոխումը և կուտակումը Երևանյան լճում:	Մրցութային կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
4.	Հրազդանի կիրճին հատուկ կարգավիճակի շնորհում	Ծրագրով նախատեսվում է նախաձեռնել Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ շնորհելու աշխատանքներ: 2024թ կիրականացվի ծրագրի առաջին փուլը՝ տարածքի կենսաբազմազանության գույքագրում, թեմատիկ քարտեզագրում, բնապահպանական արժեքների բացահայտում, որը հիմք կհանդիսանա Հրազդանի կիրճին բնապահպանական կարգավիճակ շնորհելու ՀՀ կառավարության համապատասխան որոշման ընդունման համար:	Մրցութային կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպություններ, այլ շահագրգիռ, բնապահպանական, հասարակական կազմակերպություններ:	2024 թվականի ընթացքում
5.	Կանաչ տարածքների և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում	Ծրագրի նպատակն է թարմացնել կանաչապատման ոլորտում օգտագործվող ավտոտրանսպորտային պարկը, ձեռք բերել թվով 4 նոր հատուկ մասնագիտացված տեխնիկաներ: Նոր տեխնիկայի ձեռքբերումը հնարավորություն կընձեռի մայրաքաղաքում ունենալ բարեկարգ սիզամարգեր, ծաղկանոցներ, դեկորատիվ տնկիներ: Հնարավորություն կստեղծվի հատուկ տեխնիկայի միջոցով հանել նախկին տարիներից մնացած հատված կոճղերը և իրականացնել ծառատունկ այդ բնաբաժակներում:	Մրցութային կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
6.	Երևան քաղաքի	Ծրագրի նպատակն է մայրաքաղաքում և մայրաքաղաքը գոտիավորող	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ,	2024

	անտառպաշտպանիչ, բուֆերային տարածքների հիմնում	հարակից տարածքներում ստեղծել կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտ, որը կնպաստի ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավմանը: Բուֆերային գոտու հիմնական նպատակն է մեղմացնել մայրաքաղաքը քամիների ազդեցությունից, փոշուց և վնասակար արտանետումներից: Տարածքների ընտրության ժամանակ հաշվի է առնվում նաև Երևան քաղաքում քամիների գերակշռող ուղղությունները (քամիների վարդը): Ծրագրի շրջանակներում փուլային եղանակով կիրականացվի մայրաքաղաքը գոտևորող ոչ բուսածածկ տարածքների կանաչապատում: Առաջին փուլով Նուբարաշենի 8,5 հա անտառպաշտպանիչ տարածքի ստեղծմամբ կնվազեցվի աղբավայրի վնասակար ազդեցությունները հարակից բնակելի զանգվածների վրա:	մրցութային կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպություններ	թվականի ընթացքում
7.	Արժեքավոր և գեղազարդ ծառերի ձեռքբերում	Ծրագրի նպատակն է «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կարիքների համար ձեռք բերել թվով 1500 հատ արժեքավոր և գեղազարդ ծառերի տնկիներ: Ծրագրի արդյունքում «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ը կվերափոխի Երևան քաղաքի կենտրոնական փողոցների հիվանդ և ծեր ծառերը գեղատեսիլ, ծաղկող ծառերով: Այգիները նույնպես կհամալրվեն գեղատեսիլ, ծաղկող ծառերով:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ, մրցութային կարգով ընտրված մասնագիտացված կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջնորդվելով ՀՀ Կառավարության սոցիալական քաղաքականության հիմնական ուղղություններով և առաջնահերթություններով՝ 2019 թվականից Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվել են բարեփոխումներ:

Երեխաների պաշտպանության ոլորտում բարեփոխումների նպատակն է եղել իրականացնել երեխաների պաշտպանության համակարգի և նրանց իրավունքների գործուն իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման համալիր միջոցառումներ՝ հիմնվելով նախորդ փորձառության, ինչպես նաև առաջնորդվելով երկրի միջազգային հանձնառություններով և ոլորտում գործող միջազգային պարտավորություններով:

Նոր համակարգը ներդնելու արդյունքում առաջնային դիտարկվում են սոցիալական պաշտպանության ոլորտում ավելի արդյունավետ կառավարումը՝ մասնավորապես, համապատասխան գործիքակազմի, ֆինանսական, մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների ձևավորումը: Այս գործընթացների համար կարևոր է պետական մարմինների, Երևանի քաղաքապետարանի, միջազգային և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր հատվածի համագործակցությունը, որի ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Երևան համայնքի կողմից իրականացվող աշխատանքների ռազմավարությունն ուղղված է մայրաքաղաքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանն ու պահպանմանը, որի նպատակով համայնքն աջակցում է պետական սոցիալական ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև կազմակերպում և իրականացնում է տեղական և անհատական սոցիալական ծրագրեր:

Սոցիալական կարևորագույն խնդիր է նաև անօթևանների, մասնավորապես, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անօթևան անձանց հետ տարվող աշխատանքները, որի ուղղությամբ աշխատանքներ են տարվում Երևան համայնքի, ՀՀ ԱՍՀ նախարարության, ՀՀ ոստիկանության հետ:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովման ուղղություններն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, նրանց լիակատար ներառումը հասարակության մեջ, մատչելիության ապահովումը, որակյալ սոցիալական ծառայությունների առկայությունը և դրանցից օգտվելու հնարավորությունները: Սոցիալական ծրագրերում առաջնահերթություն է տրված ԼՂՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներին: Հաշվի առնելով ՀՀ-ում ստեղծված իրավիճակը՝ Արցախից բռնի տեղահանված ընտանիքների համար նախատեսվելու են ծրագրեր՝ ուղղված սոցիալական աջակցության տրամադրմանը, ներառմանն ու ինտեգրմանը:

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում գործող սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը բավարար չէ և տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունները Երևան համայնքում բաշխված են անհամաչափորեն, ուստի կիրականացվեն աշխատանքներ՝ ուղղված տարեցների սոցիալական խնդիրների լուծմանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան համայնքը խիտ բնակեցված լինելու պատճառով առանձնանում է իր սոցիալական խնդիրներով՝ ուստի թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին:

Արդիական է նաև արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին (օրինակ՝ COVID, ռազմական դրության, շենքերի փլուզման և այլն) աջակցության տրամադրումը, որը ևս մշտապես վարչության ծրագրերում համարվում է առաջնային:

Կարևոր է ընդգծել, որ համակարգի ներդրման համար կարևոր բաղադրիչ է համարվում սոցիալական աշխատանքի, տեղական սոցիալական պլանավորման, սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների ուժեղացման և թվայնացման անհրաժեշտությունը (տեղեկատվական բազայի առկայությունը), որի ուղղությամբ իրականացվում են համապատասխան աշխատանքներ:

Երեխաների պաշտպանության ոլորտն ակտիվ բարեփոխումների ենթարկվող ոլորտ է, որի նպատակն է իրականացնել երեխաների պաշտպանության համակարգի զարգացման և երեխաների իրավունքների իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման համալիր միջոցառումներ՝ հիմնվելով ոլորտային քաղաքականության, նախորդ փորձառության, գործող օրենսդրության վրա, ինչպես նաև առաջնորդվելով երկրի միջազգային հանձնառություններով և ոլորտում գործող միջազգային պարտավորություններով:

Բարեփոխումների արդյունավետ իրականացման շրջանակներում, կարևորելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (այսուհետ՝ Հանձնաժողովներ) դերը երեխաների պաշտպանության համակարգում, խնդիրներին մասնագիտական և միանման մեթոդաբանությամբ լուծում տալու, ինչպես նաև հասարարակական հիմունքներով գործող Հանձնաժողովների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը՝ վարչական շրջաններում 2022թ. ձևավորված երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինների մասնագետների պաշտոնների անձնագրերում ամրագրվեց համապատասխան գործառույթներ՝ կապված խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մասնագիտական գործառնման հետ:

Հիմնախնդիրներ

1. Երևան քաղաքում համայնքահեն սոցիալական ծառայությունների ներդրում,
2. Վարչության, բաժինների մասնագետների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների շարունակական վերապատրաստումների իրականացում,
3. Երևան քաղաքում ներդրված երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ կառավարման նպատակով, ինչպես նաև սոցիալական աշխատանքի, տեղական սոցիալական պլանավորման, սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառույթների ուժեղացման և թվայնացման անհրաժեշտություն (տեղեկատվական բազայի ձևավորում),
4. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավման ուղղությամբ նպատակային ծրագրերի, ինչպես նաև ծառայությունների պատվիրակման մեխանիզմների մշակման, կազմակերպման և իրականացման անհրաժեշտություն,
5. Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության միջոցով, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և կազմակերպությունների հետ խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման անհրաժեշտություն,

6. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության, սոցիալական ներառմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն,
7. Արժանապատիվ ծերացմանն ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտություն՝ ներառյալ որակյալ սոցիալական ծառայությունների ընդլայնում,
8. Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն,
9. Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով խնամատարության ինստիտուտի վերաբերյալ իրազեկումների իրականացում՝ շեշտադրելով ճգնաժամային և արձակուրդային խնամատար ընտանիքի տեսակները, խնամատար ընտանիքների թվի ավելացում,
10. Երեխաների՝ իրենց իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման անհրաժեշտություն,
11. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային միջոցառումներին ընդգրկման և հասարակության ներառման ապահովման անհրաժեշտություն,
12. Մանկալքության դեպքերի կանխարգելում՝ բոլոր շահագրգիռ կազմակերպությունների միջև համագործակցության միջոցով:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ կառավարման նպատակով շարունակական զարգացում	Երևան համայնքում երեխաների և սոցիալական պաշտպանության ներդրված համակարգի արդյունավետ կառավարման նպատակով շարունակական զարգացում՝ վարչական շրջանների համապատասխան բաժինների մասնագետների համար մշակված մոդուլին համապատասխան շարունակական վերապատրաստումներ, երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ գործարկման համար անհրաժեշտ գործիքակազմի մշակում, նյութատեխնիկական միջոցներով ապահովում:	Միջազգային, հասարակական և այլ կազմակերպություններ, վարչական շրջանների համապատասխան բաժիններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
2.	Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում	Նախատեսվում է Երևան համայնքում տարբեր սոցիալական խմբերի համար որակյալ և հասանելի սոցիալական ծառայությունների տրամադրում ու ապահովում:	Միջազգային, հասարակական և այլ կազմակերպություններ, վարչական շրջանների համապատասխան բաժիններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
3.	Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին կայուն եկամուտ ապահովելու նպատակով զբաղվածության ծրագրերի կազմակերպում	Խթանել բնակչության զբաղվածությունը՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության համատեքստում մասնագիտական ուսուցման և համապատասխան գործիքների տրամադրման միջոցով:	Միջազգային, հասարակական և այլ կազմակերպություններ, վարչական շրջանների համապատասխան բաժիններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
4.	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի իրականացում:	Միջազգային, հասարակական և այլ կազմակերպություններ, վարչական շրջանների համապատասխան բաժիններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
5.	Հասարակական կազմակերպություններին	Համագործակցության շրջանակում աջակցության տրամադրում այն հասարակական կազմակերպություններին,	Միջազգային, հասարակական և այլ կազմակերպություններ,	2024 թվականի ընթացքում

	աջակցություն	որոնք Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ իրականացնում են սոցիալական ծրագրեր՝ ուղղված սոցիալական աջակցության կարիք ունեցող տարբեր խոցելի խմբերին:	վարչական շրջանների համապատասխան բաժիններ	(շարունակական)
6.	Երևան համայնքում համայնքային սոցիալական ծառայությունների ներդնում և իրականացում	Համայնքային սոցիալական ծառայությունների հիմնում՝ արագ արձագանքման կարիք ունեցող խոցելի խմբերին ծառայությունների մատուցման կազմակերպման նպատակով:	Միջազգային, հասարակական և այլ կազմակերպություններ, վարչական շրջանների համապատասխան բաժիններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
7.	Երևան համայնքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ	Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» հ. 254-Ն որոշման համաձայն համապատասխան թիրախային խմբերին Երևան համայնքում սոցիալական աջակցության տրամադրում:	Միջազգային, հասարակական և այլ կազմակերպություններ, վարչական շրջանների համապատասխան բաժիններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
8.	Հանրակրթական դպրոցներում երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	Ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական դպրոցներում երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված թեմատիկ զրույցների անցկացման նպատակով մասնագետների ներգրավում, ինտերակտիվ բնույթի ներկայացումների կազմակերպում:	Հանրակրթական դպրոցներ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
9.	Մշակութային և կրթական միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար	Երեխաների այցելություններ մշակութային և ուսուցողական վայրեր, թանգարաններ, իրազեկվածության բարձրացում, գիտելիքների ձեռքբերում, ինչպես նաև նվերների տրամադրում՝ երեխաների նախասիրություններին համապատասխան:	Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինների, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան վարչություններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
10.	Երևան համայնքի երեխայի պաշտպանության համակարգի մասնագետների, այդ թվում՝ խնամակալության	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության, վարչական շրջանների համանուն բաժինների մասնագետների, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների շարունակական վերապատրաստումներ՝ մասնագիտական գիտելիքները զարգացնելու,	Հասարակական և միջազգային կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)

	և հոգաբարձության հանձնաժողովների անդամների վերապատրաստում	կարողություններ և հմտություններ ձևավորելու, երեխաների պաշտպանության համակարգի փոխգործակցությունն ապահովելու, համատեղ գործառույթներն իրականացնելու, ինչպես նաև ոլորտային օրենսդրության իմացության բարձրացման նպատակով:		
11.	Խնամատարության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների խնամքի կազմակերպում ընտանեկան միջավայրում, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն աջակցում, խնամատար ընտանիքների թվի ավելացում: Արձակուրդային և ճգնաժամային խնամատար ընտանիքների թվի ավելացման նպատակով հասարակության լայն շրջանակներում իրազեկվածության բարձրացում:	Հասարակական և միջազգային կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում (շարունակական)
12.	Երեխային լսելու սենյակների ստեղծում Երևան քաղաքի վարչական շրջաններում	ՀՀ ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն երեխան իրավունք ունի իր իրավունքներն ու շահերը շոշափող ցանկացած հարց լուծելիս ունկնդիր լինելու հարցի քննությանը և արտահայտելու սեփական կարծիքը ընտանիքում, դատարանում և այլ մարմիններում: Վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինների և խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործառույթների շրջանակներում երեխային, առանց լրացուցիչ սթրեսի ենթարկելու, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառույթների շրջանակներում երեխաներին լսելու, ըստ անհրաժեշտության նաև ծնողին (օրինական ներկայացուցչին) խորհրդատվություն տրամադրելու համար հատուկ կահավորված սենյակների աստիճանաբար ստեղծում, երեխայի լսված լինելու իրավունքի իրացման աջակցում:	Երևան քաղաքի վարչական շրջաններ	2024-2026թթ. (ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2024 թվականին հետազոտության իրականացման և 2 վարչական շրջաններում սենյակների ստեղծմամբ, ինչպես նաև շարունակել 2025 թվականին՝ 5 սենյակ և 2026 թվականին՝ 5 սենյակ)

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի տվյալով 2023 թվականի հունվարից-սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում Հայաստան է այցելել շուրջ 1,8 մլն զբոսաշրջիկ:

Երևանը հանդիսանում է ՀՀ հիմնական դարպասը: Երևանում է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը: ՀՀ այցելող զբոսաշրջիկների ճնշող մեծամասնությունը ժամանում է անմիջապես Երևան, կամ իր այցի որոշ ժամանակահատվածն անցկացնում է Երևանում:

ՀՀ վիճակագրական կոմիտեի 2022թ. տվյալներով Երևանում գրանցված են 594 հյուրանոցային ծառայություններ մատուցող կազմակերպություններ, առկա է ընդհանուր առմամբ 5041 կացության համարներ:

Ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի տրամադրած տվյալների՝ Երևանից և դեպի Երևան 2023թ. ուղիղ թռիչքներ են իրականացվել և իրականացվում միջինում 68 քաղաքներ (կանոնավոր և ոչ կանոնավոր թռիչքներ)՝ 44 ավիաընկերությունների կողմից:

Երևան քաղաքի 12 վարչական շրջանների տրամադրած տվյալների համաձայն, 2023 թվականի դրությամբ Երևանում գործում են 1330 ռեստորաններ, սրճարաններ և արագ սննդի կետեր, 13 ժամանցի կենտրոններ, 19 խոշոր առևտրի կենտրոններ:

Երևանում են գտնվում Մատենադարանը, Հայաստանի պատմության թանգարանը, Հայաստանի ազգային պատկերասրահը, Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Երևանի պատմության թանգարանը, մի շարք պետական և մասնավոր այլ թանգարաններ և պատկերասրահներ:

Վերջին տարիներին Երևանում բացի պատմամշակութային զբոսաշրջությունից, ակտիվորեն զարգանում են զբոսաշրջային այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են գաստրոզբոսաշրջությունը, բժշկական զբոսաշրջությունը, իրադարձային զբոսաշրջությունը:

Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման և զբոսաշրջային նոր պրոդուկտների մշակման միջոցով առաջիկայում նախատեսվում է ավելացնել զբոսաշրջիկների հոսքը:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքային ենթակառուցվածքների զարգացում, նավիգացիոն համակարգերի բացակայություն, հուշարձանների և տեսարժան վայրերի մասին օտարալեզու տեղեկատվության բացակայություն,
2. Հյուրանոցային տնտեսությունների սակավություն,
3. Քաղաքային տրանսպորտի՝ զբոսաշրջիկների համար հասանելի չլինելու խնդիր (օտար լեզուներով երթուղիների մասին տեղեկատվություն, կանգառների անունների բացակայություն),
4. Զբոսաշրջության զարգացման ռազմավարության բացակայություն, ոչ բավարար ներկայացվածություն միջազգային ցուցահանդեսներում,
5. Ինքնակազմակերպվող զբոսաշրջիկների համար պայմանների ստեղծում, ֆիքսված արժեքով զբոսաշրջային ծառայությունների սակավություն,
6. Զբոսաշրջիկների համար առկա տուրիստական հետաքրքրությունների՝ մեկ համակարգով ներկայացում,
7. Զբոսաշրջության դիվերսիֆիկացում Երևանի վարչական շրջանների միջև,

8. Փառատոնների, քաղաքային միջոցառումների խիստ տեղական համատեքստ:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Զբոսաշրջության ոլորտում համայնքային ռեսուրսների ավելացում	Մունիցիպալ կամ զբոսաշրջային հարկը կիրառվում է աշխարհի տարբեր քաղաքներում: Այսպիսի հարկատեսակը կիրառվում է հիմնականում ֆիքսված վճարով՝ ըստ հյուրանոցի կատեգորիայի: Հարկի կիրառումը հնարավորություն է տալիս համայնքին ավելացնել զբոսաշրջության ոլորտին անհրաժեշտ ռեսուրսները, համապատասխանաբար բարելավել ոլորտը և հոգալ զբոսաշրջիկների կարիքները:	ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտե, ԵՄ հայաստանյան գրասենյակ, միջազգային այլ կառույցներ	Աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին
2.	ՀՀ ժամանող զբոսաշրջիկներին հանրապետությանն ու մայրաքաղաքին առնչվող տեղեկատվության տրամադրում, աջակցություն	ՀՀ ժամանող զբոսաշրջիկների ճնշող մեծամասնությունը գալիս են Զվարթնոց օդանավակայանով, ուստի Զվարթնոց օդանավակայանում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոն հիմնելը հնարավորություն կստեղծի զբոսաշրջիկների համար տեղեկատվություն ստանալ տրանսպորտի, ենթակառուցվածքների, մշակութային այցելավայրերի, կազմակերպվող միջոցառումների և բազմաթիվ այլ հարցերի շուրջ:	ՀՀ ԷՆ Զբոսաշրջության կոմիտե	Աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին
3.	Քաղաքային hop-on-hop-off երթուղու ներդրում, մայրաքաղաքում զբոսաշրջության դիվերսիֆիկացում, 8 լեզուներով քաղաքային տուր ունենալու հնարավորություն, զբոսաշրջիկների համար Երևանում ինքնուրույն տուր նախագծելու հնարավորություն, ինչպես նաև եկամուտների գեներացում	Hop-on-hop-off գաղափարն իրենից ներկայացնում է քաղաքային տուրեր երկհարկանի ավտոբուսներով, որոնք ունեն տարբեր ուղղություններ, 10 և ավելի կանգառներ քաղաքի տեսարժան վայրերում: Ավտոբուսները կանգառ են կատարում, զբոսաշրջիկներն իջնում են ավտոբուսից, տվյալ ավտոբուսը շարունակում է երթուղին, իսկ զբոսաշրջիկները կարող են շարունակել երթուղին արդեն հաջորդ ավտոբուսով, որը ժամանում է կես ժամը մեկ: Ավտոբուսները սկսում են աշխատանքն առավոտյան և անընդմեջ աշխատում մինչև երեկո: Զբոսաշրջիկները տոմսերը ձեռք են բերում առցանց՝ կայքից, գործընկեր վաճառք իրականացնող կայքերից, կամ գնում են տոմսերն ավտոբուսի ցանցային վաճառակետերում: Կա վաճառք նաև ավտոբուսի վրա: Առցանց վաճառքի դեպքում տոմսերը տրամադրվում են վաուչերի տեսքով, որի վրա կա QR կոդ, որը սկանավորելով, տուրի գիդը ստուգում է տոմսերը: Վաճառակետերից ձեռք բերելու դեպքում տոմս տպող մեքենան տալիս է թղթային տոմս, որը կրկին ունի QR կոդ՝ սկանավորման համար: Առկա են 24-ժամյա, 48-ժամյա տոմսեր, որոնք, համապատասխանաբար, կարող են օգտագործվել մեկ կամ երկու օրվա ընթացքում: Տուրը ներկայացնում է աուդիոգիդը՝ 8 լեզուներով: Տուրի երկու երթուղիները միասին հնարավորություն կտան զբոսաշրջիկներին ծանոթանալ Երևանի գրեթե 70 տոկոսին:	Աշխարհի տարբեր քաղաքներում տուրն իրականացնող միջազգային օպերատոր	Աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին
4.	Զբոսաշրջության	Նախատեսվում է հուշագրերի կնքում զբոսաշրջային ֆակուլտետներ	ՀՀ ԲՈՒՀ-եր	Աշխատանքները

	ոլորտում կրթություն ստացողների ներգրավում ոլորտի աշխատանքներում	ունեցող տարբեր ԲՈՒՀ-երի հետ՝ զբոսաշրջությունը՝ որպես մասնագիտություն ընտրած ուսանողներին մայրաքաղաքի զբոսաշրջության զարգացման ծրագրերում ներգրավելու համար: Երևանի քաղաքապետարանը ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով կդիմի նաև այլ երկրների հայ համայնքների այն ներկայացուցիչներին, որոնք կրթություն են ստանում զբոսաշրջության ոլորտում, իրենց ուսումնական պրակտիկան Երևանում անցկացնելու, գիտական թեզերում Երևանին անդրադառնալու առաջարկությամբ:		կմեկնարկեն 2024 թվականին
5.	Իրադարձային զբոսաշրջության զարգացում	Առաջիկա տարիներին նախատեսվում է զարգացնել Երևանի իրադարձային զբոսաշրջությունը: 2024 թ. Երևանում կհայտարարվի փառատոների լավագույն գաղափարների մրցույթ: Հաղթող գաղափարների իրագործելիությունը, անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը կգնահատվի, այնուհետև կհայտարարվի մրցույթ գաղափարը իրականացնելու համար:	Մասնավոր հատված, ՀՀ Զբոսաշրջության Կոմիտե	Աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին
6.	Երևան քաղաքի զբոսաշրջության դիվերսիֆիկացում, տարբեր թիրախային խմբերի համար հետաքրքրությունների ստեղծում	Երևան քաղաքը զբոսաշրջիկներին հայտնի է միայն որոշակի ուղղություններով՝ գաստրոզբոսաշրջություն և պատմամշակութային զբոսաշրջություն: Սակայն քաղաքի զբոսաշրջային պոտենցիալը շատ ավելի մեծ է: Երևանն ունի 594 հյուրանոցային ծառայություն մատուցող կազմակերպություններ, որոնցից շատերը, այդ թվում միջազգային ապրանքանիշի ցանցային հյուրանոցները, հարմարեցված են ֆորումներ, գիտաժողովներ, անցկացնելու համար: Կան նաև միջազգային ցուցահանդեսներ, էքսպոներ կազմակերպելուն հարմար սրահներ և կենտրոններ: Մյուս կողմից, Երևանում ամեն տարի կազմակերպվում են մշակութային խոշոր իրադարձություններ, համաշխարհային արտիստների համերգներ, փառատոներ: Այս ամենը հնարավորություն է ստեղծում զարգացնելու Երևանի իրադարձային զբոսաշրջությունը ((MICE tourism): Փոքր չէ նաև բժշկական զբոսաշրջության, էքստրիմ զբոսաշրջության պոտենցիալը: Երևանում բարձր է նաև կոսմետոլոգիական ծառայությունների (Spa and Wellness) որակը և բազմաթիվ զբոսաշրջիկներ Երևանում օգտվում են այսպիսի ծառայություններից: Երևանն ունի երեխաների համար ժամանցային զբոսաշրջության ներուժ: Մանկական ժամանցի «Երևան Պարկ» կենտրոնը մանկահասակ զբոսաշրջիկների սիրելի վայրերից մեկն է Երևանում: Առկա են նաև այլ զբոսայգիներ և մանկական ժամանցի վայրեր, ամառային սեզոնին նաև՝ «Ջրաշխարհ» համալիրը: Սրանք զբոսաշրջային ուղղություններ են, որոնք զարգանալու պոտենցիալ ունեն: 2024 թվականին կմեկնարկեն սոցիալական	Մասնավոր հատվածի շահագրգիռ տնտեսվարողներ	Աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին

		մեդիայում Երևանի զբոսաշրջային վերոնշյալ ուղղությունների հանրահռչակման աշխատանքները: Տարբեր թիրախային շուկաներում կներկայացվի Երևանի զբոսաշրջային ներուժը:		
7.	Երևանում զբոսաշրջության ոլորտում կայուն զարգացում	Զբոսաշրջության ոլորտում կայուն զարգացումն իրենից ենթադրում է զբոսաշրջության զարգացման դրական ազդեցության բարձրացում բացասական ազդեցության նվազմանը զուգահեռ: Օրինակ, կայուն զարգացման շրջանակներում նախատեսվում է հյուրանոցային, ռեստորանային տնտեսությունների շրջանակներում խթանել միջազգային էկո պիտակների ձեռքբերում՝ չափանիշներին համապատասխան: Քննարկվում է նաև քաղաքային էկո պիտակի մշակման գաղափարը: Երևան քաղաքում արևային էներգիայի կայաններով գործում են ընդամենը 8 հյուրանոցներ: Կարևոր է խթանել տնտեսվարողներին՝ արևային էներգիայի համակարգերի տեղադրմանն անցում կատարելու հարցում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև հյուրանոցների հետ քննարկել և ներդնել թափոնների կառավարման համակարգ:	Միջազգային դոնոր կազմակերպություն-ներ	Աշխատանքները կմեկնարկեն 2024 թվականին

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարում

Երևանում առկա է 5083 բազմաբնակարան շենք, որից 4564-ի կառավարումն իրականացվում է 268 համատիրությունների կողմից, 151-ը՝ լիազորագրային կառավարիչների, 2-ը՝ հավատարմագրային կառավարչի, 366-ը՝ վարչական շրջանների ղեկավարների:

Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի թվով 4770 վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից: 2019թ. սկսած փոխարինվել է թվով 1317 վերելակ:

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերեսը կազմում է 1312990 քմ, որից՝ 2019թ. սկսած վերանորոգվել է 401750.8 քմ, իսկ բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերեսը՝ 2372238 քմ, որից՝ 2019թ. սկսած վերանորոգվել է 262014.84 քմ:

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերն ունեն 13157 մուտքեր, որից՝ 2019թ. սկսած վերանորոգվել է 3263 մուտք:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634 քմ: Մայրաքաղաքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1000-1300տ աղբ: Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում են «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» հիմնարկի կողմից:

Նուբարաշենի քաղաքային աղբավայրը գործարկվել է 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա՝ զբաղեցնելով շուրջ 52,3 հա տարածք: Մայրաքաղաքի տարածքից Նուբարաշենի խճուղի 4 հասցեին հարակից աղբատեղի է տեղափոխվում տարեկան միջին հաշվով 290-320 հազ. տոննա կենցաղային աղբ: Այն ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել որևէ ընդունված ստանդարտով որպես աղբավայր, չի համապատասխանում միջազգային (կամ որևէ) տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և բացառապես հանդիսանում է որպես աղբի կուտակման վայր: Աղբավայրում առկա չէ հիմքի մեկուսացում և չի կատարվում առաջացող մեթան գազի հավաքում: Աղբավայրը չունի ժամանակակից պահանջները բավարարող հոսքաջրերի հավաքման որևէ տեխնիկական համակարգ, որի պատճառով հոսքաջրերը հոսում են առկա աղբավայրից դուրս՝ առանց որևէ պաշտպանիչ արգելքների: Աղբավայրը չունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ հավաքվող աղբն ընդունելու համար: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում ու խառնվում են (հիմնականում առանց տոփանման) թափոնների հավաքագրման առաջնային գծում: Աղբավայրը ցանկապատված և առանձնացված չէ: Նվազագույն ընդունելի շահագործում իրականացնելու համար աղբավայրն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ և որակի մեքենամեխանիզմներով:

Քաղաքային աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումը, ինքնաբռնկման երևույթները կանխելու նպատակով 2009թ. Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիձու» ընկերության հետ կնքել է համաձայնագիր՝ Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի իրականացման նպատակով: Պայմանագրի համաձայն, Ծրագրի գործողության

ժամանակահատվածում, մինչև 2023 թվականը, նախատեսվում էր իրականացնել 512 հազար տոննա CO_2 գազին համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:

Վերոնշալ համաձայնագիրը, ճապոնական կողմի միջնորդությամբ, 2021 թվականին դադարեցվել է և համաձայն Երևանի քաղաքապետի 26.01.2022թ.-ի հ. 271-Ա որոշման, Նուբարաշենի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրում կենսագազի հավաքման և այրման կայանը անհատույց օգտագործման իրավունքով 2022թ-ի փետրվար ամսից տրամադրվել է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲ ընկերությանը՝ հետագա շահագործման և պահպանման նպատակով:

Կենսաապահովում

Երևան քաղաքի խմելու ջրի մատակարարումը և ջրահեռացումն իրականացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից, որն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ կառավարության՝ ի դեմս ՏԿԵ նախարարության ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ու «Վեոլիա Օ-Կոմպանի ժեներալ դեզ Օ» ընկերության միջև կնքված վարձակալության պայմանագրի համաձայն:

Մայրաքաղաքում ջուրը սպառողին բաշխվում է 418 կմ երկարությամբ մայրուղային ջրատարների, 1431 կմ երկարությամբ բաշխիչ ցանցի և 192,9 հազ. խմ տարողությամբ 20 օրվա կարգավորիչ ջրամբարներից (ՕԿՋ): Ջրահեռացումն իրականացվում է 1759 կմ երկարությամբ կոյուղագծերով, այդ թվում՝ 1433 կմ փողոցային ցանց, 326 կմ՝ միջբակային ցանց:

2023թ. Երևանի քաղաքապետարանի ծրագրերով կառուցվել են Աջափնյակ վարչական շրջանի հ. 111 դպրոցից մինչև Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհատվածի (մոտ 363 գծմ), Շենգավիթ վարչական շրջանի Բայդուկովի փողոցի (մոտ 172 գծմ) կոյուղագծերը և վերակառուցվել են Նոր Նորք վարչական շրջանի Գյուլիքևխյան փողոցի հ.29 շենքից մինչև հ.34 շենքի (մոտ 187 գծմ), Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոցի մինչև հ.75 շենքի (մոտ 103 գծմ), Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 1-ին թաղամասի հ. 27 շենքից մինչև հ.27/1 շենքի (մոտ 220 գծմ), Նոր Նորք վարչական շրջանի Նանսենի փողոցի հ.22 շենքի /Հ.100 մանկապարտեզ/ (մոտ 205 գծմ), Էրեբունի վարչական շրջանի Աթոյան անցուղի հ.7 շենքից մինչև հ.10 շենք (մոտ 230 գծմ), Ավան վարչական շրջանի Ավան-Առինջ թաղամասի 2-րդ միկրոշրջանի հ.1/13 շենքից մինչև Ավան-Առինջ թաղամասի 1-ին միկրոշրջանի հ.2/4 շենքի (մոտ 283 գծմ), Արաբկիր վարչական շրջանի Հ. Քոչարի 1-ին նրբանցքի (մոտ 435 գծմ), Շենգավիթ վարչական շրջանի Ն.Շենգավիթ 15-րդ փողոցի (մոտ 140 գծմ), Էրեբունի վարչական շրջանի Ազատամարտիկների փողոց հ87 շենքի (մոտ 95 գծմ) կոյուղագծերը և Էրեբունի վարչական շրջանի Մուշական, 6-րդ փողոցի հ.29 /հ.101 դպրոց/ ջրագիծը: Թվով 15 հասցեների ջրահեռացման և հեղեղատար համակարգերի կառուցման/վերակառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են (մոտ 4450 գծմ):

Հիմնախնդիրներ

1. Վերելակային տնտեսության արդիականացման, կառավարման օպտիմալացման և անվտանգ սպասարկման անհրաժեշտություն,
2. Բազմաբնակարան բնակելի շենքերի մաշվածության խորացում, այդ թվում՝ հարթ և թեք տանիքների, մուտքերի վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն,
3. 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ամրացման անհրաժեշտություն,
4. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ,
5. Բազմաբնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն,

6. Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների ընկալման և իրազեկվածության ցածր մակարդակ,
7. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների անբավարար մակարդակ,
8. Երևանի հանրային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման նոր մեխանիզմների անհրաժեշտություն,
9. Բնակչության շրջանում աղբի տեսակավորման և տարբերակման մշակույթի ձևավորման անհրաժեշտություն,
10. Երևանի քաղաքային նոր աղբավայրի կառուցման անհրաժեշտություն,
11. Գործող աղբավայրերի մեկուսացման անհրաժեշտություն,
12. Մայրաքաղաքում աղբի վերամշակման գործարանի կառուցման անհրաժեշտություն,
13. Չսահմանված վայրերում աղբ թափելու նկատմամբ վերահսկողության խստացման անհրաժեշտություն,
14. Չկոյուղացված հասցեներում կոյուղագծերի կառուցման անհրաժեշտություն,
15. Վթարային վիճակում գտնվող կոյուղագծերի վերակառուցում,
16. Խնդրահարույց հասցեներում նոր հեղեղատար համակարգի կառուցում,
17. Գազի, էլեկտրաէներգիայի և ջրի մատակարարման համակարգերի ֆիզիկական մաշվածության աստիճանի մեծացում, մատակարարումների խափանումների և վթարների հաճախականության ավելացում: Մատակարար ընկերությունների կողմից այդ համակարգերի վրա իրականացվելիք ներդրումների ծավալների մեծացման անհրաժեշտություն:

«Երքաղլույս» ՓԲԸ

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի 2024թ. զարգացման ծրագրի գլխավոր նպատակն է կանխորոշել քաղաքի արտաքին լուսավորության սոցիալ-տնտեսական զարգացման այն ուղղությունները, որոնք կբերեն Երևան քաղաքի հետագա զարգացմանը, մայրաքաղաքի բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովմանը, օրվա մութ ժամերին անվտանգ տեղաշարժման ապահովմանը, արձանագրվող ճանապարհատրանսպորտային պատահարների կրճատմանը:

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցը կառուցվել և շահագործման է հանձնվել 1950-ական թվականներին: Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո, էներգետիկ ճգնաժամի տարիներին, արտաքին լուսավորության ցանցը դադարեց գործել, 2000թ. լուսավորված էին Երևանի կենտրոնի մի քանի փողոցներ և միայն 2003 թ. հետո սկսեցին իրականացնել արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքներ: Տարեցտարի իրականացվող վերականգնողական աշխատանքների հետևանքով շահագործվող լուսավորության ցանցի երկարությունը սկսեց ավելանալ՝ 2013թ. կազմել է 1337 կմ-1387 օբյեկտ, իսկ 2019թ. 1660 կմ-2567 օբյեկտ, 2020թ. 1678.3 կմ-2628 օբյեկտ, 2021թ. 1691.34 կմ-2665 օբյեկտ, 2022թ. 1704 կմ-2687 օբյեկտ, 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1755.03 կմ-2778 օբյեկտ:

Ներկայումս արտաքին լուսավորության ցանցի լուսատուների գերակշիռ մասը բարձր ճնշման նատրիումական լուսատուներն են, իսկ արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուների տեսակարար կշիռը մեծ չէ:

Վերջին տարիների ընթացքում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված ֆինանսական միջոցների հաշվին կառուցվել է արտաքին լուսավորության ցանց, սակայն դեռևս

առկա են չլուսավորված օբյեկտներ՝ փողոցներ, փողոցների հատվածներ, նրբանցքներ և բակային տարածքներ, որոնք ևս անհրաժեշտ է լուսավորել:

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցում իրականացվող արդիականացման աշխատանքներն ընթացքի մեջ են: ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Աջակցություն Հայաստանի համայնքներին կլիմայական «խելացի» լուծումների ներդրման և իրականացման հարցում» ծրագրի շրջանակներում գործող նատրիումական լուսատուները փոխարինվում են ավելի արդիական, էներգախնայող ԼԵԴ լուսատուներով, որոնք ապահովում են ավելի լավ լուսավորություն և նպաստում են ֆինանսական միջոցների խնայողությանը, որը հետագայում ուղղվելու է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների ֆինանսավորմանը: Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանման գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող՝ «Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ևս նախատեսվում է Երևան քաղաքի 28 փողոցներում գործող նատրիումական լուսատուները փոխարինել ավելի արդիական, էներգախնայող ԼԵԴ լուսատուներով:

2020թ. սկսած «Երքաղլույս» ՓԲԸ-ն ևս իր ֆինանսական միջոցների հաշվին սկսել է Երևան քաղաքի այգիների, բակերի, անցումների հին գործող նատրիումային լուսատուները փոխարինել նոր արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուներով, ինչի արդյունքում Ընկերությունը կունենա էլեկտրաէներգիայի զգալի խնայողություն և արտաքին լուսավորությունը կլինի ավելի արդյունավետ:

Արդիականացման արդյունքում ակնկալվում է ջերմոցային գազերի արտանետումների զգալի կրճատում:

«Երքաղլույս» ՓԲԸ-ի հիմնական նպատակն է Երևան քաղաքի արտաքին լուսավորությունը համապատասխանացնել ՀՀ մայրաքաղաքին հարիր պահանջներին:

Համապատասխան ֆինանսավորման պարագայում, հնարավոր է մինչև 2025թ. ավարտն ամբողջությամբ արդիականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցը՝ ցանցում առկա բոլոր բարձր ճնշման նատրիումական լուսատուները փոխարինելով ավելի արդիական և էներգախնայող լուսատուներով:

Այդ ուղղությունների կանխորոշման նպատակով կատարվում է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի մակարդակի վերլուծություն, որի եզրահանգումները հիմք են հանդիսանում 2024թ. գերակայությունների, ռազմավարական ուղղությունների սահմանման համար:

Հիմնախնդիրներ

1. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների առկայություն,
2. Գործող հին նատրիումային լուսատուների առկայություն,
3. Մալուխային ցանցի փոխարինման անհրաժեշտություն,
4. Կոռոզիայի ենթարկված հենասյուների փոխարինման անհրաժեշտություն,
5. Դիսպետչերական ծառայության ավտոմատացման, ինտելեկտուալ համակարգի և կառավարման համակարգի ներդրման անհրաժեշտություն,
6. Միջին օրական ռեժիմի ավելացման անհրաժեշտություն (մինչև լուսաբաց),
7. Նոր տրանսպորտա–տեխնիկական միջոցների, սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրման անհրաժեշտություն:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինում	Վերելակային տնտեսության արդիականացում Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի հին վերելակների փոխարինում նորերով՝ հարմարեցված նաև լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող բնակիչներին (600 վերելակ):	ՆԳՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ	2024 թվականի ապրիլ-դեկտեմբեր
2.	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում: Ծրագրով նախատեսվում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ և թեք տանիքների հիմնանորոգում ցինկապատ պրոֆիլավորված հարթ թիթեղներով և այլ անհրաժեշտ նյութերի օգտագործմամբ:	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ	2024 թվականի ապրիլ-դեկտեմբեր
3.	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում	Ծրագրի նպատակն է ապահովել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերը պատշաճ վերանորոգված մուտքերով: Կիրականացվի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, պատուհանների և դռների փոխարինում:	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ	2024 թվականի ապրիլ-դեկտեմբեր
4.	Քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր	Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի առկա աղբավայրին հարակից տարածքում կառուցել նոր աղբավայր, ինչպես նաև փակել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը:		Ծրագիրը կմեկնարկի 2024 թվականին
5.	Սանիտարական մաքրում և աղբահանություն	Շարունակաբար բարելավվելու են սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման աշխատանքները: Հսկողություն է իրականացվելու փողոցների, մայթերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև մայրաքաղաքում աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ:		2024 թվականի ընթացքում
6.	Երևան քաղաքի ջրագծերի, կոյուղագծերի և հեղեղատար համակարգերի կառուցում/ վերակառուցում	Նախատեսվում է իրականացնել ինժեներական ենթակառուցվածքի (ջրագծերի, կոյուղագծերի և հեղեղատար համակարգերի) կառուցում/վերակառուցում:	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ	2024 թվականի ապրիլ-դեկտեմբեր
«Երքաղլույս» ՓԲԸ				

1.	Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի ընթացիկ շահագործման, պահպանման և արդիականացման ծրագիր	Ծրագրի նպատակն է հին գործող նատրիումային լուսատուները փոխարինել նոր, արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուներով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները. 1) հավելյալ ֆինանսական միջոցների հատկացման պարագայում, չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների, խաղահրապարակների լուսավորում, 2) արտաքին լուսավորության ցանցում առկա նատրիումային լուսատուների փոխարինում նոր, արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուներով, 3) այրված լամպերի և հարակից սարքավորումների փոխարինում, 4) մալուխային ցանցի ընթացիկ փոխարինում, 5) կոռոզիայի ենթարկված հենասյուների ընթացիկ վերանորոգում և փոխարինում, 6) դիսպետչերական ծառայությունում կառավարման համակարգի փորձարկում և ներդրում:	ՀՀ կառավարություն	2024 թվականի ընթացքում
2.	ՄԱԶԾ-ի հետ համատեղ իրականացվող Աջակցություն Հայաստանի համայնքներին կլիմայական «խելացի» լուծումների ներդրման և իրականացման ծրագիր	ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Աջակցություն Հայաստանի համայնքներին կլիմայական «խելացի» լուծումների ներդրման և իրականացման հարցում» ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ՝ հին գործող նատրիումային լուսատուները փոխարինել նոր, արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուներով:	ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակ	2024 թվականի ընթացքում
3.	«Երևանի քաղաքային լուսավորություն» ծրագիր, Երևան քաղաքի 28 փողոցների արդիականացում	«Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. 1) առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, 2) փոխել, ամրացնել լուսավորության հենասյուները, 3) փոխել լուսավորության հենասյուների բարձակները, 4) տեղադրել ստորգետնյա պլաստիկ խողովակաշարեր,	ՀՀ կառավարություն, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդ	2024 թվականի ընթացքում

		5) տեղադրել լուսավորության համակարգի նոր մալուխներ ստորգետնյա հաղորդուղիներում, 6) ներդնել 28 փողոցների լուսավորության ցանցի կառավարման համակարգ:		

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական կրթության ոլորտ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 152 դպրոց, որից 141-ը հիմնական, 12-ը միջնակարգ, որից մեկը՝ կրթահամալիր: 2023-2024 ուսումնական տարվա մեկնարկին ընդհանուր առմամբ աշակերտների թիվը կազմել է 106068:

«Հանրակրթության մասին» օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ կատարվել կամ շարունակում են կատարվել փոփոխություններ հանրակրթության ոլորտին առնչվող իրավական ակտերում՝ ըստ այդմ հիմնարար փոփոխություններ բերելով, ինչպես դպրոցների կառավարման ոլորտում, այնպես էլ կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջներում: Մեծածավալ այս փոփոխությունների գործնական կիրառություն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ոչ միայն տեղայնացնել նշյալ իրավական ակտերը, այլ նաև տրամադրել մասնագիտական խորհրդատվություն՝ համագործակցելով ՀՀ ԿԳՄՍ նախարարության, վերջինիս ենթակայությամբ գործող կառույցների (ԿԶՆԱԿ, ԿՏԱԿ, ՀՄԿ), Կրթության պետական տեսչական մարմնի, ինչպես նաև ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների, փորձագետների հետ: Արդիական է նաև դպրոցներին աջակցություն տրամադրելը Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման շրջանակում, որը ՀՀ բոլոր դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում կիրառվում է 2023-2024 ուսումնական տարվանից՝ աստիճանական ներդրման սկզբունքով: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար կազմակերպել խորհրդատվական հանդիպումներ, աջակցել մասնագիտական աճին նպաստող դասընթացների իրականացմանը, կազմակերպել դպրոցների տնօրենությունների կառավարման հմտությունների զարգացմանը միտված դասընթացներ:

Ներառական կրթության համատեքստում շարունակում է արդիական մնալ ինչպես ֆիզիկական միջավայրի բարելավման անհրաժեշտությունը՝ հարմարեցումների ապահովմամբ, այնպես էլ ներառող դասավանդման հմտությունների զարգացման (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառմամբ) կարևորությունը ուսուցիչների շրջանում: Հարկ է նշել, որ այդ առումով ծառացած մարտահրավերներից խիստ արդիական են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների երեխաների կրթության իրավունքի իրացման ու սահուն ինտեգրման ապահովմանը միտված միջոցառումները:

Հիմք ընդունելով հանրակրթության՝ սովորողներին ազգային և համամարդկային արժեքներին հաղորդ դարձնելու առաջնայնության սկզբունքը՝ առանցքային նշանակություն ունի մեծանուն մտավորականների հոբելյաններին, մայրենիի, գրքի տոներին, մերօրյա հերոսներին նվիրված, ֆրանկոֆոնիայի շրջանակում և այլաբնույթ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև վերջիններիս խրախուսումը վարչության կողմից: Այս առումով կարևորվում են նաև արտակարգ օժտվածությամբ դպրոցականներին և նրանց ուսուցիչներին հայտնաբերելուն ու խրախուսելուն միտված աշխատանքները, որոնց շրջանակում կարելի է դիտարկել դպրոցականների առարկայական օլիմպիադայի, տարբեր խրախուսական միջոցառումների անցկացումը: Հարկ է նշել, որ 2022-2023 ուսումնական տարում քաղաքային փուլին փաստացի մասնակցած սովորողներից 430-ն արժանացել են դիպլոմների՝ 1-ին կարգ՝ 68 աշակերտ, 2-րդ կարգ՝ 111 աշակերտ, 3-րդ կարգ՝ 181 աշակերտ: Գովասանագրերի է արժանացել 70 աշակերտ: Սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման առաջնայնության սկզբունքի տեսանկյունից մեծ նշանակություն ունեն աշակերտների ներուժի, մասնավորաբար, աշակերտական խորհուրդների գործունեության խթանմանը միտված նախաձեռնությունները: Կարևորվում են նաև

մարդու կյանքի ու առողջության, պատասխանատվության, բնապահպանական աշխարհայացքի ձևավորման, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմանը միտված ծրագրերի իրականացումը սովորողների շրջանում:

Նախադպրոցական կրթության ոլորտ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 162 մանկապարտեզ, որտեղ նախադպրոցական կրթություն է իրականացվում շուրջ 26000 երեխայի համար: Նրանց ուսումնադաստիարակչական գործընթացին մասնակցում է 4570 աշխատակից: Երևանի մանկապարտեզների հերթագրման համար գործում է mankapartez.yerevan.am կայքը:

Երևանի ենթակայության 11 դպրոցներում գործում է 11 նախակրթարան, ուր հաճախում է շուրջ 170 երեխա:

Հիմնանորոգման ծրագրերի շրջանակում վերակառուցվում կամ հիմնանորոգվում են Երևանի ենթակայության մանկապարտեզները՝ ապահովելով նաև անհրաժեշտ հարմարեցումներ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների համար: Երևանի բյուջեի միջոցներով նախատեսվում է նոր մանկապարտեզների կառուցում:

Ծնողական համայնքի դիմումների հիմքով՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում ձևավորվում և գործում են երկարօրյա խմբեր:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններին հատկացվել են զարգացնող սեղանային խաղեր, ուսուցողական պաստառներ, Երևանի տեսարժան վայրերով ուսուցողական գրքեր: Ընթացիկ տարիներին օգտագործման արդյունքում մանկապարտեզներում բնական մաշվածությամբ գույքը պարբերաբար թարմացվում է: ՀՀ Կառավարության՝ 300 դպրոցի և 500 մանկապարտեզի կառուցման ծրագրի շրջանակում հիմնանորոգված մանկապարտեզներին տրամադրվում է կոշտ գույք և կենցաղային տեխնիկա: Անհրաժեշտություն կա թարմացնելու և կրթական ռեսուրսների կիրառելիությունն ապահովելու իմաստով հագեցնելու մանկապարտեզների համակարգչային տեխնիկան:

ՀՀ Կառավարության 13.05.2021թ. հ.744-Ն «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» որոշման համաձայն՝ այն փորձարկվել է երևանյան մի շարք մանկապարտեզներում, 2023-2024 ուսումնական տարում չափորոշչի փորձարկումն իրականացվելու է ևս 15 հաստատություններում:

Գործարկվել են նախադպրոցական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման, մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման, տարակարգի շնորհման գործընթացները:

Աղիքային վարակիչ հիվանդությունների, սննդային գործոնով պայմանավորված թունավորումների դեպքերը կանխելու և բացառելու նպատակով ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի համագործակցությամբ իրականացվել է սեմինար-իրազեկում՝ Երևանի մանկապարտեզների սննդի պատասխանատուների հետ: Մխիթար Հերացու անվան ԵՊԲՀ–ի և Հայաստանի Ամերիկյան համալսարանի հետ համագործակցությամբ իրականացվել է մսուր-մանկապարտեզների բուժքույրերի վերապատրաստում:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հետ համատեղ թվով 7 մանկապարտեզներում իրականացվել է «Անվտանգ երթևեկության կանոններ» թեմայով պիլոտային ծրագիրը: Թվով 2 մանկապարտեզներ մասնակցել են Եվրոպական միության «Կայուն էներգիայի շաբաթ» միջոցառմանը:

Հիմնախնդիրներ

1. Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման համար հանրակրթական ուսումնական հաստատությունների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների գույքի, համակարգչային տեխնիկայի նորացում, շենքային պայմանների բարելավում, համապատասխանեցում միջազգային չափանիշներին,
2. Ներառական և մատչելի ուսումնական միջավայրի ապահովում,
3. Դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրում՝ անհրաժեշտ նյութերով և համապատասխան սարքավորումներով, ինչպես նաև լաբորատորիաների (նաև՝ էլեկտրոնային) ձևավորում,
4. Պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկերի կանխարգելում, նման երեխաներին հայտնաբերում՝ ուսուցման համակարգ վերադարձնելու նպատակով,
5. Հանրակրթության պետական չափորոշչի գործարկում ուսումնական հաստատություններում,
6. Մանկավարժական հաստիքների թափուր տեղերի համալրում համապատասխան կադրերով,
7. Կրթության ոլորտի բարելավման և լավագույն փորձի փոխանակման նպատակով համագործակցություն տարբեր շահառու կազմակերպությունների հետ:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական միջավայրի բարելավում	Թվով 12 մանկապարտեզների վերանորոգում և հիմնանորոգում, գույքի նորացում, կոշտ գույքի, կենցաղային տեխնիկայի տրամադրում, հիմանորոգված բակային տարածքների բարեկարգում, խաղահրապարակների կահավորում:	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, հիմնադրամներ	2024 թվականի ընթացքում
2.	Նախադպրոցական կրթության մատչելիություն	Մեկնարկային հավասար պայմանների ապահովմամբ իրականացնել երեխաների սահուն անցումը դպրոց: Նախադպրոցական տարիքի հերթագրված երեխաների ընգրկումը նախադպրոցական ուսումնական հաստատություններ՝ այդ թվում՝ նախակրթարաններ՝ միաժամանակ ապահովելով միջավայրի անհրաժեշտ հարմարեցումներ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններ, հասարակական ոլորտում գործունեություն իրականացնող տեղական և միջազային կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
3.	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում և մանկապարտեզներում մրցունակ կրթության ապահովման աջակցություն՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ	Մրցունակ կրթության ապահովմանը միտված գործընթացների կազմակերպում. 1) դպրոցների և մանկապարտեզների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն առնչվող գիտելիքների զարգացման նպատակով խորհրդատվական հանդիպումների կազմակերպում համապատասխան մարմինների հետ՝ ԿՏԱԿ, ԿԶՆԱԿ, 2) դպրոցների միջոցներով համակարգչային կաբինետների ստեղծում, էլեկտրոնային գրատախտակների, տեխնոլոգիական այլ միջոցների ձեռքբերման ուղղորդում, 3) «Կրթական համակարգում նախնական ինժեներական կրթության ներդրում» ծրագրի շրջանակում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ներդրման շարունակականության ապահովում, 4) մեդիագրագիտության հմտությունների զարգացման նպատակով սեմինարների իրականացում, 5) արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերման և խրախուսմանն ուղղված միջոցառումների իրականացում, դպրոցական առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային փուլերի կազմակերպում և անցկացում, լավագույնների խրախուսում:	ԿԳՄՍ նախարարություն,ԿՏԱԿ, կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ներ	2024 թվականի ընթացում
4.	Դպրոցական շենքերի հիմնանորոգում	Երևանի ենթակայության հանրակրթական դպրոցների շենքային պայմանների բարելավում՝ համապատասխանեցնելով ժամանակակից կրթական պահանջներին.	ՀՀ կառավարություն, ԿԳՄՍ նախարարություն	2024 թվականի ընթացքում

		1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը Երևանի ենթակայության դպրոցների շենքերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, 2) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատվելիք ցանկի համաձայն հիմնանորոգվող և/կամ վերանորոգվող դպրոցների համակազմի տեղափոխության և հաստատությունների բնականոն գործունեության ապահովում, 3) հիմնանորոգվող և/կամ վերանորոգվող դպրոցներում իրականացվող աշխատանքների պարբերական դիտարկում:		
5.	Աջակցություն սովորողների արժեքային համակարգի և կարողունակությունների ձևավորման գործընթացին	Աջակցություն համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող կարողունակ անձի ձևավորմանը. 1) ռազմամարզական, հայրենաճանաչողական ուղղվածությամբ ծրագրերի կազմակերպում, 2) դպրոցական աշակերտական խորհուրդների ակտիվության խթանմանը միտված միջոցառումների կազմակերպում (քննարկումներ հասարակության արդի հիմնախնդիրների շուրջ՝ ապրումակցում, բուլինգ, առողջ ապրելակերպ, պատասխանատու վարքագիծ և այլն), 3) միջդպրոցական աշակերտական խորհուրդների միավորումների ստեղծում՝ միտված ՀՊՁ-ով սահմանված քաղաքացիական, սոցիալական, մշակութային, տնտեսական և այլ առանցքային կարողունակությունների զարգացմանը, 4) նշանավոր գործիչներին, տարվա հոբելյարներին նվիրված միջոցառումների, ոգեկոչման ցերեկույթների կազմակերպման խրախուսում:	ԿԳՄՍ նախարարություն, կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ներ, մշակութային օջախներ, Հայաստանի գրողների միություն	2024 թվականի ընթացքում
6.	Ուսումնական հաստատությունների անձնակազմի կարողությունների զարգացում	Աջակցություն և խրախուսում ուսումնական հաստատությունների տնօրինության, մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացմանը. 1) աջակցություն հաստատությունների վարչական և մանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացների մասնակցության ապահովման գործընթացին, 2) փորձի փոխանակման միջոցառումների կազմակերպում:	ԿԳՄՍ նախարարություն, ԿԶՆԱԿ, Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ներ, Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ	2024 թվականի ընթացքում

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում միջազգային 8 կազմակերպությունների («Քաղաքապետերը հանուն խաղաղության», «ԱՊՀ երկրների, մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային համաժողով», «Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդ», «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքների կազմակերպություն», «Ֆրանսախոս քաղաքապետերի միջազգային ասոցիացիա», «Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիա», «Սևծովյան մայրաքաղաքների ասոցիացիա», «Եվրոսիթիս» ասոցիացիա)՝ ստեղծելով պայմանագրային ծավալուն դաշտ և միաժամանակ իրականացնելով տարբեր համատեղ ծրագրեր: Երևան քաղաքը վերջին 5 տարիների ընթացքում ստորագրել է շուրջ 10 հուշագրեր և համաձայնագրեր՝ այդ թվում, նոր համագործակցություններ են կնքվել Լեյպցիգ (ԳԴՀ, 2021թ.), Ցինդաո (ՉԺՀ, 2023թ.), Թեհրան (ԻԻՀ, 2023թ.) քաղաքների հետ:

Ժամանակակից աշխարհում քաղաքների ու առավել ևս խոշոր քաղաքների դերակատարումը մեծացել է և մերօրյա հիմնախնդիրների լուծումներն ու քաղաքային տնտեսության զարգացմանը միտված գործողությունները և ներկայացվող ծրագրերը պարտադրում են պրագմատիկ աշխատանքներ իրականացնել արտաքին կապերի ոլորտում:

Հիմնախնդիրներ

1. Երևան քաղաքում ծրագրերի իրականացման նպատակով երկկողմ և բազմակողմ համագործակցության իրականացում,
2. Միջազգային համագործակցության շրջանակներում հնարավոր ռեսուրսների ներգրավման ակտիվացում Երևանի քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում,
3. Արտերկրի մայրաքաղաքների և խոշոր քաղաքների հետ համաձայնագրերի ստորագրման անհրաժեշտություն համագործակցության հստակ ուղղություններով և պայմանա-վորվածությունների ձեռքբերմամբ,
4. Երկկողմ միջազգային և տարածաշրջանային կառույցներում Երևան քաղաքի ակտիվության ապահովում՝ մայրաքաղաքային գործառույթներից ելնելով:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում	Համագործակցության համաձայնագրերի կնքում, թարմացում, առկա համաձայնագրերի շրջանակում կապերի ակտիվացում, Երևանը՝ իբրև մշակութային խոշոր կենտրոնի ներկայացում: Ծրագրի նպատակն է բարձրացնել Երևանի հանրաճանաչելիությունը, ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել գբոսաշրջության գարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է. 1) ստորագրել համագործակցության համաձայնագրեր Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ՌԴ Նիժնի Նովգորոդ, ՉԺՀ Սիչուան քաղաքների հետ, 2) ակտիվացնել համագործակցության կապերն արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում (Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (ԱՄՆ) և այլն), 3) թարմացնել համագործակցության համաձայնագրերը Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ, 4) Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում, աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը, 5) ակտիվացնել Երևանի տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի և գործընկեր քաղաքների զբոսաշրջության պատասխանատուների միջև, 6) իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր, 7) խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը, 8) տրամադրել տեղեկատվություն Երևանի գործընկեր քաղաքներին Երևանում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ:	Քույր և գործընկեր քաղաքներ	2024 թվականի ընթացքում
2.	Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի	Միջազգային համագործակցությունների շրջանակներում ծրագրերի իրականացում, մասնավորապես, ծրագրի շրջանակներում նախատեսվում է. 1) ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ հստակ ծրագրերի	Միջազգային կազմակերպություններ, նախաձեռնություններ և համագործակցության	2024 թվականի ընթացքում

	մշակում և միջոցառումների իրականացում	ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, 2) ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթնաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ, և մշակել համատեղ ծրագրեր, 3) ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին, 4) ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ, 5) իրականացնել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիի հետ համատեղ ծրագրեր, 6) իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր, 7) իրականացնել ՀՀ մարզերի հետ համատեղ ծրագրեր:	այլ հարթակներ	
3.	Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում	Քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների կարողությունների բարձրացում: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի. 1) Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխայցելություններ, 2) Երևանի քաղաքապետարանի և Լիոնի, Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն, 3) Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական իրականացում՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:	Միջազգային կազմակերպություններ, քույր և գործընկեր քաղաքներ, ինչպես նաև ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչություններ	2024 թվականի ընթացքում

ՄՇԱԿՈՒՅԹ

Հանրության սոցիալ-տնտեսական, հոգևոր և մշակութային առաջընթացի, քաղաքային կյանքի համակեցության ավանդույթների պահպանման ու շարունակական զարգացման, ինչպես նաև մարդկային կապիտալի ձևավորման հետ առնչվող գործընթացները սերտորեն կապված են հանրային կյանքում մշակույթի և արվեստի տարբեր ուղղությունների պատշաճ ներկայացվածության, մշակութային կյանքի հագեցվածության, բազմազանության, որակի, ինչպես նաև անհատների և ստեղծագործական համայնքների մշակութաստեղծ գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու՝ պետության և հասարակության ջանքերի, դրանց արդյունավետության հետ:

ՀՀ պետական մշակութային քաղաքականությանը համապատասխան՝ Երևան համայնքն իր ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպությունների միջոցով իրականացնում է մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման, մշակութային միջոցառումների իրականացման, հանրության ստեղծագործական ներուժի վերարտադրման պայմանների ապահովման և այլ գործառույթներ:

Երևանի ենթակայությամբ գործում են 70 մշակութային կազմակերպություններ, այդ թվում՝ 5 թանգարան, 3 թատրոն, 19 գրադարան, 26 երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ, 13 մանկապատանեկան ստեղծագործության, գեղագիտական զարգացման և մշակույթի տներ, 2 մանկական ֆիլհարմոնիաներ, «Երևան» փողային նվագախումբն ու «Հայ Արտ» մշակութային կենտրոնը:

Մայրաքաղաք Երևանում գործում են նաև մշակույթի ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպություններ, ստեղծագործական միություններ, բազմաթիվ հասարակական միավորումներ, ինքնազբաղ արվեստագետներ, նկարիչներ, կատարողներ, պրոդյուսերներ, որոնք իրականացնում են մշակութային արտադրանքի և ծառայությունների մատուցման հետ կապված գործունեություն՝ արվեստի և մշակույթի տարբեր ուղղություններով:

Հիմնախնդիրներ

1. Փառատոնների, ցուցահանդեսների, համերգային ծրագրերի, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանն ուղղված աշխատանքների ակտիվացման անհրաժեշտություն, ինքնազբաղ արվեստագետների գործունեության խթանման նպատակով՝ դրամաշնորհային ծրագրերի իրականացման անհրաժեշտություն,
2. Մշակութային կազմակերպություններում գույքի և շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտություն,
3. Մշակութային ծրագրերի առավել ակտիվ հանրահռչակման, մշակութային կյանքին բնակչության ինտեգրման անհրաժեշտություն,
4. Ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և կիրառման անհրաժեշտություն,
5. Երիտասարդ ստեղծագործողների ինքնադրսևորման համար նոր հարթակների ստեղծման/տրամադրման անհրաժեշտություն,
6. Գրադարանային համակարգի գործունեության օպտիմալացման, ոլորտի կողմից մատուցվող ծառայությունների բարելավման, հանրության համար գրադարանային-տեղեկատվական համակարգի հասանելիության ապահովման անհրաժեշտություն,

7. Թանգարանային նմուշների ամրակայման, վերականգնման աշխատանքների շարունակական իրականացման, ֆոնդապահոցներում և ցուցադրություններում առկա թանգարանային առարկաների անվտանգության ապահովման, թանգարանային հավաքածուների գիտական հետազոտության և ուսումնասիրության, դրանց արդյունքների ներկայացման անհրաժեշտություն,
8. Թատրոնների խաղացանկերի շարունակական համալրման անհրաժեշտություն,
9. Թատրոնների շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտություն,
10. Մշակութային կրթության ոլորտի հաստատությունների գործունեության բարելավման, արվեստի և երաժշտական դպրոցներում ուսուցման մատչելիության և հասանելիության ապահովման անհրաժեշտություն,
11. Երաժշտական և արվեստի դպրոցները համապատասխան գույքով և երաժշտական գործիքներով համալրելու անհրաժեշտություն:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտը**
1.	«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (երաժշտական և արվեստի դպրոցներ)	Ծրագրի շրջանակում կիրականացվի մշակութային նախամասնագիտական կրթության իրականացում, արտադպրոցական ուսուցում, գեղագիտական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում հետագա ուսման նախապատրաստում, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցման իրականացում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի տարբեր ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի կազմակերպում, երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում, օժտված և տաղանդավոր երեխաների և պատանիների բացահայտում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ	2024 թվականի ընթացքում
2.	«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ)	Ծրագրի շրջանակում կիրականացվի լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեություն, դպրոցահասակ երեխաների ազատ ժամանցի կազմակերպում, հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, մտավոր, հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ոչ ֆորմալ կրթության ոլորտի խթանում:	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
3.	Մշակութային միջոցառումների կազմակերպում	Երևան քաղաքի բնակչության լայն զանգվածների ընդգրկում պետական, ազգային և այլ միջոցառումներին, ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիության ապահովում, մշակութային միջավայրի պահպանում և զարգացում, հայ և համաշխարհային հոգևոր-մշակութային արժեքների վրա խարսխված մշակութային արտադրանքի ստեղծման և ծառայությունների մատուցման գործընթացի խթանում, հանրության մշակութային պահանջներին համապատասխան մշակութային միջոցառումների մշակում և իրականացում: Երևան քաղաքում պետական, ազգային տոների, մասնագիտական տոների, հիշատակի օրերի (Ամանոր, Մայրության և գեղեցկության տոն, Թատրոնի համաշխարհային օր, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Ջազի միջազգային	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում

		օր, Պարի միջազգային օր, Թանգարանների միջազգային օր, Եվրոպական ժառանգության օր, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, Գրադարանավարի օր, հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան և հոբելյանական տարեթվերին, «Էրեբունի Երևան» տոնակատարություն), ինչպես նաև Երևան քաղաքի մշակութային միջավայրի պահպանման, զարգացման, հանրահռչակման, երեխաների և պատանիների գեղարվեստական զարգացման, գեղագիտական դաստիարակության, երիտասարդության և տարբեր տարիքային խմբերի մշակութային ժամանցի կազմակերպման տարատեսակ ծրագրերի և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և իրականացում:		
4.	Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագիր	Նախնական մասնագիտական կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և երաժշտական գործիքներով ապահովում:		2024թ. հուլիս-դեկտեմբեր
5.	Արտադպրոցական դաստիարակություն երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում	Ծրագիրը գործում է 2007 թվականից, որի արդյունքում նշված դպրոցներում բացվել են ազգային նվագարանների նոր դասարաններ՝ խթանելով ազգային գործիքների պահպանումը, զարգացումը և տարածումը, ինչպես նաև ծրագրի արդյունքում կարևորվում է դասական երաժշտական՝ լարային և փողային գործիքների պրոպագանդումը: Ծրագրի շահառու է հանդիսանում Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցների թվով 277 սովորողներ:	ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ ֆինանսների նախարարություններ	2024 թվականի ընթացքում
6.	Գրադարանային ծառայություն	Բնակչության գրադարանային տեղեկատվության տրամադրում և սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի օժանդակում, համաշխարհային և հայ գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:	ՀՀ ԿԳՄՍ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում

7.	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	Երևանի պատմամշակութային ժառանգությունը, հայկական կենցաղն ու մշակույթը, անցյալի և ներկայի արվեստի ստեղծագործությունները, ականավոր գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցադրությունների կազմակերպում, բնագավառին առնչվող գիտական, կրթական գործունեության իրականացում, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդերի համալրում, թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությունների իրականացում, նոր ցուցադրությունների կազմակերպում՝ ընդգրկելով պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված այլ միջոցառումներ և ցուցադրություններ:	ՀՀ ԿԳՄՍ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
8.	Թատերական ներկայացումներ	Բնակչությանն ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, թատրոնների խաղացանկերի համալրում՝ յուրաքանչյուր թատերաշրջանի ընթացքում 10 նոր և վերականգնված ներկայացմամբ, ստեղծագործական կազմերի համալրում, ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, ներկայացումների որակի բարձրացում, համապատասխան բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինման աշխատանքների իրականացում, մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոններին:	ՀՀ ԿԳՄՍ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
9.	Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում	Նախատեսվում է համերգային ծրագրերի կազմակերպում, օժտված երեխաների ստեղծագործական, կատարողական ձեռքբերումների, դեբյուտային ստեղծագործական աշխատանքների ներկայացում, միջոցառումների և մրցույթների, այդ թվում՝ համաքաղաքային, հանրապետական, միջազգային մրցույթների, փառատոնների կազմակերպում և միջազգային մրցույթներին, փառատոններին մասնակցության ապահովում:	ՀՀ ԿԳՄՍ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Վիճակի նկարագրություն		
Ցուցանիշներ	Ք. Երևան	
	Չափի միավոր	2023
Փողոցների քանակ	միավոր	1100
Փողոցների երկարություն	կմ	955
Փողոցների և հրապարակների ընդհանուր մակերես	քմ	15.343
Վերգետնյա անցումներ	հատ	30
Ստորգետնյա անցումներ	հատ	41
Հուշարձաններ	հատ	404

Մայրաքաղաքն առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում բակային տարածքներում: Իրականացվում են մայթերի ընթացիկ նորոգման (սալիկապատման) և հիմնանորոգման աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ տարեկան մայրաքաղաք են ներմուծվում մեծ քանակությամբ ավտոմեքենաներ և փողոցներում երթևեկում են ծանր տրանսպորտային միջոցներ, որից մաշվում և քայքայվում է փողոցների ասֆալտ-բետոնե ծածկը, յուրաքանչյուր տարի անհրաժեշտություն է առաջանում իրականացնել փողոցների ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցել նոր փողոցներ, անցուղիներ և տրանսպորտային հանգույցներ: Որպես մայրաքաղաքի այցեքարտ՝ կարևորվում են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը, շենքերի ճակատային հատվածների պատշաճ վիճակը, որի ապահովման համար կատարվում են կամուրջների պահպանման, ընթացիկ նորոգման, շենքերի ճակատային պատերի նորոգման, լվացման և վթարային շքապատշգամբերի վերանորոգման աշխատանքներ:

Գերակա խնդիր է հանդիսանում նաև մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը, որի նպատակով անհրաժեշտ է մեծացնել նոր հանգստի գոտիների, այգիների և պուրակների ստեղծման, բակային տարածքների և խաղահրապարակների կահավորման աշխատանքների ծավալները:

Ոլորտի գերակայություններից է կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատություններում վերանորոգման կամ հիմնանորոգման էներգախնայողության ապահովման աշխատանքների իրականացումը:

Մայրաքաղաքում բնակիչների և հյուրերի անվտանգ և հարմարավետ տեղաշարժն ապահովելու նպատակով ըստ անհրաժեշտության կառուցվում են հետիոտնային անցումներ, վերանորոգվում և շահագործման բարենպաստ պայմաններ են ստեղծվում առկա անցումներում: Նոր անցումների ստեղծման վայրերն ընտրվում են ուսումնասիրության և մասնագիտական քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով նաև քաղաքացիների առաջարկները:

Վերգետնյա և ստորգետնյա անցումներից մեծ մասը բավարար վիճակում են, մի շարք գետնանցումներում, որտեղ անհրաժեշտ են վերանորոգման աշխատանքներ, քաղաքապետարանի ծրագրերով կատարվում են երեսապատման, աստիճանների նորոգման, հարդարման, ջրամեկուսացման, ջրահեռացման և լուսավորության աշխատանքներ: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում նաև անցումներում գործող վարձակալող սուբյեկտների կողմից:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է ՀՀ կառավարության 20.04.2002թ. հ.438 որոշման համաձայն Երևանի սեփականություն հանդիսացող 404 հուշարձանների պահպանումը, սպասարկումն ու պատվանդանների նորոգման աշխատանքները: Երևանի քաղաքապետարանի տարեկան ծրագրերի շրջանակներում պարբերաբար կատարվում են հուշարձանների լվացման, պատվանդանների վերանորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում,
2. Երևան քաղաքի փողոցների բարեկարգում, հիմնանորոգում,
3. Հուսալի և ժամանակակից ճանապարհների կառուցում,
4. Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում
5. Մայթերի բարեկարգում,
6. Հետիոտնի առավել մեծ կուտակումներ առաջացնող խաչմերուկներում ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում,
7. Կամրջային կառույցների հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, շահագործման բարելավում,
8. Առկա հանգստի գոտիների բարեկարգում և նորերի ստեղծում,
9. Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատությունների շենքերում վերանորոգում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Փողոցների բարեկարգում	Մայրաքաղաքի փողոցների, մայրուղիների, հրապարակների, բակային տարածքների և այլ ասֆալտապատման կարիք ունեցող տարածքների ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքների իրականացում քաղաքի կայուն և համաչափ զարգացման գերակա սկզբունքի համատեքստում՝ բոլոր վարչական շրջաններում, շեշտը դնելով ծայրամասային վարչական շրջանների վրա: Կիրականացվեննաև ճաքալցման աշխատանքներ պոլիմերային և բիտումոպոլիմերային մածուցիկ նյութերով, որն էապես երկարացնում է ասֆալտ-բետոնե ծածկի ծառայության ժամկետը և հողային պաստառով (գրունտային) ճանապարհների հիմնանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ: Նախատեսվում է շարունակել մայթերի վերանորոգման և սալիկապատման աշխատանքները:		2024 թվականի ընթացքում
2.	Հանգստի գոտիների և բակային տարածքների բարեկարգում	Նախատեսվում է հանգստի գոտիների պահպանում, բարեկարգում, նորերի կառուցում, բակային տարածքների կահավորում՝ մանկական խաղերով և մարզասարքերով: Բոլոր վարչական շրջանների բակային տարածքներում կառուցել խաղահրապարակներ և մինի ֆուտբոլի դաշտեր, ապահովել դրանց շահագործման անվտանգությունը և պահպանումը:		2024 թվականի 2-րդ-4-րդ եռամսյակներ
3.	Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և մշակութային հաստատությունների շենքերում և բակային տարածքներում վերանորոգման աշխատանքներ	Ըստ անհրաժեշտության կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական հաստատությունների շենքերում ընթացիկ նորոգման, հարդարման, ջերմամեկուսացման, դռների և պատուհանների փոխարինման, տանիքների, սանհանգույցների վերանորոգման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման, լուսավորության համակարգերի վերակառուցման աշխատանքների իրականացում: Նախատեսել վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովումը, արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառումը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Եվրոպական ներդրումային բանկի, ՄԱԶԾ և E5P Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի աջակցությամբ:	ՄԱԶԾ և E5P Արևելյան Եվրոպայի էներգաարդյունա-վետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի հետ	2024 թվականի 2-րդ-4-րդ եռամսյակներ
4.	Առողջապահական հիմնարկների վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել նորոգման, ներքին հարդարման, ջերմամեկուսացման, դռների և պատուհանների, հատակների փոխարինման, տանիքների վերանորոգման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:		2024 թվականի 2-րդ-4-րդ եռամսյակներ

5.	Կամուրջների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ	Նախատեսվում է իրականացնել կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային կառուցվածքների զննում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթևեկելի մասերի և մայթերի մաքրում, նորոգում:		2024 թվականի ընթացքում
6.	Ստոգետնյա հետիոտնային անցումներ	Ավտոտրանսպորտի ծանրաբեռնված երթևեկության պայմաններում քաղաքացիների անցուդարձն անվտանգ դարձնելու նպատակով անհրաժեշտ են հետիոտնային վերգետնյա և ստորգետնյա անցումներ, որի նպատակով իրականացվում են անցումների վերանորոգման, ինչպես նաև նոր անցումների կառուցման աշխատանքներ:	Մասնավոր ներդրողների և վարձակալների հետ	2024 թվականի ընթացքում
7.	Հիդրանտների վերանորոգում և նորերի կառուցում	Շենքերի և շինությունների հակահրդեհային անվտանգության ապահովում:		2024 թվականի 2-րդ, 3-րդ եռամսյակներ
8.	Ադմինիստրատիվ շենքերի հիմնանորոգում և նորերի կառուցում	Ադմինիստրատիվ շենքերի հիմնանորոգման, նորերի կառուցման աշխատանքներ:		2024 թվականի 2-րդ, 4-րդ եռամսյակներ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևան քաղաքի հանրային տրանսպորտի համակարգը ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 11 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներհամայնքային ավտոբուսային երթուղիներում, ինչպես նաև «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի կահավորման, սպասարկման և հսկողության իրականացման աշխատանքներ:

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների, տարբեր երկրների թողարկման 977 ավտոբուսներով, որոնցից 87-ը՝ «ՄԱՆ», 249-ը՝ «ՀԻԳԵՐ» մակնիշի, 361-ը՝ «ԺՈՆԳ ԹՈՆԳ», 24-ը՝ «Բոգդան», 133-ը՝ «Հունդաի», 9-ը՝ «ՊԱԶ», 14-ը՝ «Ջիջիանգ» և 100-ը՝ «ԳԱԶԵԼ Սիթի» մակնիշի: Ավտոբուսների միջին տարիքը կազմում է մոտ 6 տարի:

Թվով 977 ավտոբուսներից 821-ը գտնվում է Երևանի ենթակայության «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվեկշռում:

Մայրաքաղաքում փաստացի գործում են 63 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է մոտ 590-610 միավոր շարժակազմ:

Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի բարեփոխումների և նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում վերջին 2-3 տարիներին ձեռք են բերվել և մայրաքաղաք ներկրվել նոր «ՄԱՆ» մակնիշի մեծ դասի թվով 87, «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի միջին դասի թվով 361 և «ԳԱԶԵԼ Սիթի» մակնիշի փոքր դասի թվով 100 ավտոբուսներ:

Սահմանված կարգով անցկացված մրցույթների արդյունքում «ՄԱՆ» մակնիշի ավտոբուսներով ներկայումս սպասարկվում է Երևանի ներհամայնքային ավտոբուսային թվով 8 երթուղիներ, «ԺՈՆԳ ԹՈՆԳ» մակնիշի ավտոբուսներով՝ 31 երթուղիներ, «ԳԱԶԵԼ Սիթի» մակնիշի ավտոբուսներով՝ թվով 11 միկրոավտոբուսային երթուղիներ:

Արդյունքում էականորեն ավելացել է ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում, զգալիորեն կանոնավորվել է ներհամայնքային ուղևորափոխադրումների գործընթացը, բարելավվել է ուղևորների սպասարկման վիճակը և որակը:

Մայրաքաղաք ներկրված նոր «ՄԱՆ», «ԺՈՆԳ ԹՈՆԳ» և «ԳԱԶԵԼ ՍԻԹԻ» մակնիշների բոլոր ավտոբուսները կահավորված են թեքահարթակներով և հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Մայրաքաղաքում փաստացի գործում է թվով 11 միկրոավտոբուսային երթուղի (օրական միջին հաշվով երթուղիներ է դուրս բերվում 60-65 միավոր շարժակազմ): Վերը նշված բոլոր 11 երթուղիները սպասարկվում են «ԳԱԶԵԼ ՍԻԹԻ» մակնիշի փոքր դասի ավտոբուսներով:

Երևանի հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում, 2023 թվականի օգոստոս ամսից, դադարեցվել է հին «ԳԱԶԵԼ» մակնիշի ավտոմեքենաներով սպասարկող բոլոր ներհամայնքային միկրոավտոբուսային երթուղիների շահագործումը: Դրանց զգալի մասը փոխարինվել են ավտոբուսային երթուղիներով:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է տարբեր մակնիշի թվով 56 տրոլեյբուս, այդ թվում՝ «Յութոնգ»՝ 15 հատ, «Շկոդա»՝ 7 հատ, «ԼԻԱԶ»՝ 34 հատ: Տրոլեյբուսային հավաքակազմն ընդհանուր առմամբ հնացած է, տրոլեյբուսների միջին տարիքը, չհաշված նոր ձեռք բերված «Յութոնգ» մակնիշի տրոլեյբուսները, կազմում է մոտ 22 տարի:

Փաստացի սպասարկվում է 7 տրոլեյբուսային երթուղի (հ.հ.1,2,2Ա,9,10,10Ա,15), օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 45-50 միավոր շարժակազմ:

Հաշվի առնելով տրոլեյբուսների դերը Երևանի ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացում (որպես մեծ տեղատարողության տրանսպորտի տեսակ) և կարևորելով դրա հետագա զարգացումը, այդ թվում՝ բնապահպանական խնդիրների տեսանկյունից՝ 2022 թվականին ձեռք է բերվել և մայրաքաղաք ներկրվել «Յութոնգ» մակնիշի չինական նոր, շարժման ընթացքում լիցքավորվող (ՇԸԼ) թվով 15 տրոլեյբուսներ, որոնք տեխնիկապես հնարավորություն ունեն շարունակելու երթևեկությունն առանց հպակային ցանցի (մոտ 60 կմ): Նշված բոլոր տրոլեյբուսները կահավորված են թեքահարթակով՝ (նմանատիպ թեքահարթակով են կահավորված նաև «ԼԻԱԶ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը) և շահագործվում են գործող տրոլեյբուսային հ.հ.2,10 երթուղիներին զուգահեռ՝ երկարացված ուղեգծերով, համապատասխանաբար, մինչև Աերացիա և Նուբարաշենի խճուղի (2Ա համարով) և մինչև Դավթաշեն (10Ա համարով):

Երևանի մետրոպոլիտենում շահագործվում է 10 կայարան, առկա է 45 վագոն, որոնց միջին տարիքը կազմում է մոտ 34 տարի: Վագոններից հիմնանորոգված է 29-ը: Թվով 24 շարժասանդուղքներից հիմնանորոգված է 10-ը:

Մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների միջև ընկած հատվածում նախատեսված մոտ 930 մ երկարությամբ դրենաժային թունելի հորատանցման աշխատանքներն ավարտվել են:

Վերջին հինգ տարիներին (բացառությամբ 2020թ.) մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում արձանագրվել է կայուն աճի միտում, որի արդյունքում, ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում ևս աճել է:

Կազմակերպվել է Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման նպատակով համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացը, որում հաղթող է ճանաչվել «Մետրո-գիպրոտրանս» ընկերությունը, որի կողմից տարվում են համապատասխան աշխատանքները:

Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակ-ներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի, հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա մշակել է Երևանի հանրային տրանսպորտի նոր արդյունավետ երթուղային ցանց, ինչը ենթադրում է միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորություն, զեղչային համակարգի կիրառում, նոր ժամանակակից շարժակազմերի (ավտոբուս, տրոլեյբուս) ձեռքբերում՝ բացառելով միկրոավտոբուսները, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն, ուղևորների սպասարկման որակի զգալի բարձրացում և այլն:

Այս համատեքստում սկսվել են Թևոսյան 5 հասցեում գործող հավաքակայանի վերակառուցման և արդիականացման աշխատանքները՝ ժամանակակից չափորոշիչներին համապատասխանեցնելու համար:

Նույն գործընթացի շրջանակներում բարեկարգվել է «Երևանտրանս» ՓԲԸ-ի Լենինգրադյան 16 հասցեում գտնվող տարածքը, որտեղից ներկայումս կազմակերպվում է նոր ավտոբուսների շահագործման աշխատանքները:

Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի արդիականացման աշխատանքների և բարեփոխումների շրջանակներում պլանավորվում է նոր, արդիական սարքավորումածրագրային համակարգերի ներդրում, ինչը հնարավորություն կտա ավտոկայանատեղերում իրականացնել տեսանկարահանող սարքերի ավտոմատացման գործառույթ, մասնավորապես՝ վճարովի ավտոկայանատեղերում կայանած տրանսպորտային միջոցների համարանիշերի ճանաչում և թվայնացում, մասնավորապես՝ Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղում վճարի գանձման գործընթացը կանոնակարգելու նպատակով փոխվել և տեղակայվել է նոր, էլեկտրոնային արդիական համակարգ:

Երևան քաղաքի տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքները բարելավելու նպատակով ձեռք է բերվել տրանսպորտային հոսքերի մոդելավորման նոր ծրագիր և իրականացվում է ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների գույքագրման և թվայնացման աշխատանքներ:

Ավտոկայանատեղերի կազմակերպման գործընթացի շրջանակներում թույլատրվել է թվով 28 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղեր, ինչպես նաև կազմակերպվել է 156 հատ թեթև մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղ:

Մայրաքաղաքում սահմանված են հասարակական տրանսպորտի 1178 կանգառներ, որոնցից միայն 353-ն են կահավորված կանգառասրահներով, մնացածը՝ միայն կանգառանշաններով:

2023թ. ընթացքում կահավորվել են թվով 20 կանգառներ: Աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

Հետիոտների անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով մայրաքաղաքի թվով 61 չկարգավորվող հետիոտնային անցումներում տեղադրվել են հետիոտնային կանչի լուսացույցներ:

Հիմնախնդիրներ

1. Երևանի ներհամայնքային հասարակական տրանսպորտի ոչ արդյունավետ գործող երթուղային ցանց, որը չի բավարարում մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող առկա պահանջներին,
2. Միասնական սակագնային և տոմսային համակարգի բացակայություն,
3. Ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմերը վերջնականապես համալրված չեն,
4. Հասարակական տրանսպորտի հավաքակայաններն արդիական չեն, սահմանափակ է դրանց հնարավորությունները,
5. Հասարակական տրանսպորտի կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն,
6. Կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում սպասարկման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն,
7. Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակը դեռևս բավարար մակարդակի չէ,
8. Վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսության ոչ բավարար վիճակ,
9. Երևանի մետրոպոլիտենի սահմանափակ հնարավորություններ, առկա է գծի ընդլայնման, շարժակազմի, տնտեսության և ենթակառուցվածքների վիճակի բարելավման անհրաժեշտություն,
10. Կանգառների արդյունավետ տեղաբաշխման, դրանց բարեկարգման և կահավորման անհրաժեշտություն,
11. Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ,

12. Ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման անհրաժեշտություն:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրման գործընթացի իրականացում	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել Նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի լրամշակում և ներդրում, նոր օպերատորի ներգրավում, ավտոբուսների և տրոլեյբուսների ներկրում, ուղևորների սպասարկման որակի և անվտանգության աստիճանի բարձրացում: Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում, կարևորելով երթուղային ցանցի արդյունավետության և ուղևորների սպասարկման որակի բարձրացումը, բրիտանական WIG խորհրդատվական ընկերության կողմից ստեղծվել է նոր երթուղային ցանց, ինչը ենթադրում է նոր միասնական տոմսային համակարգ, միկրոավտոբուսների շահագործման բացառում՝ դրանց փոխարինում միջին և մեծ տեղատարողության քաղաքային ավտոբուսներով: Նախատեսվում է նաև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ ապահովել երթուղիների, չվացուցակների, տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի և ժամանման իրական ժամանակի վերաբերյալ տեղեկությունների առցանց հասանելիությունը:	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ ճանապարհային ոստիկանություն, Հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
2.	Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հասարակական տրանսպորտի թվով 1180 կանգառների կահավորում կանգառասրահներով՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի ավելի քան 1178 կանգառներից միայն 353-ում են տեղադրված կանգառասրահներ: Ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով նախատեսվում է շարունակել կանգառների կահավորման աշխատանքները:	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	2024 թվականի ընթացքում
3.	Մետրոպոլիտենի վագոնների արդիականացում	Նախատեսվում է արդիականացնել մետրոպոլիտենի 3 վագոն՝ 2 գլխամասային, 1 միջանկյալ: Ծրագրի շրջանակում ձեռք կբերվեն գնացքի 24 հատ անվազույգեր, 12 հատ անվասայլակի շրջանակներ, կիրականացվեն վագոնների ընդհանուր վերանորոգումներ:		2024 թվականի ընթացքում
4.	Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում	Նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. 1) ազդանշանային և հեռահաղորդակցության համակարգի արդիականացում՝ թվային վերահսկման սարքով հագեցած ազդանշանային բլոկավորման համակարգի փոխարինում, 2) կարգավարական կապի, թունելային կապի համակարգերի արդիականացում, 3) 6 կվ մալուխների փոխարինում, 825 Վ մալուխների փոխարինում, 4) նախատեսվում է գերավազքով աշխատող թվով 3 շարժասանդուղքների վերանորոգում կամ փոխարինում,		2024 թվականի ընթացքում

		5) թունելային հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարերի նորոգում, 6) նախատեսվում է ուղեգծերի սպասարկման և վերանորոգման աշխատանքներ՝ ռելսերի, զանազան պահեստամասերի ձեռքբերում, ռելսերի, փայտակոճերի փոխարինում, 7) նախատեսվում է նորոգել և արդիականացնել շահագործվող ավտոդրեզինները:		
5.	Նոր ավտոբուսների կամ էլեկտրաբուսների ձեռք բերում (18 մետր երկարությամբ)	Ավտոբուսային ուղևորափոխադրումների գործընթացը կանոնակարգելու, ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել շարունակել ավտոբուսների ձեռքբերման աշխատանքները: Նախատեսվում է նոր ավտոբուսների կամ էլեկտրաբուսների (18 մետր երկարությամբ, 249 հատ) ձեռքբերում և ներդրում, ավտոբուսային կանոնավոր ուևորափոխադրումների գործընթացի բարելավում, ուղևորների սպասարկման որակի և անվտանգության աստիճանի բարձրացում, այդ թվում բնապահպանական խնդիրների տեսանկյունից:	ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ ճանապարհային ոստիկանություն, ՀՀ ՊԵԿ	2024 թվականի ընթացքում
6.	Նոր ավտոբուսների կամ էլեկտրաբուսների ձեռք բերում (8.5 մետր երկարությամբ)	Նախատեսվում է նոր ավտոբուսների կամ էլեկտրաբուսների (8,5 մետր երկարությամբ, 171 հատ) ձեռք բերում և ներդրում ավտոբուսային կանոնավոր ուևորափոխադրումների գործընթացի բարելավում, ուղևորների սպասարկման որակի և անվտանգության աստիճանի բարձրացում, այդ թվում բնապահպանական խնդիրների տեսանկյունից:	ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ ճանապարհային ոստիկանություն, ՀՀ ՊԵԿ	2024 թվականի ընթացքում
7.	Նոր տրոլեյբուսների ձեռք բերում	Ներհամայնքային կանոնավոր ուղևորափոխադրումների պահանջարկը բավարարելու, դրանք էկոլոգիապես մաքուր տրանսպորտի տեսակներով (տրոլեյբուս) իրականացնելու նպատակով նախատեսվում է ձեռք բերել նոր սերնդի տրոլեյբուսներ (71 հատ):	ՀՀ ՏԿԵՆ, ՀՀ ճանապարհային ոստիկանություն, ՀՀ ՊԵԿ	2024 թվականի ընթացքում
8.	Ճանապարհային երթևեկության կարգավորման և անվտանգության ապահովման նպատակով լուսացույցների սպասարկում, պահպանում, շահագործում և վթարավերականգնողական աշխատանքների կատարում, ճանապարհային նշանների,	Երթևեկության կարգավորման նպատակով նախատեսվում է իրականացնել ճանապարհային նշանների, լուսացույցների ձեռքբերում և տեղադրում, ճանապարհային գծանշումների իրականացում, լուսացույցների սպասարկում, պահպանում և շահագործում, վթարավերականգնողական աշխատանքների իրականացում:	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	2024 թվականի ընթացքում

	լուսացույցների ձեռք բերում և տեղադրում, ճանապարհային գծանշումների իրականացում			
9.	Հետիոտնային կանչի լուսացույցների ձեռքբերում և տեղադրում	Հետիոտների երթևեկության անվտանգության ապահովման նպատակով նախատեսվում է մայրաքաղաքի մի շարք փողոցներ կահավորել հետիոտնային կանչի լուսացույցներով (40 հատ)	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	2024 թվականի ընթացքում
10.	Լենինգրադյան 16 հասցեում կառավարման կենտրոնի կառուցում (ստեղծում)	Երևան քաղաքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով իրականացվող կանոնավոր ուղևորափոխադրումների բնագավառում երթակարգավարական ծառայությունների մատուցման, դրանց որակի բարձրացման, տրանսպորտային միջոցների աշխատանքի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացման նպատակով նախատեսվում է ստեղծել հասարակական տրանսպորտի կենտրոնացված կառավարման կենտրոն:	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ	2024 թվականի ընթացքում
11.	Երթևեկության կազմակերպման թվայնացման ծրագրային համակարգի մշակում և ներդրում	Նախատեսվում է իրականացնել երթևեկության կազմակերպման թվայնացման ծրագրային համակարգի մշակում և ներդրում:	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	2024 թվականի ընթացքում
12.	Լուսացույցների նոր համակարգերի ներդրում	Նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքում լուսացուցային նոր համակարգի ներդրում, որը հնարավորություն կտա բոլոր լուսացույցների կառավարումը նույն համակարգից, կնպաստի ավելի մատչելի դարձնելու լուսացույցների նորոգումը և սպասարկումը: Համակարգը ներդրվելու է շուրջ 350 լուսացույցների աշխատանքը կանոնակարգելու համար:	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	2024 թվականի ընթացքում
13.	Կանգառասրահներում ցուցատախտակների տեղադրում	Նախատեսվում է կանգառասրահներում տեղադրել ցուցատախտակ, ինչը հնարավորություն կտա հատուկ նշելու տրանսպորտային միջոցի գտնվելու վայրը և կանգառին մոտենալու ժամանակը, ինչպես նաև չվացուցակը:		2024 թվականի ընթացքում
14.	Էլեկտրաբուսների էլեկտրալիցքավորման կայանների կառուցում և այլ աշխատանքներ	1) Ընկերության հաշվեկշռում առկա են երկու գործող հավաքակայաններ՝ տեղակայված Երևանի Բագրատունյանց 44 և Երևանի Թևոսյան 12 հասցեներում, որտեղ էլ կայանվելու են էլեկտրաբուսները: Էլեկտրաբուսների շահագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նախապես կառուցել լիցքավորման կայաններ: Նախատեսվում է իրականացնել թվով 420 էլեկտրալիցքավորման կայանների կառուցման և Էլեկտրաբուսների լիցքավորման աշխատանքների կազմակերպում, բավարարել Երևանի բնակչության ուղևորափոխադրումների պահանջարկը վերգետնյա		2024 թվականի ընթացքում

		էլեկտրատրանսպորտով, նվազեցնել քաղաքային տրանսպորտի այլ տեսակների աշխատանքի ծանրաբեռնվածությունը: Երկու գործող հավաքակայանները տեղակայված են Երևանի Բագրատունյանց 44 և Երևանի Թևոսյան 12 հասցեներում, որտեղ էլ կայանվելու են էլեկտրաբուսները, 2) նախատեսվում է կառուցել Երևանի Բագրատունյանց 44 հասցեում հավաքակայանի պարիսպ (420 մետր)՝ նոր ներկրված էլեկտրատրանսպորտի շարժակազմի տեղակայման և ապահով պահպանման նպատակով, 3) տրոլեյբուսային տնտեսության վերազինում և արդիականացում, վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման բարձր որակի ապահովում, բնակչության մատչելի և անվտանգ փոխադրում: Թիվ 4 և թիվ 15 քարշի ենթակայանների սարքավորումների արդիականացում: Ընկերության հաշվեկշռում առկա են քարշի թվով 27 ենթակայաններ, որոնցից ներկայումս գործում են 23-ը (1-ը՝ շարժական), 4) էլեկտրատրանսպորտի անխափան աշխատանքի և ուղևորափոխադրումների անվտանգության ապահովման նպատակով կիրականացվի ֆիզիկապես ու բարոյապես մաշված հպակային ցանցի վերակառուցում (նոր ցանցի մոնտաժում), ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացի պահպանություն: Առկա է 262522մ ընդհանուր երկարությամբ պղնձյա (բանվորական) լարեր, որոնցից 20800 մ-ը՝ չգործող, 5) նախատեսվում է Ք/ Թիվ 14 ք/ ենթակայանի ստորգետնյա մալուխային ցանցի վերակառուցում, 3000 մետր երկարությամբ բարձր լարման մալուխների փոխարինում նորերով՝ ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացի պահպանության, էլեկտրատրանսպորտի անխափան աշխատանքի և ուղևորափոխադրումների անվտանգության ապահովման նպատակով: Առկա են թվով 27 քարշի ենթակայաններ, որոնցից գործում են միայն 23-ը (1-ը՝ շարժական), 6) նախատեսվում է տրոլեյբուսային տնտեսության վերազինում և արդիականացում, հպակային ցանցի թվով 250 վթարային հենասյուների փոխարինում նորերով: Առկա են թվով 6433 հենասյուներ, 7) նախատեսվում է ավտոաշտարակների ձեռքբերում: Հպակային բաժնում առկա են թվով 5 ավտոաշտարակներ, որոնք շահագործվում են 28 և ավելի տարիներ՝ այսինքն ֆիզիկապես և		

		բարոյապես մաշված են: Ծրագրի շրջանակում կիրականացվի թվով 3 նոր ավտոաշտարակների ձեռքբերման աշխատանքներ, 8) նախատեսվում է վերգետնյա էլեկտրատրանսպորտի հավաքակայանի տարածքի բարեկարգում: Տրոլեյբուսային տնտեսության վերազինում և արդիականացնում, հավաքակայանի տարածքի բարեկարգում և ասֆալտապատում (0.7 հա մակերեսով): Ընկերության հաշվեկշռում առկա են երկու գործող հավաքակայաններ. գլխավորը՝ Երևանի Բագրատունյանց 44 հասցեում, որտեղ կայանվում են տրանսպորտային միջոցների մեծ մասը, և Երևանի Թևոսյան 12 հասցեում գտնվող «Ջրվեժ» տեղամասում՝ որտեղ կայանվում են մնացածը:		
15.	Վերգետնյա էլեկտրատրանսպորտի հավաքակայաններում արևային համակարգերի տեղադրում	Քանի որ էլեկտրատրանսպորտը համարվում է մեծ ծավալի էլեկտրականության սպառող, նպատակահարմար է իրականացնել էլեկտրաէներգիայի սպառման խնայողություն՝ տեղադրելով արևային մարտկոցներ: Նախատեսվում է իրականացնել Հավաքակայանների դեպոների տանիքներում արևային համակարգերի էլեկտրամեկուսիչ մարտկոցների նախահաշիվների պատվիրման աշխատանքներ:		2024 թվականի ընթացքում

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի քաղաքաշինական զարգացմանն ուղղված ծրագրերն իրականացվել են Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթների համաձայն:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի N2330-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը:

ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի N1402-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի 2006-2020թթ. իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը: Նշված ծրագրով ընթացել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմման աշխատանքները՝ հիմնականում վարչական շրջանների տարածքների գոտիավորման նախագծերը, այլ ծրագրեր, միջոցառումներ ու նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Երևան քաղաքի որոշակի վարչական շրջանների համար ամբողջական, կամ քաղաքի առանձին հատվածների տարածքների համար գոտիավորման նախագծեր են մշակվել և հաստատվել հիմնականում 2007-2009 թվականներին, հետագայում 2017թ. Ավան վարչական շրջանի մնացած առանձին հատվածի նախագիծը: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի իկքգոտիավորման նախագիծը հաստատվել է 2020թ., Նոր-Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքները կատարվել են, իսկ նախագծի վերաբերյալ ՀՀ օրենքով նախատեսված հետագա փուլերը դեռևս չեն ավարտվել:

Շարունակվել են նաև Կենտրոն վարչական շրջանում նոր կայարանի նախագծային լուծումների դիտարկումը («Սասուցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ Քրիստափորի փողոցի մոտակայքում):

Երևան քաղաքում գոյություն ունեցող խարխուլ բնակելի խնդիրների լուծման և պատմական թաղամասերի վերակառուցման ուղղությամբ նախատեսված աշխատանքներից՝ մասնավորապես «Հին Երևան պատմաճարտարապետական միջավայր», «Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում» (Ֆիրդուսի թաղամաս), «Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագիր» ծրագրային խնդիրների շուրջ քննարկումները շարունակվել են (նաև ՀՀ վարչապետի 13.04.2022թ. հ. 384-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրերը համակարգող խորհրդի հետ): Ծրագրերը մտել են գործնական և շինարարական փուլ: Որոշ հատվածներում իրականացվել են լայնածավալ շինարարական աշխատանքներ, պահպանելով հին Երևանի պատմամշակութային ժառանգությունը:

Երևանի ամենահին թաղամասի՝ Կոնդի վերափոխման, թաղամասի պատմական դիմագիծը պահպանելու (բոլոր մշակութային հուշարձանների պահպանմամբ և բացառելով բազմահարկերի կառուցումը) նպատակով (2021թ. մրցույթի առաջին փուլն ավարտված) Քաղաքաշինության կոմիտեի կողմից հայեցակարգի վերջնական և էսքիզ նախագծի բաց մրցույթի համար հայտարարման նախապատրաստական պրոցեսին զուգահեռ Երևանի քաղաքապետարանում ընթացել են տարածքի հետագա հողի օտարման և վերաբնակեցման գործընթացներում բնակիչների իրավունքներն ապահովելու՝ գույքերի գրանցմանն ուղղված վերլուծական աշխատանքներ:

Կառուցապատման ներդրումային առաջարկներ են ներկայացվել քննարկման Երևանի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային ճանապարհահատվածի և Նորագյուղ թաղամասի հարակից գոտու վերաբերյալ (ըստ ծրագրային փաստաթղթերի՝ «Երևանի-բերդ» նախագծային թաղամաս):

Հյուսիս-Հարավ մայրուղու հարակից տարածքում մեկնարկել է (իրականացվում է մասնավոր ներդրումներով) Հայաստանի նորագույն պատմության ամենամեծ «Դեֆանս» թաղամասի կառուցման աշխատանքները: Ստեղծվելու է 20 հեկտար այգի-պուրակ: Ամբողջ թաղամասի 140 հա տարածքում կկառուցվի 100-ից ավել բազմաբնակարան շենք 145000 բնակչի համար: Առաջին փուլով 43 հա տարածքի վրա սկսվել է և մինչև 2023 թվականի վերջ նախատեսվում է կառուցել մոտ 70 բազմաբնակարան բնակելի շենքեր՝ իրենց ամբողջական ենթակառուցվածքներով:

Երևան քաղաքի հանգստի նոր գոտիներ են հիմնվել, նաև առկա այգիներ և զբոսայգիներ են վերականգնվել՝ Երևան քաղաքի Օղակաձև զբոսայգու հատվածներ, 2021 թվականի նոյեմբերին բացվել է սքեյթ պարկը: 2019 թվականի մայիսին շահագործման է հանձնվել Երևանի 2800-ամյակի այգին: Վարդանյան ընտանիքը 99 տարով իր վրա է վերցրել նաև այգու պահպանումը: Վերակառուցումից հետո մայրաքաղաքում 2019 թվականի հունիսին շահագործման է հանձնվել նաև Երևանի գլխավոր պողոտայի վերջնամասում (Սարյան-Մաշտոցի պողոտա) գտնվող այգին:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքաշինական կադաստրային համակարգի նպատակի և տեխնիկական հնարավորությունների վերանայում (GIS) (Երևան քաղաքի համար GIS-Աշխարհագրական տեղեկատվական համակարգի ստեղծում (ԱՏՀ/GIS) (Geographic Information System)).
   - 1.1 քաղաքաշինական կադաստրային համակարգը՝ որպես տարածքի զարգացման տեղեկատվական-վերլուծական համակարգ,
   - 1.2 քաղաքաշինական կադաստրային համակարգը, որպես քաղաքի եռաչափ կրկնօրինակ,
   - 1.3 քաղաքի զարգացման ծրագրի ձևավորող և կատարող մարմինների իրական ժամանակում կապ՝ աշխատանքների ընթացք, տվյալներ,
   - 1.4 քաղաքի Գլխավոր հատակագծի համապատասխանեցում քաղաքի զարգացման ծրագրին և ինտեգրում քաղաքաշինական կադաստրային համակարգ,
   - 1.5 քաղաքաշինական կադաստրային համակարգը, որպես ելակետային տվյալների տրամադրման շտեմարան:
2. Ինժեներական ենթակառուցվածքների ներկայիս փաստական տվյալների հավաքագրում (վերգետնյա և ստորգետնյա),
3. Երևան համայնքը՝ որպես նախաձեռնող կողմ հանդես կգա տարածական պլանավորման փաստաթղթի մշակման աշխատանքները քաղաքի սահմաններում իրականացնող, արդյունքները փոխանցելով գեոպորտալին, որի դաշտում էլ հետագա թարմացումները կիրականացվեն և այդուհետ նույն հարթակից կօգտվեն բոլոր շահագրգիռ կողմերը,
4. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծում,
5. Շրջակա միջավայրի պահպանում և վերականգնում (միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող կառուցապատումների զարգացման նվազեցում, շինարարության ընթացքում փոշու և այլ արտաներտումների նկատմամբ վերահսկողություն, արդյունքում մարդկանց առողջությանն աջակցող՝ պահպանվող տարածքների առողջ էկոհամակարգերի պատշաճ կառավարում),
6. Երևան քաղաքի վարչատարածքային սահմաններում առկա գերեզմանների տարածքների, նաև նոր գերեզմանատների հնարավոր տեղակայման վայրերի առանձնացման, դրանց սահմանների համապատասխան սանիտարական պաշտպանիչ գոտիների ստեղծման և

հարակից տարածքներում կառուցապատումների նկատմամբ հատուկ ռեժիմներ սահմանելու հետ կապված խնդիրներ,

7. Երևան քաղաքում (նաև քաղաքամերձ գոտում) արդյունաբերական հանգույցների և պահեստային տարածքների վերահատակագծման, արդիականացման (նորերի ստեղծման) խնդիրների լուծման համար հետազոտության անհրաժեշտություն,
8. Մայրաքաղաքի կենտրոնը բեռնաթափող ու շրջանցող ճանապարհների կառուցման, անընդհատ երթևեկությունն ապահովելու նպատակով տարբեր մակարդակների վրա տրանսպորտային հանգույցների և նոր ուղեբաժանքների, ավտոկայանատեղերի կառուցման և գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացման խիստ անհրաժեշտություն (ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովում, ճանապարհափողոցային ցանցի ընդլայնման, ժամանակակից չափանիշներին համապատասխանող ճանապարհների և դրանց երկայնքով արդիականացված ստորգետնյա ենթակառուցվածքների և ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգերի կառուցման անհրաժեշտություն),
9. Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերի ավելացում,
10. Երևան քաղաքի առանձին հատվածների կառուցապատման հատակագծերի և վերակառուցման քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի մշակում, բացառելով կետային կառուցապատումները,
11. Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն,
12. Վթարային, անբավարար տեխնիկական վիճակում գտնվող (3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգում (վերաբնակեցման ծրագրեր՝ օգտագործելով սոցիալական բնակարանաշինության ոլորտում համայնք-մասնավոր հատված համագործակցության հնարավորությունները),
13. Երևան քաղաքի թաղամասերի և բնակարանային ֆոնդի արդիականացման անհրաժեշտություն,
14. Շենքերի ու շինությունների հուսալիության և սեյսմակայունության բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
15. Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում,
16. Հետիոտնի անվտանգ, հարմարավետ շարժման կազմակերպման ապահովում՝ հետիոտն ուղիների, առկա ստորգետնյա անցումների բարեկարգում, արդիականացում, լուսավորում, նոր միջազգային ստանդարտներին համապատասխան հետիոտն անցումների կառուցում և անվտանգ շահագործում,
17. Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման լիարժեք մատչելիության ապահովում,
18. Մշակութային և բնական ժառանգության բոլոր օբյեկտների պահպանում ու պաշտպանություն,
19. Մայրաքաղաքի աղճատված ճարտարապետական կերպար ստացած հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն,
20. Հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում,

21. Զբոսաշրջության, հանգստի և առողջարանային համալիրի զարգացման գործընթաց, որը պետք է նպատակամղվի ռեկրեացիոն պաշարների կայուն օգտագործմանը, մշակութային, բնական և կլիմայական առանձնահատկությունների և հնարավորությունների վերհանմանը և միջազգային ստանդարտներին համապատասխանեցմանը,
22. Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորման համար ընդունվելիք օրենքով նախատեսվող անհրաժեշտ իրավական և նախագծային փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակում	Երևան համայնքի կենսամիջավայրի փոփոխությունների երկարաժամկետ ռազմավարական բնույթի քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթի ստեղծում: Գլխավոր հատակագիծը մշակվում է համայնքի վարչական սահմաններում ընդգրկված բոլոր հողատարածքների ներառմամբ: Քաղաքաշինական գործունեության կանոնակարգման նպատակով և դրա միջոցով սահմանվում են տարածական զարգացման հիմնական ուղղությունները, օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջներն ու օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված սահմանափակումները, հողատարածքների կառուցապատման առաջնահերթ (մինչև 5 տարի), միջնաժամկետ (5-10 տարի) և հեռանկարային (10-տարի) փուլերը, հողամասերի նպատակային նշանակությունը և (կամ) դրանց փոփոխությունները՝ Օրենքի և Կարգի պահանջների կատարման ապահովմամբ:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀ ԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ պետական մարմիններ հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ, միջազգային համագործակցություն՝ ապակենտրոնացված համագործակցություն Իլ դը Ֆրանս շրջանի հետ	2023-2024թթ.
2.	Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի չմշակված հատվածների գոտևորման և կառուցապատման նախագծի մշակում	Ստեղծել քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ, որը սահմանում է համայնքի տարածական զարգացման մանրամասն պայմանները: Ծրագիրն իրականացվելու է հետևյալ բաղադրիչներով՝ Գոտևորման նախագծի մշակման առաջադրանքի նախագծի կազմում, հանրային քննարկման անցկացում, միջգերատեսչականի եզրակացության ստացում և հաստատում: Գոտևորման նախագծի դրույթները հիմք են հանդիսանում քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Մշակվող փաստաթղթով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջներն ու սահմանափակումները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծով ապահովված տարածքը՝ կազմում է 1205,5 հա, իսկ չմշակված նախագծային տարածքը՝ 1310,5 հա:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ) Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում

3.	Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման նախագծի լրամշակում	Ծրագրի նպատակն է մշակել քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ, որը հանդիսանում է ելակետային հիմք տարածական պլանավորման փաստաթղթերի (նայել գլխավոր հատակագծի առաջադրանքը*), մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի մշակման համար: Դրա մշակման անհրաժեշտությունն առաջանում է, քանի որ Երևան քաղաքի զարգացման ծրագրով նախատեսված է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն, որի հետագա փուլերով կատարվելու է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման աշխատանքը: Նպատակն է Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության և օգտագործման միասնական խնդիրների կարգավորումը՝ նպաստելով հուշարձանների քաղաքաշինական և գեղագիտական պահպանմանն ու բացահայտմանը, ինչպես նաև բնակավայրերի կայուն զարգացմանը, դրանցում նախատեսվող հողօգտագործման ու նոր կառուցապատման իրականացման համար պայմանների սահմանմանը:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ ՏԿԵ և ՀՀ ԿԳՄՍ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ պետական մարմիններ), Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
4.	Քաղաքաշինական կադաստրի ներդրում	Ծրագրի նպատակն է, որպես քաղաքաշինական ոլորտի քաղաքականության առաջնահերթություն մեկնարկել քաղաքաշինական տեղեկատվական միասնական՝ Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրային համակարգի ձևավորումը: Տարածքների զարգացման պլանավորման և կառավարման համար նորարարական տեխնոլոգիաներով՝ տեղեկատվական-վերլուծական կառավարման համակարգերի ներդրում՝(GIS) (Երևան քաղաքի համար GIS- Աշխարհագրական տեղեկատվական համակարգի ստեղծում (ԱՏՀ/-GIS) (Geographic Information System)):	ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման (Երևան համայնք) մարմիններ (ՀՀ ՏԿԵ և ՀՀ ԲՏԱ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություններ, ՀՀ ԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ, փորձագիտական կամ մասնագիտական այլ կազմակերպություններ), Հանրային ծառայություններ մատուցող կազմակերպություններ, միջազգային համագործակցություն, ապակենտրոնացված համագործակցություն Իլ դը Ֆրանս շրջանի հետ	Սկիզբը 2024թ Քաղաքաշինական կադաստրի ստեղծման և ներդրման ուղղությամբ տեխնիկական նախագծի մշակում և ըստ տեխնիկական նախագծի սահմանված փուլերով հետագա տարիներին շարունակական

5.	Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի կառուցում	Ծրագրի նպատակն է մետրոպոլիտենի ծրագրով դեռևս խորհրդային տարիներից նախատեսված մետրոպոլիտենի համակարգի ցանցի ընդլայնում, Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի՝ էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի զարգացմամբ քաղաքի շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման ապահովում, կենտրոնի տրանսպորտային հոսքերի անարգել կազմակերպման համար բեռնաթափում: Նոր կայարանի ավելացումն առավել արդյունավետ կդարձնի մետրոյի աշխատանքը և կլինի կարևոր խթան քաղաքի վարչական շրջանների համաչափ զարգացման համար, դրանց գրավչության բարձրացմանն ուղղված քայլ, հնարավորինս ժամանակի կորստի կրճատմամբ շրջանները միմյանց կապող հնարավորություն: Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի շրջանակներում 13.10.2021 թվականին հաղթող մասնակից է համարվել «Մետրոգիպրոտրանս» ռուսական ընկերությունը: 2021 թվականից կնքվել է պայմանագիր, որի շրջանակներում 2023 թվականի տարվա վերջին կհանձնվեն նախագծային փաստաթղթերը:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
6.	«Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցում՝ «Սասուցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ (Քրիստափորի փողոցի մոտակայքում)»	Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի՝ մետրոպոլիտենի գոյություն ունեցող ցանցի զարգացման հնարավորություն: Էսքիզային նախագիծը ենթադրում է «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» կանգառների միջև հեռավորության նվազեցում, տրանսպորտային խնդիրների թեթևացում, ավտոմեքենաների կրճատում, ուղևորահոսքերի կառավարում, վերգետյա հատվածներում երթևեկության նվազում, հասանելիության հեշտացում, շրջակա միջավայրի բարելավում, տնտեսական էֆեկտ և շահութաբերություն: Առկա է ներկայացված էսքիզային առաջարկ:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	Սկիզբը՝ 2024թ. շինարարական աշխատանքների անցկացման համար մրցութային գործընթաց, կառուցման մեկնարկ
7.	Երևան քաղաքի մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի երկրորդ	Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կենտրոնում, որտեղ ամենախիտ կառուցապատումն է, Սայաթ Նովա-Աբովյան խաչմերուկի հարևանությամբ «Երիտասարդական» կայարանի երկրորդ մուտքի կառուցմամբ հեշտացնել բնակչության	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ	Սկիզբը՝ 2024թ Շինարարական աշխատանքների մեկնարկ

	մուտքի կառուցում	տեղաշարժը: Էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտի՝ մետրոյի զարգացմամբ բարձրացնել էլեկտրական հասարակական տրանսպորտային միջոցի գրավչությունը: Այս ծրագիրը կհանդիսանա կարևոր խթան շատ ավելի մեծ թվով ուղևորներ ներգրավել ստորգետյա տրանսպորտային միջոցից օգտվելու համար: Այդ ճանապարհով կնվազի քաղաքի շրջակա միջավայրի աղտոտվածությունը և վերգետյա հատվածներում երթևեկությունը:	Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	
8.	Երևան քաղաքում նոր ճոպանուղու կառուցման ներդրումային ծրագիր	Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի արդիականացման, ինչպես նաև քաղաքում զբոսաշրջության զարգացման նպատակով նախատեսվում է կառուցել նոր ճոպանուղի: Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի արդիականացման՝ էլեկտրականությամբ աշխատող միջոցների կիրառմամբ այլընտրանքային տրանսպորտի ձևերի ներմուծման ռազմավարության իրականացումը: Տրանսպորտային հոսքերի բեռնաթափման, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացման նպատակով նոր ճոպանուղու ներդրման միջոցով քաղաքի շրջանների միջև լրացուցիչ օդային կապի ստեղծումը, վերգետյա հատվածներում երթևեկության նվազեցումը, ժամանակի կորստի կրճատմամբ հարմար տեղաշարժի ապահովումը, քայլ դեպի կանաչ քաղաք, միաժամանակ զբոսաշրջային գրավչության բարձրացում:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	Սկիզբը 2024թ.
9.	Երևանի արևմտյան օղակաձև կապի՝ Բաբաջանյան-Աշտարակի խճուղու ճանապարհահատվածի կառուցում և Ա.Բաբաջանյան փողոցի 1 կմ ճանապարհի շինարարության ավարտ	Ծրագրի նպատակն է ապահովել Երևան քաղաքի անվտանգ և հարմարավետ ճանապարհափողոցային ցանցի զարգացմանն ուղղված ընթացող աշխատանքների շարունակությունը, խցանումների նվազման համար իրականացնել երթևեկության բեռնաթափմանն ուղղված միջոցառումներ:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ,	Սկիզբը նախորդ տարիներից- ավարտը 2024թ՝ իրականացված շինարարական աշխատանքների թերությունների վերացման երաշխիքային ժամանակահատված և ավարտ

			Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	
10.	Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի, Ագաթանգեղոս և Գրիգոր Լուսավորիչ փողոցների հատման՝ Կրկեսին հարակից հատվածում տրանսպորտային հանգույցի կարգավորում	Տվյալ խաչմերուկը հանդիսանում է միմյանց հետ փոխկապակցված խնդիրներ պարունակող կոմպլեքսային լուծում պահանջող Երևան քաղաքի ճանապարհատրանսպորտային հիմնական ուղղության վրա գտնվող հանգույցներից մեկը (1 Ծ Իսակովի պողոտայից նոր նախագծային ճանապարհի և Արշակունյաց պողոտայի հատման հատվածի, 2 Արշակունյաց պողոտայի և Գ.Նժդեհի փողոցի հատման հատվածում («Հայրենիք» կինոթատրոնի հրապարակի), 3 Աշխատանքի (Բանվորի արձանի) հրապարակի: Ներկայումս քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մաս կազմող՝ Երևան քաղաքի կարևորագույն մուտքն ապահովող Արշակունյաց պողոտայով առկա և հիմա արդեն կառուցապատման խտացմամբ պայմանավորված զարգացող ինտենսիվ տրանսպորտային հոսքերի կարգավորման և կառավարման համար պահանջվում են այնպիսի ինժեներական լուծումներ, որոնք չեն խաթարի պատմականորեն ձևավորված քաղաքային լանդշաֆտը՝ քաղաքաշինական անսամբլներն ու հրապարակները, շրջակա միջավայրը: Հետիոտների խաչմերուկի հատման ապահովում: Հետիոտների շարժը խաչմերուկում չի փոխվում և շարունակում է իրականացվել ինչպես ներկայումս, լուսացույցերի համապատասխան ազդանշանի դեպքում: Ծրագրի նպատակն է կառուցել թունելային տիպի տրանսպորտային ուղեանց Ագաթանգեղոս փողոց – Արշակունյաց պողոտա ուղղության վրա և հետիոտնային ստորգետնյա ուղեանց Ագաթանգեղոս փողոց – Մ Խորենացու փողոցների խաչմերուկում, որը կապելու է միայն Ագաթանգեղոս փողոց երկու մայթերը «Ոսկու շուկայի» մայթի ուղղությամբ:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024թ. շինարարական աշխատանքների սկիզբ
11.	Արշակունյաց պողոտայի և Գ.Նժդեհի փողոցի հատման հատվածում («Հայրենիք» կինոթատրոնի հրապարակի) տրանսպորտային հանգույցի	Ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կարևորագույն մուտքն ապահովող Արշակունյաց պողոտայի առավել օպտիմալ տրանսպորտային համակարգի ձևավորման համատեքստում՝ անխափան, անվտանգ երթեկության ապահովում, ճանապարհատրանսպորտային պատահարների թվի նվազեցում, անընդհատ երթևեկության ապահովում Հյուսիս-Հարավ Սևան ուղղությամբ:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ	2024թ. նախագծային աշխատանքների ավարտ և շինարարական աշխատանքների սկիզբ

	կարգավորում		մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	
12.	Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի վերջնամասից մինչև Աճառյան փողոց երկաթգծի ծրագրով ավտոճանապարհի կառուցում	Ծրագրի նպատակն է կառուցել նոր ներհամայնքային ճանապարհ՝ երկաթգծի տեղում, որը կթեթևացնի Քանաքեռ-Զեյթուն, Նոր-Նորք և Ավան վարչական շրջանների միացման անկյունում առաջացող խցանումները: Տրանսպորտային անընդհատ հոսքերի ապահովումը կբարելավի շրջակա միջավայրը արտանետումների և խցանումների նվազեցման տեսքով: Կբարելավվի բիզնես միջավայրը (հարակից տարածքներում հնարավոր են նոր կառուցապատումներ): Նոր ճանապարհի կառուցումը կնպաստի հարակից ուսումնական հաստատությունների ավելի հեշտ հասանելիությանը:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024թ. նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռք բերում
13.	Դավթաշեն վարչական շրջանի Տիգրան Պետրոսյան փողոցին զուգահեռ ճանապարհահատվածի կառուցում	Ծրագրի նպատակն է Դավթաշեն վարչական շրջանի Տիգրան Պետրոսյան փողոցին զուգահեռ ճանապարհահատվածի կառուցմամբ Աղաբաբյան փողոցը շարունակել երկրորդ թաղամասի հյուսիսային հատվածով, ավարտուն տեսքի բերելով երկրորդ թաղամասի պարագծային երթևեկությունը: Արդյունքում լիաժեք տրանսպորտային սպասարկում և հարմար տեղաշարժ կիրականացվի բնակելի թաղամասի բնակչության համար: Երևանի 2005-2020 թթ. գլխավոր հատակագծով և	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ,	2024թ. նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ և շինարարական աշխատանքների սկիզբ

			Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	
14.	Դավթաշենի Սասնա Ծռեր և Տ.Պետրոսյան փողոցների խաչմերուկից դեպի հյուսիս՝ Աղաբաբյան փողոցին կապվող ճանապարհահատվածի կառուցում	Ծրագրի նպատակն է Դավթաշեն վարչական շրջանի միասնական փողոցամայրուղային ցանցը համալիր ավատուն տեսքի բերել, կանոնակարգել և կատարելագործել ընդհանուր հատակագծատարածական կառուցվածքը: Արդյունքում հնարավոր կլինի բնակելի թաղամասի բնակչության տրանսպորտային միջոցների և հետիոտնի տեղաշարժի համար լիաժեք սպասարկում իրականացնել: Նախատեսվում է Դավթաշենի կամրջից սկսվող Սասնա Ծռեր փողոցի շարունակությունն իրականացնել՝ Սասնա Ծռեր և Տ.Պետրոսյան փողոցների խաչմերուկից, դեպի հյուսիս Աղաբաբյան փողոցի հետ կապ ստեղծել՝ քաղաքի սահման գնացող ուղղությամբ:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024թ. նախագծանախահաշվային փաստաթղթերի ընդունում և դրա հիման վրա շինարարական աշխատանքների սկիզբ:
15.	Նոր կամրջի կառուցում Հրազդանի կիրճի վրայով, Թբիլիսյան և Եղվարդի խճուղիներն իրար կապող	Նոր կամրջի կառուցման նպատակն է ստեղծել այլընտրանքային կապ Արաբկիր և Դավթաշեն վարչական շրջանների միջև, զգալիորեն թեթևացնելով գործող ճանապարհներում երթևեկության ծանրաբեռնվածությունը: Բնակելի շրջանների միջև և քաղաքի այլ հատվածների հետ կարճ տրանսպորտային կապ կստեղծվի քաղաքային և շրջանային նշանակության մայրուղային ճանապարհների միջոցով: Արդյունքում հնարավոր կլինի համայնքի բնակչության տրանսպորտային միջոցների և հետիոտնի տեղաշարժի համար լիաժեք, հարմար սպասարկում իրականացնել: Կամրջի տեղադիրքը կատարվելու է հաշվի առնելով քաղաքաշինական որոշումների պահանջները, տեխնիկական և տնտեսական ցուցանիշների վրա ազդող ուղիների, երկրաբանական, հիդրոերկրաբանական, էկոլոգիական, լանդշաֆտային և այլ տեղական պայմանները:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024թ.՝ նախնական հետազոտական աշխատանքներ
16.	Երևան քաղաքը Զվարթնոց	Նոր կառուցված ճանապարհը հնարավորություն կտա օդանավակայան և օդանավակայանից դեպի մայրաքաղաք	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և	2024թ. հետազոտական

	միջազգային օդանավակայանին կապող այլընտրանքային ճանապարհի կառուցում	հասնել արդյունավետ ժամանակահատվածում, ինչը կնպաստի ավիափոխադրումների աճին և զբոսաշրջության զարգացմանը: ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման Մ5 (Երևան-Էջմիածին-Արմավիր-Թուրքիայի սահման) պետական ավտոմոբիլային ճանապարհի ծանրաբեռնված երթևեկության թեթևացման համար այլընտրանքային նոր ճանապարհը կապահովի նաև արտակարգ իրավիճակների դեպքում փրկարար ուժերի և միջոցների արագ տեղաշարժը դեպի օդանավակայան: Երևան քաղաքը Զվարթնոց միջազգային օդանավակայանին կապող այլընտրանքային ճանապարհն օդանավակայանը կկապի Բաբաջանյան-Աշտարակ հատվածին:	ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	աշխատանքների և նախագծերի մշակում
17.	Վերին Պտղնիի և Մասիսի տրանսպորտային հանգույցներն իրար կապող Երևանի արևելյան շրջանցիկ ճանապարհի կառուցում	Ծրագրով կստեղծվի հնարավորություն Երևան քաղաքով ներկայումս անցնող որոշակի տրանսպորտային հոսքեր ուղղորդել նորակառույց Երևան քաղաքի արևելյան շրջանցիկ ճանապարհի ուղղությամբ, այդպիսով թեթևացնել Երևանի ծանրաբեռնված երթևեկությունը և նվազեցնել Երևանում օդի աղտոտվածությունը: Երևանի արևելյան շրջանցիկ ճանապարհը, որը Մասիսի տրանսպորտային հանգույցը կկապի Վերին Պտղնիի տրանսպորտային հանգույցին՝ շրջանցելով Երևանը արևելյան կողմից: Աշխատանքները մեկնարկել են:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024թ. շինարարական աշխատանքների առաջին հատվածի ավարտ
18.	Մյասնիկյան պողոտային կապող շուրջ 1,5 կմ ճանապարհի և էստակադայի կառուցում	Նախատեսվող Նոր Նորք համայնքը Մյասնիկյան պողոտային կապող շուրջ 1,5 կմ ճանապարհը և էստակադան՝ էականորեն կնվազեցնեն Մյասնիկյան փողոցի խցանումները: Բնակելի շրջանի և քաղաքի այլ հատվածների հետ կարճ տրանսպորտային կապ կստեղծվի: Արդյունքում հնարավոր կլինի համայնքի բնակչության տրանսպորտային միջոցների և հետիոտնի տեղաշարժի համար հարմար սպասարկում	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն	2024թ. շինարարական աշխատանքների ավարտ

		իրականացնել: Նոր Նորքի Գյուրջյան և Շոպրոն փողոցների միացման հատվածից նոր ճանապարհ կկառուցվի դեպի Մյասնիկյան պողոտա, որտեղ նախատեսվել է կառուցել նաև ուղեանց (էստակադա): Այս ճանապարհն էապես կթեթևացնի Մյասնիկյան պողոտայի վերին հատվածի ծանրաբեռնվածությունը, որտեղ առաջանում են Երևանի այս հատվածի ամենախիտ խցանումները: Այս մասշտաբային ծրագիրը նախատեսվել է 2023 թվականից:	կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	
19.	Նորք-Մարաշ համայնքը Սարալանջ փողոցին կապող շուրջ 1,5 կմ ճանապարհի կառուցում	Նորք-Մարաշ համայնքը Սարալանջ փողոցին կապող շուրջ 1,5 կմ ճանապարհի կառուցումը՝ էականորեն նվազեցնելու է Արմենակյան և հարակից փողոցների խցանումները: Բնակելի շրջանի և քաղաքի այլ հատվածների հետ կարճ տրանսպորտային կապ կստեղծվի: Արդյունքում հնարավոր կլինի համայնքի բնակչության տրանսպորտային միջոցների և հետիոտնի տեղաշարժի համար հարմար սպասարկում իրականացնել: Նորք-Մարաշ վարչական շրջանում Գարեգին Հովսեփյան փողոցը նոր ճանապարհով կմիանա Սարալանջի շրջանցիկ ճանապարհին: Այս նախագծով կառուցվող ճանապարհը դեպի Կենտրոն և Էրեբունի վարչական շրջաններ երթևեկելու այլընտրանքային ճանապարհ է:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	2024թ. շինարարական աշխատանքների ավարտ
20.	Երևան քաղաքում Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության նոր մարզադպրոցի կառուցում	Երևան քաղաքում առողջ ապրելակերպի խթանման, մարզական ոլորտի զարգացման, սպորտային գործառույթների կազմակերպման պայմանների բարելավում: Նախատեսվում է Ծիծեռնակաբերդի բարձունքի ստորոտի, Հրազդանի ձորում գտնվող մարզաառողջարանային հատվածում «Հրազդան» մարզադաշտն իր ենթակառուցվածքներով զարգացնել՝ կառուցելով նոր մարզադպրոց և նույն գործառնական նշանակությամբ ամբողջացնել: Մարզադպրոցը կառուցվելու է Հրազդանի կիրճ հ.4 հասցեում գտնվող «Հրազդան մարզահամալիր» ՓԲԸ-ին սեփականություն հանդիսացող հողամասի սահմաններում: Առկա է ՀՀ կառավարության 30.03.2023թ. N 402-Ն «Որպես նվիրատվություն գույք ընդունելու,	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), Ճանապարհային ոստիկանություն, ճանապարհա-տրանսպորտային ոլորտը	2024թ. հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա շինարարական աշխատանքների սկիզբ

		ՀՀ ՏԿԵ նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացնելու և Երևան համայնքին նվիրաբերելու մասին» որոշում: Հրազդանի կիրճ հ.4 հասցեում գտնվող 15509 քմ հողամասը Երևան համայնքին նվիրաբերվել է «Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նոր մարզաբազայի կառուցման նպատակով:	կառավարող և համակարգող մարմիններ և կազմակերպություններ, Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ	
21.	Երևան քաղաքի Կասկադ համալիրի տարածքում թանգարանի և հարակից հատվածի բարեկարգման ծրագիր	Ծրագրի նպատակն է ներկայումս նոր շնչով կյանքի կոչել Կասկադ-համալիր կառույցի (նախահեղինակ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նախորդող հեղինակների) գաղափարը, որը մասամբ իրականացվել է, սակայն մնացել անավարտ: Ամրապնդելով և ընդգծելով հիմնական ժառանգված քաղաքաշինական սկզբունքները (քաղաքի կենտրոնի հատակագծային կառուցվածքի կազմավորման հիմնական առանցքի վրա առկա դոմինանտային վայրը) նախատեսվում է Կասկադ-համալիրով քաղաքի հյուսիսային և կենտրոնական հատվածները (պատմականորեն բնակելի և մշակութային կենտրոնները) լանդշաֆտի կազմակերպման միջոցով՝ կանաչապատ առավել ակտիվ հանրային գոտիներով միմյանց կապել, այդպիսով Կասկադ ճարտարապետական-կոթողային համալիրը հասցնել ավարտուն տեսքի:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ Շրջակա միջավայրի և ՀՀ ՏԿԵ ՀՀԿԳՄՍ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմիններ), բնապահպանական, մշակութա-լուսավորչական ոլորտը կառավարող, համակարգող մարմիններ և կազմակերպություններ), Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ, «Գաֆեսճեան թանգարան» հիմնադրամ	2024թ. բարեկարգման աշխատանքների հայեցակարգի մշակում
22	Երևան քաղաքում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի խնդիրների լուծման և պատմական թաղամասերի վերակառուցման ուղղությամբ ծրագրային աշխատանքներ «Հին Երևան պատմաճարտարապ	Երևան քաղաքի կենտրոնում գոյություն ունեցող բնակելի խարխուլ ֆոնդի խնդիրների լուծում, բնակչության կենսամիջավայրի, բնակարանային պայմանների բարելավում, պատմական թաղամասերի կապիտալ վերակառուցում՝ ինժեներական հաղորդակցուղիների բարելավում: 1) «Հին Երևան» պատմաճարտարապետա-կան միջավայրի ստեղծում», 2) «Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում», 3) «Կոնդ թաղամասի վերակենդանացման ծրագիր»: Նշված ծրագրերին վերաբերող խնդիրների շուրջ քննարկումները շարունակվել են (նաև ՀՀ վարչապետի 13.04.2022թ. հ. 384-Ա որոշմամբ ստեղծված քաղաքաշինական ծրագրերը համակարգող խորհրդի հետ): Նախաձեռնության նպատակն է պահպանել	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ ՏԿԵ և ՀՀ ԿԳՄՍ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ պետական մարմիններ), Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար	2024 թվականի ընթացքում և շարունակական է

	ետական միջավայր»,«Երևանի 33-րդ թաղամասի (Ֆիրդուսի) վերակառուցում», «Կոնդ թաղամասի վերակենդանացման ծրագիր»	պատմական թաղամասի ինքնատիպ կերպը և այն համատեղել քաղաքային նոր միջավայրին ու ավանդույթներին:	կազմակերպություններ, միջազգային կազմակերպություններ, ներդրողներ	
23	Հին Նորք թաղամասի վերակենդանացում	Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման համատեքստում, վարչական շրջանները վերակենդանացնել՝ ենթակառուցվածքները վերակառուցել, տրանսպորտային և հետիոտն շարժումները դարձնել անվտանգ, հարմարավետ, մատչելի, առկա պատմամշակութային և բնական ժառանգության ռեսուրսները վերականգնել և պահպանել, միաժամանակ ապահովելով տվյալ շրջանի տնտեսական զարգացմանն ուղղված (նաև զբոսաշրջության զարգացման) ծրագրերի իրականացումը: Հին Նորք թաղամասի ենթակառուցվածքները փոփոխել, սալիկապատել թաղամասի կոլորիտին համապատասխան, մշակել Հին Նորքի պահպանման և զարգացման մառանային տնտեսություններին օժանդակելու և թաղամասը՝ որպես Երևանի զբոսաշրջային կենտրոններից մեկը դարձնելու զարգացման ծրագիր:	ՀՀ պետական կառավարման մարմիններ (ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ ՏԿԵ և ՀՀ ԿԳՄՍ նախարարություններ, ՀՀԱԳ Կադաստրի կոմիտե, ՀՀ Քաղաքաշինության կոմիտե և այլն, համապատասխան ոլորտին առնչվող մասնագիտական եզրակացություն կամ համաձայնություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ պետական մարմիններ), Հանրային ծառայություններ մատուցող/մատակարար կազմակերպություններ, մասնավոր ներդրողներ, միջազգային կազմակերպություններ	2024թ. ենթակառուցվածքների վերականգնում, փոփոխություն և այլն
«Երևանի կառուցապատման և ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ				
1.	Երևանի Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ճանապարհահատվածի կառուցում (Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր, քաղաքային նոր ենթակառուցվածք)	Երևան քաղաքի կենտրոնի երթևեկության բեռնաթափման լուծում է, կկրճատվի երթևեկության տևողությունը և կնվազեն խցանումները: Նախագիծը ներառում է Իսակով պողոտայից Արշակունյաց պողոտա ճանապարհահատվածի կառուցում: Կկառուցվեն Իսակով պողոտայի վրա առկա ճանապարհային հանգույցի բացակայող թևերը և կապահովվի մուտք դեպի Նորագյուղ թաղամաս և Հրազդան գետի վրա կառուցվելու է 269 մ երկարությամբ երկաթբետոնե հեծաններով կամուրջ: Արշակունյաց պողոտայում կառուցվելու է թունելային անցմամբ և շրջանաձև երթևեկությամբ ճանապարհային հանգույց: Հիմնական ճանապարհի երկարությունը 1,86 կմ է (իջատեղերով՝ 6,57 կմ): Ճանապարհը հիմնականում բաղկացած է 6 երթևեկելի գոտուց (3x3), որտեղ ճանապարհի երևեկելի հատվածի	Երևանի քաղաքապետարան և Ասիական զարգացման բանկ	2024-2026թթ.

		լայնությունը կազմում է 24,5 մ: Ճանապարհահատվածի ազդեցության տակ ընկնող բոլոր գույքերը ենթակա են օտարման:		
2.	Երևանի էներգաարդյունավետության ծրագիր 1 (Երևանի քաղաքապետարանի ենթակայության հ.156 մանկապարտեզում շինարարական աշխատանքների, ինչպես նաև թվով 35 մանկապարտեզներում հորիզոնական միջոցառումների իրականացման մեկնարկ)	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում (հ. 156) իրականացնել սեյսմիկ ամրացում, էներգաարդյունավետության բարձրացում և վերակառուցում, որի արդյունքում կկրճատվեն հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, տեղի կունենա արտանետվող CO_2 գազի նվազեցում, ինչպես նաև կբարձրանա սեյսմիկ զինվածության մակարդակը: Բացի վերը նշվածից, դեռևս 2023թ-ի հունվարի 31-ին Երևանի քաղաքապետարանն «Արհովշին» ՍՊԸ-ի հետ ստորագրել է պայմանագիր, որի շրջանակներում 35 մանկապարտեզներում իրականացվելու են հորիզոնական միջոցառումներ (արևային վահանակների, արևային ջրատաքացուցիչների, կաթսաների և LED լուսատուների տեղադրում):	Եվրոպական ներդրումային բանկ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամ /E5P/, Երևան համայնք	2020-2025թթ.
3.	Երևանի էներգաարդյունավետության ծրագիր 2 (Երևանի քաղաքապետարանի ենթակայության թվով 32 մանկապարտեզներում և 6 պոլիկլինիկաներում իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման և սեյսմիկ ամրացման աշխատանքներ)	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի ենթակայության 32 մանկապարտեզներում և 6 պոլիկլինիկաներում իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման և սեյսմիկ ամրացման աշխատանքներ, որոնց արդյունքում կկրճատվեն հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, տեղի կունենա արտանետվող CO_2 գազի նվազեցում, ինչպես նաև կբարձրանա սեյսմիկ զինվածության մակարդակը:	ԵՄ, Եվրոպական ներդրումային բանկ, E5P	2024-2026թթ.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ	
Մարզական կազմակերպություններ	36
Աշխատողների քանակ	959
Երեխաների քանակ	9358

Երևան համայնքի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվում են առողջարարական, զանգվածային, միջազգային, մարզական և երիտասարդական միջոցառումներ, որոնք միտված են բնակչության առողջ ապրելակերպի խթանմանը, մայրաքաղաքի ուժեղագույն մարզիկների բացահայտմանն ու հավաքական թիմերի ձևավորմանը, տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատության և ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու մատչելիության ապահովմանը, երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը, համայնքի մարզական և երիտասարդական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի աջակցմանն ու խրախուսմանը, մայրաքաղաքում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խրախուսմանը և համայնքում կամավորական մշակույթի խթանմանը, երիտասարդական կազմակերպությունների և երիտասարդական նախաձեռնությունների համայնքի կառավարման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացմանը, երիտասարդական նախաձեռնությունների, հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խթանմանը, Երևան համայնքի երիտասարդների հասարակական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության խրախուսմանը:

Կատարվում են աշխատանքներ ի նպաստ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջ ապրելակերպի քարոզչության իրականացմանը, մանկապատանեկան մարզադպրոցների նյութատեխնիկական բազայի համալրմանը, ֆիզկուլտուրային-առողջարարական, մարզական և ուսումնական բազաների պահպանմանն ու նպատակային օգտագործմանը, նոր ուսումնամարզական բազաների կառուցմանը, հաշմանդամների շրջանում ֆիզկուլտուրային և մարզական ծրագրերի իրականացմանը, համայնքային մանկապատանեկան մարզական կազմակերպությունների մարզիկների ու Երևան համայնքի հավաքական թիմերի՝ հանրապետական առաջնություններին և միջազգային մրցումներին մասնակցությանը:

Երևան քաղաքում գործում են մարզական միություններ, մարզական ակումբներ, մարզադաշտեր, թենիսի կորտեր, հրաձգարաններ, ստադիոններ, մարզադահլիճներ, նետաձգարան, աթլետիկական մանեժ, հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի ջրամբարներ, մարզամշակութային կենտրոններ, ձիարշավարան, բազմագործառութային փոքր դաշտեր:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են տարբեր մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, միջազգային մրցաշարեր, հուշամրցաշարեր, առողջարարական, զանգվածային միջոցառումներ:

2016 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանն իրականացնում է արտադպրոցական (մարզական) կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագրեր:

36 մարզական կազմակերպություններից ութն ունեն թեքահարթակներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Երիտասարդները Երևան համայնքի առավել դինամիկ հատվածն են, ուստի անհրաժեշտ է երիտասարդներին ներգրավել համայնքի կառավարման գործընթացում և նրանց մասնակից դարձնել քաղաքի ամենատարբեր խնդիրների լուծմանը՝ օգտագործելով երիտասարդների ստեղծարար և նորարարական գաղափարները՝ հանուն համայնքի զարգացման:

Հիմնախնդիրներ

1. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման համար իրավական և տնտեսական մեխանիզմի մշակում և իրագործում,
2. Բնակչության ֆիզիկական դաստիարակության համակարգի արդյունավետ գործունեության բարձրացման և զարգացման համար պայմանների ստեղծում,
3. Օլիմպիական և պարալիմպիկ խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին և այլ խոշոր միջազգային մրցաշարերին մասնակցելու համար համայնքի մարզիկների արդյունավետ նախապատրաստման ապահովում,
4. Մարզիչների և մարզիկների վերապատրաստում և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութատեխնիկական բազայի զարգացում,
5. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջազգային կապերի ընդլայնում,
6. Ոլորտը համակարգող անձնակազմի կարողությունների և հմտությունների զարգացում,
7. Պետական, համայնքային, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետության բարձրացում,
8. Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծում,
9. Մայրաքաղաքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում,
10. Երիտասարդների աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղղությամբ արհմիությունների հետ համագործակցության հաստատում,
11. Համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի աջակցում ու խրախուսում, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններին և երիտասարդական նախաձեռնություններին համայնքի կառավարման գործընթացին մասնակցության մակարդակի բարձրացում,
12. Մայրաքաղաքում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խրախուսում և համայնքում կամավորական մշակույթի խթանում,
13. Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության մշակում,
14. Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն, երիտասարդության ոլորտում Երևան համայնքի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացում և վերջիններիս իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավում,
15. Երևան համայնքի և հասարակական ու պետական կառույցների համագործակցության արդյունքում Երևանի երիտասարդական և մշակութային համայնքային կենտրոնների ստեղծում կամ առկա մշակութային կենտրոնների վերափոխում,
16. Երևան համայնքի երիտասարդների շրջանում իրենց կյանքի տարբեր ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Արտադպրոցական դաստիարակություն (մարզադպրոցներ)	Առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացում, բարձրակարգ մարզիկների պատրաստում:	ՀՀ այլ մարզերի համապատասխան ստորաբաժանումների, հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ ԿԳՄՍ նախարարություն/, Երևանի քույր քաղաքների հետ	2024 թվականի հունվար-դեկտեմբեր
2.	Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման միջոցառումների ծրագրի և ժամանակացույցի մշակում և ծրագրի մեկնարկ	Բարձրացնել Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցներում մարզիկների ընդգրկման աստիճանը և մատուցվող ծառայությունների որակը:	Միջազգային և հասարակական կազմակերպություններ, ֆեդերացիաներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, մարզադպրոցներ	2024 թվականի հունվար-դեկտեմբեր
3.	Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզադպրոցների տնօրենների, փոխտնօրենների, մեթոդիստների և մարզչական անձնակազմի համար վերապատրաստման դասընթացների կազմակերպում	Զարգացնել Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցների անձնակազմի կարողությունները և մասնագիտական գիտելիքները:	Միջազգային և հասարակական կազմակերպություններ, ֆեդերացիաներ, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ԲՈՒՀ-եր, մարզադպրոցներ	2024 թվականի հունվար-դեկտեմբեր
4.	Սպորտային միջոցառումների կազմակերպում	Առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացում և զարգացում, առողջության ամրապնդում ու պահպանում, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացում:	ՀՀ մարզերի համապատասխան ստորաբաժանումների, հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ ԿԳՄՍ նախարարություն/, Երևանի քույր քաղաքների, հաշմանդամություն ունեցող անձանց,միջազգային մարզական կազմակերպությունների հետ	2024 թվականի հունվար-դեկտեմբեր
5.	Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերում	Մարզական կազմակերպությունների աշխատանքների արդյունավետության բարձրացում:	ՀՀ-ում գրանցված շահագրգիռ կազմակերպություններ	2024 թվականի հունվար-դեկտեմբեր
6.	Երիտասարդական նորարարական ծրագրերի ֆինանսավորում	Երևան համայնքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական կազմակերպությունների նորարարական ծրագրերի ֆինանսավորում, որոնք ուղղված կլինեն	Հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կազմակերպությունների և կառույցների, երիտասարդ կամավորների հետ	2024 թվականի հունվար-դեկտեմբեր

		Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրով նախանշած խնդիրների լուծմանը՝ նորարարական լուծումների միջոցով:		
7.	Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում	Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի երիտասարդների հասարակական, քաղաքացիական, սոցիալ- տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության խրախուսում:	Հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների, մարզային երիտասարդական կառույցների, երիտասարդ կամավորների հետ	2024 թվականի օգոստոս
8.	Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպում	Երևան համայնքի երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի և կամավորության մշակույթի խթանում:	Հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների, երիտասարդական կառույցների, երիտասարդ կամավորների հետ	2024 թվականի դեկտեմբեր

ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ

Հաշվի առնելով ժամանակի պահանջները՝ այժմ դժվար է պատկերացնել քաղաքային տնտեսության որևիցե ոլորտ, ուր իրենց հետքը չեն թողել տեխնոլոգիական զարգացումներն ու նորարարական լուծումները, ինչի արդյունքում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում ավելի արդյունավետ կազմակերպվում և իրականացվում է քաղաքային ենթակառուցվածքների զարգացման գործընթացը:

Երևանի քաղաքապետարանը, հավատարիմ մնալով զարգացման նախանշված սկզբունքներին և ընդունված տեսլականին, հետևողականորեն իրականացնում է ենթակառուցվածքների կառավարման, ոլորտների գործառույթների և տրամադրվող ծառայությունների թվային փոխակերպումը: Այս գործընթացը շարունակական է և ենթադրում է մշտական և նպատակաուղղված աշխատանք: Տվյալ պահին նպատակի ձևաչափը սահմանվում է 2019 թվականին ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի գրասենյակի աջակցությամբ մշակված քաղաքային տնտեսության ոլորտների թվային փոխակերպման՝ «ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ռազմավարական ծրագրով: Այն հիմնական ուղենիշ է հանդիսանալու ներդրվող և բարելավվող համակարգերի, առաջնահերթությունների և դրանց կառուցվածքային սկզբունքների համար: Հիմք ընդունելով այս ռազմավարությունը՝ մշակվել է Երևանի թվային փոխակերպման հնգամյա ծրագիրը:

Առաջնորդվելով վերոնշյալ ռազմավարությամբ՝ վերջին տարիների ընթացքում մշակվել և ներդրվել են բազմաթիվ գործառույթների ավտոմատացման, կառավարման, վերահսկման, տեղեկատվական և անվտանգության համակարգեր, շարունակական սպասարկում և զարգացում են ունեցել արդեն իսկ ներդրված համակարգերը, գործարկվել են մի շարք էլեկտրոնային ծառայություններ:

Հիմնախնդիրներ

1. Թվայնացման արդյունքում առաջացող կիբեր անվտանգության ապահովում,
2. Տեխնոլոգիական համակարգերի մատակարար ընկերություններից առաջացող կախվածություն,
3. Ոլորտի մասնագետների սղություն և դրանց պահանջարկի անընդհատ մեծացող տեմպեր,
4. Անձնական տվյալների պաշտպանություն,
5. Քաղաքային տնտեսության ոլորտների աշխատակիցների տեխնոլոգիական գիտելիքների պակասի հետևանքով անհրաժեշտ ՏՏ համակարգի տեխնիկական պահանջների մշակման անկարողություն:

2023թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	«E-Services» էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակ	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները. 1) էլեկտրոնային ծառայության տրամադրում շուրջ 800 000 քաղաքացիների, 60 000 կազմակերպությունների, 2) ծառայությունների որակի և թափանցիկության բարելավում, 3) օգտատերերի գործարքների տվյալների հավաքագրում և վերլուծություն, 4) եկամուտների ավելացում, 5) «Մեկ պատուհան» ծառայության ծանրաբեռնվածության նվազեցում՝ ծառայության ազատականացման միջոցով, 6) «Թեժ գծի» ծառայության ծանրաբեռնվածության նվազեցում, 7) էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակ քաղաքային 150 ծառայությունների համար, 8) մեկ գրանցում բոլոր ծառայություններից օգտվելու համար, 9) օգտատիրոջ գրասենյակ, 10) էլեկտրոնային դրամապանակ, ինքնաշխատ վճարումների ժամանակացույց, 11) անձնավորված ծանուցումներ, 12) օգնություն և կապ, 13) մատչելի դիզայն:	Համաշխարհային Բանկ (World BANK), ՄԱԶԾ (UNDP), «ՋԻ ԱՅ ՋԵԹ» (GIZ) GmbH), Գործընկեր քաղաքներ, Ընկերություններ	2024 թվականի ընթացքում
2.	Քաղաքային խնդիրների տեղեկացման և բնակչության հետ փոխգործակցության հարթակ	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները. 1) խնդիրների լուծման ժամկետի կրճատում և վերահսկողության բարելավում, 2) քաղաքային ծառայությունների որակի բարելավում, 3) տվյալահեն որոշումների ընդունում, 4) քաղաքային խնդիրների տեղեկացման (կոորդինատ և լուսանկար) հարթակ, 5) տեղեկատվության ուղիղ փոխանցում կատարողին, 6) վերահսկում և վերլուծություն: Ծրագրի պոտենցիալ օգտատերերն են շուրջ 800 000 քաղաքացիներ, 60 000 կազմակերպություններ, 1000 քաղաքապետարանի աշխատակիցներ:	Համաշխարհային Բանկ (World BANK), ՄԱԶԾ (UNDP), «ՋԻ ԱՅ ՋԵԹ» (GIZ) GmbH), Գործընկեր քաղաքներ, Ընկերություններ	2024 թվականի ընթացքում
3.	GIS Platform տարածատեղեկատվական	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները. 1) տարածական տվյալներ մշակող և գեներացնող հետևյալ	Համաշխարհային Բանկ (World BANK), ՄԱԶԾ (UNDP), «ՋԻ ԱՅ ՋԵԹ» (GIZ) GmbH),	2024 թվականի ընթացքում

	միասնական հարթակ, տարածական տվյալներ մշակող 10 ոլորտների համար	ոլորտների բիզնես պրոցեսների թվայնացում՝ քաղաքաշինություն բնապահպանություն, աղբահանություն, լուսավորություն, տրասնպորտ, կոմունալ տնտեսություն, բարեկարգում, առևտուր և սպասարկում, արտաքին գովազդ, քաղպաշտպանություն, 2) տարածական տվյալների գեներացման ճշտության բարելավում, 3) բիզնես պրոցեսների արագացում, 4) ծառայության որակի և թափանցիկության բարելավում, 5) տարածական տվյալների շերտերի համադրումով և վերլուծություններով նոր արժեքի (տվյալների) ստեղծում, 6) տվյալահեն որոշումների ընդունում, 7) տարածական տվյալների միասնական հարթակ, 8) առցանց ինտեգրում Կադաստրի գեոպորտալի հետ, 9) թեմատիկ GIS-ի ադապտացված արտադեմեր՝ համապատասխան բիզնես պրոցեսների ավտոմատացումով՝ 10 ոլորտների համար, 10) քաղաքի թվային կրկնօրինակ՝ City Twins:	Գործընկեր քաղաքներ, Ընկերություններ	
4.	Մարդկային ռեսուրսների կառավարման (HRM) միասնական հարթակ քաղաքապետարանի և ենթակա շուրջ 470 կառույցների համար	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները. 1) գործընթացների արագացում և արդյունավետության բարձրացում, 2) ՄՌԿ բաժինների և շուրջ 31000 աշխատակիցների փոխգործակցության բարելավում հարթակի միջոցով, 3) ատեստավորման և կադրերի ընտրության գործընթացների թափանցիկության բարելավում, 4) կադրային տվյալների, տեղաշարժերի, պրոֆեսիոնալ աճի վերլուծություն, 5) տվյալահեն որոշումների կայացում, 6) միասնական հարթակ շուրջ 470 կառույցների համար, 7) ՄՌԿ գործառույթների ավտոմատացում հենված բնակչության ռեգիստրի, պետ ռեգիստրի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախ. Ռեգիստրի, հաշվապահության,«Մալբրի» E-doc flow-ի, Անցագրային համակարգի և այլ համակարգերի հետ, 8) աշխատակցի արդյունավետության գնահատում:	Համաշխարհային Բանկ (World BANK), ՄԱԶԾ (UNDP), «ՋԻ ԱՅ ԶԵԹ» (GIZ) GmbH), Գործընկեր քաղաքներ, Ընկերություններ	2024 թվականի ընթացքում
5.	Համայնքի նկատմամբ պարտավորությունների	Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործառույթները. 1) գործառույթների ավտոմատացում եկամուտների հավաքագրման, իրավաբանական և քարտուղարության	Համաշխարհային Բանկ (World BANK), ՄԱԶԾ (UNDP), «ՋԻ ԱՅ ԶԵԹ» (GIZ) GmbH), Գործընկեր քաղաքներ,	2024 թվականի ընթացքում

	ինքնաշխատ հաշվառման և ծանուցումների տրամադրման հարթակ	ոլորտներում, 2) ռեսուրսների խնայողություն, 3) եկամուտների ավելացում, 4) հաշվետվողականության բարելավում, 5) տվյալահեն որոշումների կայացում, 6) համայնքի նկատմամբ պարտավորությունների հաշվառման համակարգ՝ ինտեգրված բնակչության ռեգիստրի, պետ ռեգիստրի, Pay.e-community.am-ի,Vector+ի, գանձապետարանի հետ, 7) ինքնաշխատ ծանուցումներ:	Ընկերություններ	

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՂՄԱՆՆ ՈՒ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Քաղաքներն օգտագործում են աշխարհի էներգիայի մատակարարման մեծ մասը և պատասխանատու են էներգիայի հետ կապված ջերմոցային գազերի գլոբալ արտանետումների՝ շուրջ 70 % համար: Ջերմոցային գազերի արտանետումների աճող մակարդակն արդեն հանգեցնում է կլիմայի փոփոխության: Ուստի, ներկայումս կլիմայի փոփոխության դեմ պայքարի շրջանակներում շատ կարևոր է քայլեր ձեռնարկել քաղաքային միջավայրում բարձրացնելու էներգախնայողության և էներգաարդյունավետության մակարդակը և զարգացնել վերականգնվող էներգետիկան՝ կրճատելով CO_2 արտանետումների մակարդակը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանը զգալի քայլեր է ձեռնարկել կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման, էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և կլիմայի հարմարվողականության հատուկ միջոցառումների իրականացման ուղղությամբ: Մշակվել են ռազմավարական ծրագրեր, որոնք նախադեպային են այս տարածաշրջանում:

Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել և իրականացվում վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառման, բազմաբնակարան և հասարակական շենքերի ջերմամեկուսացման, էներգաարդյունավետության մակարդակի բարձրացման, տրանսպորտային համակարգի արդիականացման և խելացի լուծումների կիրառման ուղղությամբ:

Հիմնախնդիրներ

1. Կլիմայի փոփոխության ազդեցության, վերականգնվող էներգետիկայի աղբյուրների կիրառման, էներգախնայողության և հարմարվողականության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ,
2. Վերականգնվող էներգետիկայի զարգացմանը և վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառմանն ուղղված քաղաքականության իրականացում, վերականգնվող ռեսուրսների մասշտաբային օգտագործման անհրաժեշտություն,
3. Համայնքային ենթակայության շենքերում էներգասպառման մոնիթորինգի համակարգի և էներգետիկ տվալների շտեմարանի բացակայություն,
4. Ջերմոցային գազերի արտանետման ծավալների վերաբերյալ տվյալների միասնական հարթակի բացակայություն:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Կայուն էներգիայի շաբաթ Երևանում	Եվրոպական միության Կայուն էներգիայի շաբաթն ավանդաբար կազմակերպվող և բարձր վարկանիշ ունեցող գործողությունների շարք է, որի նպատակն է մարդկանց իրազեկումը կլիմայի փոփոխության, էներգախնայողության, վերականգնվող էներգետիկայի և հարմարվողականության վերաբերյալ: Երևանի քաղաքապետարանը, միանալով միջոցառմանը, կազմակերպում է ոլորտային իրազեկվածության բարձրացմանն ուղղված հանրային մի շարք ծրագրեր՝ ներգրավում է տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների:	Եվրոպական միություն	2024 թվականի ընթացքում
2.	Տեղական բաց կառավարման գործընկերության շրջանակում գործողությունների ծրագիր	Նախատեսվում է մշակել «Տեղական բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակում Երևանի 2024 թվականի համար նախատեսված Գործողությունների ծրագիրը՝ քաղաքացիական հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:	ՔՀԿ-ներ, ՀԿ-ներ, քաղաքացիներ, ԲԿԳ Վաշինգտոնյան գրասենյակ	2024 թվականի ընթացքում
3.	Էներգետիկ կառավարման բաժնի ներդնում	Երևան համայնքի էներգետիկ կառավարման աշխատանքներն առավել արդյունավետ և հասցեական կազմակերպելու նպատակով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության հաստիքները նախատեսվել է ավելացնել թվով 4 միավորով, մասնավորապես՝ մեկ բաժնի ավելացում-համալրում: Բաժինն անվանվել է Էներգետիկ կառավարման բաժին և ունենալու է չորս աշխատակից, մասնավորապես՝ մեկ բաժնի պետ, մեկ գլխավոր մասնագետ և երկու առաջատար մասնագետ՝ ունենալով էներգետիկ, տնտեսագիտական ու հարակից մասնագիտությունների որակավորումներ: Էներգետիկ կառավարման համակարգի հիմնական նպատակը Երևանի քաղաքապետարանի ենթակայության ընկերությունների/կազմակերպությունների շենքերում և շինություններում, հանրային լուսավորության համակարգերում էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների համակարգումն է, հարմարավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումն ու էներգաարդյունավետության ներուժի գնահատումը, վառելիքաէներգետիկ ռեսուրսների և ջրի սպառման ծավալների կառավարման, վերահսկման ու մոնիտորինգի իրականացման ապահովումը: Այն ներառելու է էներգիայի արտադրության և սպառման գործընթացների պլանավորում, կազմակերպում, սարքավորումների ու համակարգերի շահագործում և պահպանում, ինչպես նաև սպառման ցուցանիշների մշտական հասանելիություն և ծախսարդյունավետության	ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակ	2024 թվականի ընթացքում

		ապահովում:		
4.	Քաղաքի ներդրումային պորտֆոլիոյի մշակում	Քաղաքի ներդրումային գրավչությունը բարձրացնելու նպատակով միջազգային լավագույն փորձի կիրառմամբ նախատեսվում է մշակել ներդրումային պորտֆոլիո:	Մասնավոր ներդրողներ, միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա ներդրողներ	2024 թվականի ընթացքում

ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանը գտնվում Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ Հրազդան գետի աջ ափին: Շրջանը կազմավորվել է 1950-ական թվականներին և ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Աջափնյակ վարչական շրջանի բնակչությունը կազմում է 109,2 հազ. մարդ, որը կազմում է Երևանի բնակչության 10,2 %-ը, այն զբաղեցնում է 2582 հա տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 11,6%-ը:

Վարչական շրջանն ընդգրկում է Սիլիկյան, Նորաշեն, Նազարբեկյան, Գ-1, Վ-3, Վահագնի թաղամասերը, Հալաբյան, Մարգարյան, Շինարարների, Բաշինջաղյան, Լենինգրադյան, Շիրազի, Հասրաթյան փողոցներով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Հիմնախնդիրներ

1. Տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցողների համար ենթակառուցվածքների (թեքահարթակների) ստեղծում,
2. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում,
3. Էլեկտրական մալուխների կարգավորում բազմաբնակարան շենքերի մուտքերում,
4. Հանգստի գոտիների ստեղծում,
5. Աջափնյակ վարչական շրջանում գործող բոլոր մանկապարտեզների հիմնանորոգում,
6. Մարզադպրոցի նոր շենքի կառուցում,
7. Վարչական շրջանի 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքների իրականացում,
8. Կոյուղագծերի, շենքերի ջրագծերի նորոգում և հիմնանորոգում,
9. Շրջանի որոշ բնակավայրերում գազաֆիկացման և լուսավորության ցանցի արդիականացում,
10. Վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում,
11. Դեռևս չլուսավորված բակերում և փողոցներում արտաքին լուսավորության ապահովում, վթարային էլեկտրասյուների փոխարինում նորերով,
12. Բազմաբնակարան շենքերում բնակֆոնդի պահպանման, վերանորոգման աշխատանքների իրականացմանն ուղղված աջակցության ապահովում,
13. Կանաչապատում, ոռոգման ջրագծերի կապիտալ վերանորոգում և նորերի անցկացում,
14. Շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանների բարելավում,
15. Գյուղմթերքների շուկայի և արդյունաբերական ապրանքների տոնավաճառի կառուցում,
16. Աղբավայրի մեկուսացում (մեր կողմից ավելացրած),
17. Վերելակային տնտեսության արդիականացում (մեր կողմից ավելացրած):

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտը**
1.	Սպորտային միջոցառումների անցկացման ծրագիր	Համայնքի տարածքում պետական ծրագրերի իրագործումը, նախադպրոցական, դպրոցական, արտադպրոցական և այլ ուսումնական հաստատություններում ֆիզիկական կուլտուրայի ուսուցումը, վարչական շրջանի բնակչության շրջանում ֆիզկուլտուրային, առողջարարական և մարզական միջոցառումների կազմակերպումը, մանկապատանեկան մարզադպրոցի ցանցի ընդլայնումը և մարզաձևերի զարգացումը:	Աջափնյակ վարչական շրջանը համագործակցում է վարչական շրջանում գործող ՀՈԱԿ-ների, ՊՈԱԿ-ների, ինչպես նաև այլ վարչական շրջանների հետ	Ըստ 2024 թվականի կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
2.	Մշակութային միջոցառումների անցկացման ծրագիր	Վարչական շրջանի տարածքում պետական մշակութային քաղաքականության իրականացումն է, համայնքի կողմից ստեղծված մշակութային կազմակերպությունների գործունեության կազմակերպումը, մշակութային օբյեկտների շահագործման և նորոգման աշխատանքները, ՀՀ տոների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև վարչական շրջանի կողմից ազգային արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանն աջակցելը:	Աջափնյակ վարչական շրջանը համագործակցում է ՀՈԱԿ-ների, ՊՈԱԿ-ների, ինչպես նաև այլ վարչական շրջանների հետ	Ըստ 2024 թվականի կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
3.	Նախադպրոցական	1) Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման նպատակով մանկապարտեզներին, մանկավարժական համակազմերի համալրում՝ համապատասխան մասնագետներով: 2) Համընդհանուր ներառման ծրագրի շրջանակում՝ մասնագետների վերապատրաստում՝ համագործակցելով շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ:	Փորձի փոխանակում, սեմինարներ՝ փորձագետների ներգրավմամբ	2024 թվականի հունվարից-դեկտեմբեր
4.	Ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման ծրագիր	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար: Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի գույքագրում, կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, խճե հիմքի իրականացում և	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Շինարարության և բարեկարգման վարչություն,Վեոլիա ջուր ՓԲԸ, Հայաստանի էլեկրական ցանցեր ՓԲԸ,Գազպրոմ Արմենիա ՓԲԸ,Թիմ Տելեկոմ	2024 թվականի ապրիլ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

		ասֆալտ-բետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում: Նոր թաղամասերի կառուցմանը զուգընթաց առաջանում է նոր փողոցների կառուցման և ասֆալտապատման անհրաժեշտությունը:Նախատեսված է իրականացնել 33000 քմ մակերեսով գրունտային ճանապարհների ասֆալտապատում:	Արմենիա ԲԲԸ,Երևանի Էլեկտրոտրանսպորտ ՓԲԸ	
5.	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վերանորոգում, որի մեջ մտնում է վնասված հատվածների իզոգամներով նորոգում: Վարչական շրջանում հաշվառված 448 բազմաբնակարան շենքերից 173-ը հարթ տանիքով բարձրահարկ շենքեր են՝ 122,000 քմ մակերեսով: Շրջանում առկա 16 մանկապարտեզների հարթ տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 14,200 քմ: Նախատեսված է իրականացնել 5000 քմ մակերեսով բ/բ շենքերի հարթ տանիքների նորոգում:	Շենքերը կառավարող մարմինների հետ	2024 թվականի մարտ-սեպտեմբեր կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
6.	Բազմաբնակարան շենքերի լանջավոր տանիքների վերանորոգման ծրագիր	Նախատեսվում է իրականացնել Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի լանջավոր տանիքների վերանորոգում և հիմնանորոգում: Վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերի լանջավոր տանիքների վերանորոգումը կատարվում է հիմնականում վնասված ազբոհերցաքարերը նորերով փոխարինմամբ, իսկ առավել մեծ վնասվածություն ունեցող տանիքներն ամբողջությամբ քանդվում են և կառուցվում է նորը: Նախատեսվում է մասնակի վերանորոգման համար հատկացվող ազբոհերցաքարերի փոխարեն յուրաքանչյուր տարի հատկացվեն 4000-4500 քմ ալիքավոր թիթեղ: Բացի տարեկան հիմնանորոգվող լանջավոր տանիքներից, որը կազմում է 800-1000 քմ շրջանում առկա 272 թեք լանջավոր բնակելի շենքերի մակերեսը կազմում է 278,156 քմ: Նախատեսված է իրականացնել 4400 քմ մակերեսով բ/բ շենքերի թեք տանիքների նորոգում:	Շենքերը կառավարող մարմինների հետ	2024 թվականի ապրիլ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
7.	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման ծրագիր	Նախատեսվում է իրականացնել Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովման նպատակով: Ծրագիրը ներառում է վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի	Շենքերը կառավարող մարմինների հետ	2024 թվականի մարտ-նոյեմբերի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված

		վերանորոգում, որը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորերով: Վարչական շրջանում հաշվառված է 1345 շքամուտք: Վերանորոգման կարիք ունեն 256 մուտք: Նախատեսված է իրականացնել 50 մուտքի վերանորոգում:		ժամանակացույցի
8.	Եզրաքարերի վերանորոգման ծրագիր	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների, մայթերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով: Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների մայթերի բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում, նոր կառուցված թաղամասերում (Վ-3,Լուկաշինի թաղ., Գ-1, Ռումինական) նոր եզրաքարերի տեղադրում: Նախատեսված է իրականացնել 4600գծմ եզրաքարերի տեղադրման աշխատանքներ:	Երևանի քաղաքապետարանի բարեկարգման վարչության հետ	2024 թվականի մարտ-հոկտեմբերի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
9.	Մայթերի և հրապարակների գեղարվեստական սալիկների տեղադրման աշխատանքների իրականացման ծրագիր	Նախատեսվում է իրականացնել Աջափնյակ վարչական շրջանի մայթերի և հրապարակների գեղարվեստական սալիկների տեղադրման աշխատանքներ: Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի փողոցների մայթերի և հրապարակների գեղարվեստական սալիկների վերանորգում և տեղադրում, որը ներառում է հին վնասված սալիկների փոխարինում, նոր փոխարինված եզրաքարերով մայթերի սալիկապատում: Նախատեսված է իրականացնել 6000 քմ մակերեսով սալիկապատման աշխատանքներ:	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Շինարարության և բարեկարգման վարչություն	2024 թվականի մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
10.	Բակային տարածքների հիմնանորոգման ծրագիր	Նախատեսվում է իրականացնել բնակիչների համար հանգստի բարենպաստ պայմանների ստեղծում՝ քաղաքային գույքի կահավորման, խաղերի տեղադրման, կանաչ տարածքների ավելացման միջոցով: Առկա անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների (հիմնական բակային և միջբակային) հիմնանորոգում: Վարչական շրջանում կհիմնվի 200 բակային տարածք, որի արդյունքում կիրականացվեն անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների բարեկարգում, մասնավորապես՝ կանաչ տարածքի վերականգնում, անցուղիների պատրաստում, ոռոգման ցանցի մոնտաժում կամ վերագործարկում, եզրաքարերի նորոգում, թեքահարթակների և	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի Շինարարության և բարեկարգման վարչություն և ենթակառուցվածքները սպասարկող կազմակերպություններ	2024 թվականի մարտ-նոյեմբերի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

		աստիճանների պատրաստում, խաղերի, զրուցատաղավարների, սպորտային մարզագույքի տեղակայում: Նախատեսված է իրականացնել թվով 15 բակային տարածքների հիմնանորոգում:		
11.	Աջափնյակ վարչական շրջանի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին սոցիալական ծրագրերի իրականացում	Նախատեսվում է իրականացնել Աջափնյակ վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար կարիքին համապատասխան որակյալ սոցիալական ծառայությունների տրամադրում, երեխաների պաշտպանություն, վարչական շրջանի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր, բազմազավակ, բազմանդամ երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն, հասարակական կազմակերպություններին աջակցություն: 2024թ. ընթացքում սոցիալական աջակցության կարիք ունեցող բազմազավակ ընտանիքներին կտրամադրվի անհրաժեշտ կենցաղային իրեր: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների և երեխաների, ինչպես նաև տարեցների համար կկազմակերպվի էքսկուրսիաներ: Գիտելիքի օրվա առթիվ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաներին կտրամադրվի պայուսակներ և գրենական պիտույքներ: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին կտրամադրվի պարենի փաթեթներ, հիգիենայի պարագաներ, անկողնային պարագաներ:	Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ, անհատ բարերարներ	2024 թվականին կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ավան վարչական շրջանում փողոցների ընդհանուր երկարությունը 55392 մ է, ասֆալտ-բետոնե ծածկի ընդհանուր մակերեսը՝ 720000 քմ, որից 695000 քմ ասֆալտպատված է, 25000 քմ՝ ենթակա է ասֆալտապատման, բակային տարածքները՝ 55000 քմ է, որից 40000 քմ վերանորոգված է (աշխատանքները կրում են շարունակական բնույթ յուրաքանչյուր տարի առաջացած թերությունների հետևանքով), 15000 քմ՝ ենթակա է վերանորոգման:

Վարչական շրջանում տեղադրված է 1415 նստարան, 742 աղբաման, 102 զրուցարան, 378 մարզական գույք, 304 խաղային գույք: Վարչական շրջանում առկա է 56 լուսավորված փողոց: Վարչական շրջանում առկա է 257 բազմաբնակարան շենք: Հարթ տանիքների ընդհանուր մակերեսը 88336 քմ է, որից վերանորոգված են 53200 քմ, ենթակա են վերանորոգման ՝ 35136 քմ (աշխատանքները կրում են շարունակական բնույթ յուրաքանչյուր տարի առաջացած թերությունների հետևանքով), թեք տանիքների ընդհանուր մակերեսը՝ 16020 քմ, որից վերանորոգված է 14820 քմ, ենթակա է վերանորոգման՝ 1200 քմ, վերելակների ընդհանուր թիվը կազմում է 381, որից 189-ը՝ նոր վերելակներ են, 192-ը՝ ենթակա է փոխարինման, շենքերի մուտքերի թիվը՝ 375 է, որից վերանորոգված են 322-ը, 53-ը՝ ենթակա են վերանորոգման (աշխատանքները կրում են շարունակական բնույթ յուրաքանչյուր տարի առաջացած թերությունների հետևանքով):

Վարչական շրջանի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը 27 հա է, սիզամարգերը՝ 6,5 հա, ծաղկային տարածքները՝ 0,5 հա, ծառատնկված վայրերը՝ 1,15 հա, առկա է 7000 ծառ, 9,8 հա զբոսայգիներ, 9,46 հա պուրակներ: Ոռոգման ցանցի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 8000 գծմ:

Վարչական շրջանի տարածքում գործում են 7 նախադպրոցական, 3 մշակութային, 2 սպորտային հաստատություններ: 7 նախադպրոցական հաստատություններից հիմնանորոգված է թիվ 57 մանկապարտեզը, նախագծվում է թիվ 51 մանկապարտեզը, իսկ թիվ 56-ը նախատեսված է վերանորոգել ՄԱԿ-ի զարգացման ծրագրով, թիվ 52, 53, 54, 55 մանկապարտեզներն ունեն հիմնանորոգման կարիք: Վերանորոգված են Ավանի մշակույթի տունը և Գ.Բուդաղյանի անվան արվեստի դպրոցը, Ավանի թիվ 1 գրադարանը վերանորոգված է:

Հիմնախնդիրներ

1. Կոյուղագծերի հիմնանորոգման ,
2. Սանմաքրման և աղբահանության աշխատանքների որակի բարելավում,
3. Վերելակների ամբողջական փոխարինման կամ անվտանգ աշխատանքի ապահովում,
4. Փողոցների, բակերի և մայթերի ասֆալտապատում, բարեկարգում և պահպանում, նոր գրունտային փողոցների և մայթերի ասֆալտապատում,
5. Բակային տարածքների, այգիների, պուրակների և խաղահրապարակների ստեղծում, հների պահպանում,
6. Բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացում, պատուհանների և դռների փոխարինում,
7. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգում,

8. Փողոցներում և բակային տարածքներում արտաքին լուսավորության պահպանում, վթարային հենասյուների փոխարինում,
9. Ոռոգման ցանցի ընդլայնման և բարելավման անհրաժեշտություն,
10. Խորքային հորերի ավելացման անհրաժեշտություն,
11. Դեկորատիվ ծառերի և թփերի տեսականու ավելացում,
12. Կանաչապատ տարածքների պահպանման և խնամքի, հանգստի գոտիների ստեղծում, ընդլայնում, այգիների բարեկարգում և կանաչապատում,
13. Առնվազն մեկ նոր մարզադպրոցի շենքի կառուցում,
14. Առնվազն երկու մսուր-մանկապարտեզների նոր շենքերի կառուցում և առնվազն 4 մսուր-մանկապարտեզների հիմնանորոգում,
15. Ավան վարչական շրջանի հ. 201 հիմնական դպրոցի հիմնանորոգում, գույքի արդիականացում ժամանակին համահունչ,
16. Ավանի 7 մսուր մանկապարտեզների բակերի բարեկարգում, կանաչապատում և ոռոգման ջրի արդիականացում,
17. ՆՈՒՀ-երում ներառել մանկավարաժահոգեբանական աշխատանքային խմբեր, ինչպես նաև ապահովել մանկավարժական կադրերի վերապատրաստումն ու ատեստավորումը,
18. Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչներին անվճար հետազոտության և բժշկական խորհրդատվության տրամադրման պարբերական ակցիաների կազմակերպում,
19. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ ու բավարար պայմանների ապահովում,
20. Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում	Վարչական շրջանի փողոցների, մայթերի և միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ և կապիտալ վերանորոգում՝ բնակիչների համար հարմարավետ բակեր, խաղահրապարակներ և երթևեկելի անվտանգ ճանապարհներ ու մայթեր ապահովելու նպատակով: Ավան վարչական շրջանի փողոցների, մայթերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված տեխ.պայմանների: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտ-բետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, խճե հիմքի իրականացում և ասֆալտապատում՝ 20000 քմ:		2024թ. ըստ կնքված պայմանագրով սահմանված ժամանակացույցի
2.	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում	Ավան վարչական շրջանի բնակիչների՝ մեծահասակների և փոքրերի համար հանգստի և խաղերի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների թարմացում և ընդարձակում: Ծրագիրը նախատեսում է թվով 10 բակային տարածքների կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ բակերում մայթերի եզրաքարերի վերանորոգում, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում, ռետինե հատակների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով կստեղծվեն նոր սիզամարգեր, կիրականացվի ծառատունկ, ծաղկապատում, ոռոգման գծերի վերականգնում:		2024թ. ըստ կնքված պայմանագրով սահմանված ժամանակացույցի
3.	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում	Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում: Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված 7500 քմ հարթ տանիքների հիմնանորոգում իզոգամով: Կիրականացվի հին վնասված շերտի քանդում, ցեմենտավազե հարթեցնող շերտի	Համատիրություն	2024թ. ըստ կնքված պայմանագրով սահմանված ժամանակացույցի

		իրականացում, նոր իզոգամի տեղադրում, օդափոխության խողովակների վրա մետաղական ծածկի տեղադրում:		
4.	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում	Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում: Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի թվով 22 մուտքերի բոլոր հարկերի վերանորոգում: Կիրականացվի մուտքերի հարկերի և աստիճանավանդակների վերանորոգում, քայքայված գաջե շերտի հեռացում, գիպսոնիտով պատերի և առաստաղի հարթեցում, ծեփամածիկում, ներկում լատեքսով և յուղաներկով: Նոր պատուհանների տեղադրում:	Համատիրություն	2024թ. ըստ կնքված պայմանագրով սահմանված ժամանակացույցի
5.	Վարչական շրջանի տարածքում աստիճանների հիմնանորոգման աշխատանքներ	Ավան վարչական շրջանի բնակիչների համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, բարեկարգ պայմանների ապահովում: Առկա աստիճանների քանդում, բետոնե և բազալտե աստիճանների կառուցում մոտ 600 քմ, ասֆալտապատում, անհրաժեշտ տեղերում լուսավորության ապահովում:		2024թ. ըստ կնքված պայմանագրով սահմանված ժամանակացույցի
6.	Մշակութային միջոցառումներ	Մշակութային ժառանգության պահպանում և փոխանցում սերունդներին, տոն և հիշատակի օրերին, ազգային ծեսերի, ավանդույթների վերաբերյալ իրազեկում երիտասարդության շրջանում, ժողովրդական ստեղծագործությունների խրախուսում և տարածում: Անցկացվող մշակութային միջոցառումների միջոցով բնակիչների հետաքրքիր և բովանդակալից առօրյայի կազմակերպում, բակային մրցույթների, խաղերի և բակային ճամբարների կազմակերպմամբ երեխաների զբաղվածության ապահովում, ընկերական հարաբերությունների ձևավորում: Ծրագիրը նախատեսում է մշակույթի տան, գրադարանի, կրթական, մշակութային այլ հաստատությունների և կազմակերպությունների գործունեությունը կազմակերպելու, շենքային պայմանների բարելավում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում և նորագույն տեխնոլոգիաների ներդրում:	Արարատյան հայրապետական թեմ, բարեգործական կազմակերպություններ, ՀԿ-ներ և ՀՈԱԿ-ներ	Տարվա ընթացքում ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
7.	Կրթական միջոցառումներ	Ծրագրի նպատակն է ունենալ էլ ավելի կրթված ու նպատակասլաց երիտասարդներ, ինչպես նաև ծրագրում ներգրավել սոցիալական տարբեր խմբերի ընտանիքների երեխաներ:	Արարատյան հայրապետական թեմ, բարեգործական կազմակերպություններ, ՀԿ-ներ ՀՈԱԿ-ներ և ՊՈԱԿ-ներ	Տարվա ընթացքում ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի

8.	Սպորտային միջոցառումներ	Ավան վարչական շրջանի բնակիչների ներգրավվածությունը սպորտային կյանքին, առողջ ապրելակերպի խրախուսում և ֆիզիկապես ամուր և առողջ երիտասարդության ձևավորում, մեծահասակների մասնակցություն մարզական միջոցառումներին:	Հասարակական կազմակերպություններ, ՀՈԱԿ-ներ և ՊՈԱԿ-ներ	Տարվա ընթացքում ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
9.	Ավան վարչական շրջանի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	Ավան վարչական շրջանի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտնաբերված սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի պլանավորում, ինչպես նաև ծառայությունների կազմակերպում և իրականացում: Նպաստել զոհված և վիրավոր ազատամարտիկների ընտանիքների կենսամակարդակի բարելավմանը: Տոն և հիշատակի օրերին միջոցառումների կազմակերպում՝ ուղղված հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացմանը: Անհատական սոցիալական ծրագրերով սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում սոցիալական աջակցության կարիք ունեցող և պատերազմից տուժած ընտանիքներին (տանիքի, սանհանգույցի, բնակարանի վերանորոգում, պատուհանների փոխարինում նորերով, լամինատապատում և այլն): Ելնելով հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացման, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին ոչ ոքի չանտեսելու սկզբունքից՝ նախատեսվում է իրականացնել միջոցառումներ տոն և հիշատակի օրերին (օր՝ Մայրության տոն, Ընտանիքի օր, Երեխաների պաշտպանության օր, Տարեցների օր, Հաշմանդամների օր, Ամանոր, էքսկուրսիաների կազմակերպում):		Տարվա ընթացքում ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
10.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին: Բազմազավակ ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում (կենցաղային տեխնիկա): Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին բնաիրային փաթեթների տրամադրում: Անհատական սոցիալական ծրագրերով սոցիալական աջակցության տրամադրում բազմազավակ ընտանիքներին (տանիքի, սանհանգույցի, բնակարանի վերանորոգում, պատուհանների փոխարինում նորերով, լամինատապատում և այլն):		Տարվա ընթացքում ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի

11.	Երեխաների շահերի պաշտպանության ծրագիր	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին տրամադրվող աջակցության միջոցով հոգածության դրսևորում, ստեղծված իրավիճակի հաղթահարում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին բնաիրային փաթեթների տրամադրում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին գրենական պիտույքների տրամադրում:		Տարվա ընթացքում ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
12.	Ավան վարչական շրջանի հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում	Վարչական շրջանում բնակվող հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում:	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	Տարվա ընթացքում ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի

ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Արաբկիր վարչական շրջանի փողոցների ընդհանուր երկարությունը 85642 գծմ է, որոնց մակերեսը կազմում է 1308164 քմ, որից 1279964 քմ վերանորոգվել է, իսկ 38,97 հազ.քմ ենթակա է ասֆալտապատման: Բակային տարածքները կազմում են 350000 քմ, վերանորոգվել են 36360 քմ, վերանորոգման ենթակա՝ 42100 քմ: Վարչական շրջանում տեղադրված են 1669 նստարան, 688 աղբաման, 124 զրուցարան, 79 մարզական գույք և 293 խաղային սարք: Առկա է 117 փողոց, որից 116-ը լուսավորված է, իսկ 1-ը՝ ոչ: Եզրաքարերի ընդհանուր երկարությունը 196977գծմ է, որից 2564 գծմ վերանորոգվել է 2021-2022 թթ., 4812 գծմ՝ վերանորոգվելու է, հենապատերի ընդհանուր թիվը 62-ն է, վերանորոգվել է 17 հենապատ, անհրաժեշտ է վերանորոգել 12-ը: Կառուցվելու և վերանորոգվելու է 236 թեքահարթակ: Վարչական շրջանում առկա են 723 բազմաբնակարան շենքեր, որոնցից հարթ տանիքների մակերեսը կազմում է 199000 քմ, 33000 քմ ունի վերանորոգման կարիք, թեք տանիքներինը՝ 418136 քմ, վերանորոգման կարիք ունեն մոտ 46380 քմ: Բազմաբնակարան շենքերում առկա է 546 վերելակ, դրանցից 96 հատ փոխարինվել են նորով, վերանորոգվել է 24 հատ, 300-ը՝ վերանորոգման կարիք ունի: Շրջանում առկա է 2085 բազմաբնակարան շենքերի մուտքեր, 254-ը ունեն վերանորոգման կարիք:

Արաբկիր վարչական շրջանում գործում է 13 մանկապարտեզ, որոնցից 9-ը (հ. 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 34) վերանորոգված են, 2-ը գտնվում են հիմնանորոգման մեջ (22,23), իսկ մյուս 2-ը (24, 33) ենթակա են վերանորոգման: Առկա է երկու երաժշտական դպրոց (Ալ. Հեքիմյանի անվան և Կ. Սարաջյանի անվան): Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոցը ենթակա է վերանորոգման, իսկ Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոցը ենթակա է մասնակի վերանորոգման (տանիք): Վարչական շրջանն ունի երկու գրադարան (թիվ 5 և թիվ 6): Թիվ 5 գրադարանը վերանորոգված է, թիվ 6 գրադարանը ենթակա է մասնակի վերանորոգման: Շրջանում գործում է 5 մարզադպրոց ՀՈԱԿ-ներ («Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի հեծանվասպորտի մարզադպրոց»): «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց», Երևանի Ալբերտ Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց», «Երևանի Արաբկիրի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ները վերանորոգված են: «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը ենթակա է մասնակի վերանորոգման:

Երևանի Արաբկիր վարչական շրջանում գործում են 20 հանրակրթական դպրոցներ, որից 17-ը՝ հիմնական դպրոց, 3-ը՝ ավագ դպրոց, 2 երաժշտական դպրոց /197 աշխատող, մոտ 1015 աշակերտ/, թվով 13 մանկապարտեզներում գործում է 79 խումբ՝ մոտ 1801 երեխա-հաճախումով և 379 աշխատողներով: Վարչական շրջանի թիվ 22, 23, 25, 31, 32, 33 մանկապարտեզները գտնվում են տիպային շենքերում, թիվ 24, 26, 30-ը՝ եռահարկ առանձին հարմարավետ շենքերում, թիվ 27, 28, 29-ը՝ զբաղեցնում են հինգ հարկանի բնակելի շենքերի առաջինից երկրորդ հարկերի որոշակի տարածք, իսկ «հ. 34 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը զբաղեցնում է «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն ՊՈԱԿ-ի շենքի 1-ին հարկը: Բոլոր մանկապարտեզներն

ապահովված են մասնագիտական կադրերով, որոնք էլ ապահովում են հիմնարկների աշխատանքային նորմալ ընթացքը: «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը» և «Ա. Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ–ները գտնվում են առանձին հարմարավետ շենքերում, իսկ «Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը»՝ Կոմիտաս 16/4 հասցեում: Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի, սուսերամարտի և շախմատի մանկապատանեկան մարզադպրոցները գազաֆիկացված և հիմնանորոգված են: Մարզադպրոցներում գործող 122 խմբերում ընդգրկված են մոտ 1525 սաներ, մարզաձևերի թիվը 10-ն է, աշխատողների թիվը՝ 96: Մարզադպրոցներն ապահովված են մասնագիտական որակյալ կադրերով:

Վարչական շրջանում գործող «թիվ 5 գրադարան» ՀՈԱԿ-ը գտնվում է 5 հարկանի բնակելի շենքի կիսանկուղային հարկում, իսկ «թիվ 6 գրադարան» ՀՈԱԿ-ը՝ 5 հարկանի բնակելի շենքի 1-ին հարկում, գրական ֆոնդը՝ 56700, աշխատողների թիվը՝ 13:

Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժնում հաշվառված են Հայրենական Մեծ Պատերազմի 4 վետերան, հաշմանդամություն ունեցող անձով 119 ընտանիք, Արցախի առաջին պատերազմում զոհված 78 ազատամարտիկներ և զինծառայողներ, 44-օրյա պատերազմում զոհված 64 զինծառայողներ և պահեստազորայիններ, Արցախի առաջին պատերազմի 84 մասնակից, Արցախի առաջին պատերազմում վիրավորում ստացած կամ հաշմանդամություն ձեռք բերած 50 մասնակից, քառօրյա պատերազմում զոհվածի 2 ընտանիք, բազմազավակ, սոցիալական աջակցության կարիք ունեցող 17 ընտանիք, միայնակ մոր 34 երեխա, միակողմանի ծնողազուրկ 41 երեխա, երկու՝ երկկողմանի ծնողազուկ երեխա, Արցախից տեղահանված 174 ընտանիք՝ 358 անձ: Արաբկիր վարչական շրջանում գործում է 1 բարեգործական ճաշարան՝ «Արշավիր և Պայծառ Աբրահամյանների», որի ծառայություններից օգտվում է շուրջ 100 սննդի աջակցության կարիք ունեցող բնակիչ:

Երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինը համագործակցում է «Արաբկիր» բարեգործական ճաշարանի հետ, որտեղ սնվում է վարչական շրջանի 25 բնակիչ, «ՍՕՍ-Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ՝ սոցիալապես անապահով արաբկիրցի ընտանիքներին տարաբնույթ աջակցությունների տրամադրման, նրանց հայտնաբերելու և տվյալները տեղեկատվական շտեմարանում ընդգրկելու հարցում: Արաբկիր վարչական շրջանի տարածքում գործում է 9 հասարակական կազմակերպություն, բարեգործական կազմակերպություն և բարեգործական հիմնադրամ: Արաբկիր վարչական շրջանում գործում է 3 պոլիկլինիկա, որոնցից 1-ը՝ մանկական, քաղաքային էնդոկրին դիսպանսերը և 6 մասնավոր հիվանդանոց, այդ թվում զինվորական հոսպիտալ, 1 ակնաբուժական կլինիկա, 38 ատամնաբուժարան, որոնց միջոցով իրականացվում է շրջանի բնակչության բժշկական սպասարկումը, ինչպես նաև բազմաթիվ այլ բժշկական ծառայություններ մատուցող կառույցներ՝ ախտորոշիչ լաբորատորիաներ, բժշկական հետազոտություններ իրականացնող հաստատություններ:

Հիմնախնդիրներ

1. Բակային տարածքների ամբողջական բարեկարգում, ներառյալ միջբակային տարածքների լուսավորում, ասֆալտապատում և ոռոգման ցանցերի արդիականացում, եզրաքարերի վերանորոգում,

2. Կանաչ տարածքների և ոռոգման ցանցի ընդլայնում, նոր պուրակների, ջրավազանների ստեղծում,
3. Տեղաշարժման սահմանափակ հնարավորություններ ունեցողների համար ենթակառուցվածքների (թեքահարթակներ) ստեղծում (բոլոր սուբյեկտները), անվտանգ տեղաշարժն ապահովելու համար ստորգետնյա և վերգետնյա անցումների ընթացիկ նորոգում և կառուցում, փողոցները մայթերից առանձնացող բազրիքների տեղադրում,
4. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի թարմացում,
5. Հարթ և թեք տանիքների վերանորոգում, կախովի պատշգամբների ընթացիկ նորոգում,
6. Հեղեղատարերի և կոյուղատար խողովակների վերանորոգում և բացակայողների կառուցում,
7. Հենապատերի ընթացիկ և հիմնական նորոգում,
8. Բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրագծերի ներքին ցանցերի նորոգում, մուտքերի վերանորոգում,
9. Տրանսպորտային նոր հանգույցների ստեղծում,
10. Քաղաքաշինական միջավայրի բարելավում և արդյունավետ հողօգտագործման ապահովում,
11. Վերելակային տնտեսության ուսումնասիրություն և հիմնանորոգում, սպասարկման ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառում, բակերի ընթացիկ նորոգում, բոլոր վթարային դիտահորերի վերակառուցում,
12. Հին բնակֆոնդի՝ շենքերի կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն, մասնավորապես՝ շենքերի պատշգամբները պահող կոնստրուկցիաների և համապատասխան միջոցների ձեռնարկում,
13. Փողոցներում վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում,
14. Ավտոմոբիլային ճանապարհային ցանցի թեթևացում, նոր ճանապարհների և շրջանցող խճուղիների նախատեսում, ավտոտնակների կենտրոնացում, նոր ստորգետնյա և վերգետնյա ավտոկայանատեղիների և անթույլատրելի տեղերում գտնվողների ապամոնտաժում,
15. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ հիմնանորոգում («Երևանի հ. 24 և 33 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ), մասնակի վերանորոգում «Երևանի հ. 27 մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, թիվ 6 գրադարանը, «Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը), տանիքի վերանորոգում («Կ. Սարաջյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ), բակերի բարեկարգում, այդ թվում՝ եզրաքարերի վերանորոգում, ասֆալտապատում, ցանկապատում, ոռոգման ցանցի կարգավորում, կանաչապատում, տաղավարների և բակային խաղերի տեղադրում («Երևանի հ. 25, 26, 30, 31 և 34 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներ), վերանորոգում («Ալ. Հեքիմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը), գազաֆիկացում («Երևանի Արաբկիրի խաղային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը),

16. Կրթօջախների համապատասխան գույքի թարմացում (գրասեղաններ, աթոռներ, վարագույրներ, մարզագույք, համազգեստ, երաժշտական գործիքներ, գրադարանային գույք, ժամանակակից ընթերցողական պահանջարկին համապատասխան գրականություն),
17. Գրադարանների արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերում, ժամանակակից գրականության համալրում, նյութատեխնիկական վերազինում, ջերմային ռեժիմի ստեղծում՝ գրքերը պահպանելու համար,
18. Բազմազավակ, երիտասարդ և այլ սոցիալական խմբերին պատկանող ընտանիքների կարիքին համապատասխան կենցաղային տեխնիկայի և կահույքի տրամադրում,
19. Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաների ամառային հանգստի, մշակութային և ժամանցի վայրեր այցելության կազմակերպում, լողավազանի աբոնեմենտների, հագուստի, սննդի, հիգիենայի պարագաների, թատրոնի տոմսերի, ձմեռվա ամիսներին վառելափայտի, դպրոցահասակ երեխաներին գրենական պիտույքների տրամադրում,
20. Հարազատ չունեցող անձանց կամ հարազատին կորցրած սոցիալական աաջակցության կարիք ունեցող ընտանիքների անդամների հուղարկավորության կազմակերպում,
21. Գերմանական Կարմիր Խաչի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական հիմնադրամի հետ համագործակցություն,
22. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ապահովում՝ թեքահարթակների կառուցում, բազմաբնակարան շենքերի մուտքերի և դպրոցների աստիճանավանդակների հարմարեցում հաշմանդամներին տեղաշարժվելու համար,
23. Սոցիալապես անապահով բնակիչներին պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնություն ստանալու համար միջնորդագրի հատկացում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Բարելավել ճանապարհների և միջբակային տարածքների ա/բ ծածկի վիճակը, վերացնել առաջացած փոսերը և ջարդվածքները: Ասֆալտապատման աշխատանքներ Արաբկիր վարչական շրջանի տարածքում 25300 քմ, հասցեականությունն ըստ վարչական շրջանի ղեկավարի պատվեր-առաջադրանքի:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
2.	Եզրաքարերի վերանորոգում	Բարելավել ճանապարհների և մայթերի եզրաքարերի վիճակը, փոխարինել շարքից դուրս եկած եզրաքարերը նորերով: Եզրաքարերի վերանորոգում Արաբկիր վարչական շրջանի տարածքում, այդ թվում՝ Բաբայան, Գրիբոյեդով, Փափազյան, Գյուլբենկյան, Ադոնց, Շիրվանզադե և Մամիկոնյանց ընդամենը 1040 գծմ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
3.	Հենապատերի վերանորոգում	Ապահովել հենապատերի անվտանգությունը: Հենապատերի վերանորոգում՝ Կիևյան 11, Փափազյան 2-րդ նրբանցք ընդամենը՝ 690 քմ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
4.	Հրազդանի կիրճի բարեկարգում (մաքրում)	Տարածքի պատշաճ սանիտարական վիճակը: Հրազդանի կիրճի բարեկարգում (մաքրում):	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
5.	Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում	Ապահովել չնախատեսված և հրատապ լուծում պահանջող աշխատանքների իրականացումը և ծառայությունների մատուցումը: Աշխատանք՝ 63 տեսակի Ծառայություն՝ 15 տեսակի:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
6.	Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում	Վերանորոգել քայքայված և շարքից դուրս եկած ներքին ջրագծերը և կոյուղագծերը: Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի նկուղներում ներքին ցանցի վերանորոգում այդ թվում՝ Կոմիտաս 38/1, Արծրունի 88, Արծրունի 90, Կիևյան 2, Կիևյան 10, Կիևյան 18, Արաբկիր 25 փ. 2/1:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
7.	Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)	Վարչական շրջանի տարածքում իրականացնել պայքար՝ կրծողների և վնասակար միջատների դեմ: Արաբկիր վարչական շրջանի 13 հատ մանկապարտեզ, 3 մարզադպրոց, 2 գրադարան, 13 սեփական	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված

		տնատիրություն, 32 հատ կառավարման մարմին չունեցող շենքեր:		ժամանակացույցի
8.	Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում	Վարչական շրջանի տարածքում իրականացնել հասարակական զուգարանների սպասարկում: Հասարակական զուգարանների սպասարկում Դավթյանի անվան զբոսայգի:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
9.	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում	Օգնություն համատիրություններին բազմաբնակարան շենքերի պահպանության, տանիքների ջրամեկուսացման հարցում: Թեք տանիքների վերանորոգման համար անհրաժեշտ ալիքավոր և հարթ թիթեղների ձեռքբերում,այդ թվում՝ Ալիքավոր -3200 քմ, հարթ-200 քմ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
10.	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի պահպանության, թեք տանիքների հիմնանորոգում: Կոմիտաս 54՝ 3220 քմ Կոմիտաս 44՝ 1560 քմ	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
11.	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում, կահավորում, արդիականացում: Բակերի հիմնանորոգում ՝ Վ. Համբարձումյան 7 և 9 շ.-երի բակ, Վաղարշյան 1 և 3 շ.-երի բակ, Կոմիտաս 22 շ.բակ, Մամիկոնյանց 62 շ.բակ, Քանաքեռ ՀԷԿ-ի այգում շների զբոսանքի համար սահմանազատված տարածք, Գյուլբենկյան 39ա շենքի բակ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
12.	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում	Բակային տարածքների և խաղահրապարակների ընթացիկ վերանորոգում: Բակերի ընթացիկ վերանորոգում 25 հատ, հասցեականությունը ըստ վարչական շրջանի ղեկավարի պատվեր-առաջադրանքի:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
13.	Վթարային պատշգամբների նորոգում	Ապահովել պատշգամբների անվտանգությունը: Վթարային պատշգամբների նորոգում, այդ թվում՝ Գյուլբենկյան 22, բն. 5,26,45, Գյուլբենկյան 25, բն.19,20,23, Գյուլբենկյան 24, բն.79 Խաչատրյան 10, բն. 5,7,16,41,42,44, Խաչատրյան 12 բն. 98, Խաչատրյան 18, բն. 71 Խաչատրյան 21, բն.26,42Բ,60Բ, Խաչատրյան 29, բն. 50, Շահսուվարյան 3, բն. 7, Շահսուվարյան 4, բն. 6,10, Շահսուվարյան	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

		7, բն.8, Գրիբոյեդով 7, բն.37,39, Կոմիտաս 32, բն. 8, Կոմիտաս 30, բն. 6, Կոմիտաս 36, բն. 82, Կոմիտաս 45, բն.,19,20, 21, 24, Կոմիտաս 55, բն. 43, Կոմիտաս 61, բն. 53, Փափազյան 17, բն. 67, Փափազյան 26, բն. 27, Հակոբյան 4, բն. 42, Բաղրամյան 50Բ, բն. 9, Վաղարշյան 22, բն. 29, Քանաքեռ ՀԷԿ 6, բն. 24 /2 պատշգամբ/, Տոլբուխին 33/19, բն. 7, Տիգրանյան 6, բն. 36, Մամիկոնյանց 2, բն. 10 Մամիկոնյանց 25, բն. 38, ընդամենը՝ 45 պատշգամբ		
14.	Նստարանների և ցայտաղբյուրների վերանորոգում	Պատշաճ տեսքի բերել ցայտաղբյուրները և նստարանները: Վերանորոգել 100 հատ ցայտաղբյուր և 300 հատ նստարան:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
15.	Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում	Արդիականացնել գոյություն ունեցող կահավորումը: Կահավորել 12 կոմպլեկտ մանկական խաղերով, 100 հատ նոր նստարաններով և այլն:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
16.	Մշակութային միջոցառումների իրականացում	Մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների զանգվածային միջոցառումների կազմակերպում, ազգային մշակույթին նպաստող ծրագրերի իրականացում: Մշակույթի ոլորտում նախատեսվում են անցկացնել ՀՀ հիշատակի և տոն օրերին նվիրված մշակութային միջոցառումներ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
17.	Սպորտային միջոցառումների իրականացում	Բարձրացնել սպորտի դերն ու նշանակությունը վարչական շրջանի կազմակերպություններում, ունենալ ֆիզիկապես և բարոյապես ուժեղ սերունդ: Սպորտի ոլորտում նախատեսվում են անցկացնել մարզական միջոցառումներ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
18.	Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում	Աջակցել հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպմանը: Կազմակերպել հանգուցյալի հուղարկավորությունը, որի համար ծառայություններ մատուցող կազմակերպությանը ֆինանսական միջոցներ հատկացնել դիատարի, դագաղի և փոս փորելու ծառայությունների դիմաց:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
19.	Հարազատին կորցրած անձինք	Աջակցել հարազատին կորցրած անձանց կամ ընտանիքներին կազմակերպելու հարազատի հուղարկավորությունը: Կազմակերպել	Երևանի	2024 թվականի կնքված պայմանագրի

		հանգուցյալի հուղարկավորությունը, որի համար ծառայություններ մատուցող կազմակերպությանը ֆինանսական միջոցներ հատկացնել դիատարի, դագաղի և փոս փորելու ծառայությունների դիմաց:	քաղաքապետարան	ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
20.	Երեխաների շահերի պաշտպանությանն ուղղված սոցիալական ծրագրեր	Աջակցել սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին երեխաների կրթությունը պատշաճ կազմակերպելու, առողջությունը և հիգիենան պահպանելու հարցում: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաներին գրենական պիտույքների, մարզահագուստի, լողավազանի աբոնեմենտի, մանկական տակդիրների հատկացում:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
21.	Բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված կարիքին համապատասխան աջակցության տրամադրում: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների կենսամակարդակի բարելավմանն ուղղված ծրագրերի կազմում և իրականացում, ծառայությունների մատուցում, միջոցառումների կազմակերպում:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
22.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված կարիքին համապատասխան աջակցության տրամադրում: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին անհրաժեշտ բնաիրային աջակցության տրամադրում՝ կենցաղային տեխնիկա, կահույք, սնունդ, հիգիենայի պարագաներ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դավթաշեն վարչական շրջանի փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 71,3 կմ: Ասֆալտ-բետոնե ծածկի ընդհանուր մակերեսը՝ 542500 քմ, որից ասֆալտապատված տարածքը՝ 514500 քմ, իսկ ասֆալտապատման ենթակա՝ 35000 քմ: Բակային տարածքների ընդհանուր թիվը կազմում է 68 հատ, որից վերանորոգված է 46 բակային տարածք, վերանորոգման ենթակա՝ 36:

Վարչական շրջանում տեղադրված նստարանների ընդհանուր թիվը կազմում է 842 հատ, աղբամաններինը՝ 575, զրուցարաններինը՝ 127, մարզական գույքինը՝ 306, խաղային գույքինը՝ 149: Եզրաքարերի երկարությունը 130200 գծմ է: Դավթաշեն վարչական շրջանում հենապատերը 10-ն են, որից 4-ը վերանորոգված է, 6-ը՝ վերանորոգման ենթակա:

Վարչական շրջանում առկա է թվով 195 բազմաբնակարան շենք, որից 5-ը նորակառույց են: Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները կազմում են 115000 քմ, որոնք տարիների ընթացքում գրեթե բոլորը վերանորոգվել են, սակայն կապված պիտանելիության ժամկետի հետ, ենթակա են վերանորոգման շուրջ 15000 քմ հարթ տանիք, թեք տանիքներ ունեն թվով 3 բազմաբնակարան շենքեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2800 քմ, որից 1-ը վերանորոգված է:

Վերելակային տնտեսությունում առկա են 415 վերելակներ, որից 20-ը նորակառույց շենքերում են տեղադրված, իսկ մնացած 395 վերելակից 158-ը փոխարինված են: Բազմաբնակարան շենքերի մուտքերը թվով 380-ն են, որից վերանորոգվել են թվով 278 մուտք, իսկ 2023թ. դրությամբ վերանորոգման ենթակա են 201-ը:

Դավթաշեն վարչական շրջանի կանաչ տարածքների, սիզամարգերի և ծաղիկների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 23 հա:

Դավթաշեն վարչական շրջանում գործում է թվով 6 դպրոց (4 հիմնական, 1 միջնակարգ և 1 ավագ), 5 մանկապարտեզ, 1 գրադարան (հ. 40), 1 շախմատի դպրոց, 1 արվեստի դպրոց (Ավետ Տերտերյանի անվան):

Վարչական շրջանում բնակվում է միայնակ, անժառանգ, անկողնային, սոցիալապես անապահով թվով 122 տարեցներ, Արցախյան առաջին ազատամարտի 29 զոհված ազատամարտիկներ և 27 վիրավոր, հաշմանդամություն ունեցող ազատամարտիկների սոցիալապես անապահով ընտանիքներ, չորս և ավել երեխաներ ունեցող, բազմազավակ, սոցիալապես անապահով թվով 18 ընտանիք, սիրիահայ փաստացի բնակվող 28 ընտանիք, բազմազավակ, բազմանդամ, հաշմանդամություն ունեցող, միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ ընտանիքներ, արցախյան պատերազմի մասնակիցների ընտանիքներ, միայնակ անկողնային, անժառանգ տարեցներ, վետերաններ, ՄՄԾ–ում հաշվառված նպաստառու թվով՝ 979 ընտանիքներ: Արցախյան ազատամարտի մասնակիցների, ԵԿՄ անդամների սոցիալապես անապահով ընտանիքների թիվը 80-ն է:

Վարչական շրջանում բնակվող սոցիալապես անապահով հաշմանդամություն ունեցող չափահասների և անչափահասների թիվը 148-ն է: Վարչական շրջանում բնակվում են թվով 979 Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքներ: Քառասունչորսօրյա պատերազմում զոհված 34 և վիրավորում ստացած 37 մասնակից:

Հիմնախնդիրներ

1. Նոր ճանապարհների կառուցման անհրաժեշտություն, մասնավորապես՝ Սասնա Ծռեր-Աղաբաբյան փողոցները կապող հատված, Տ. Պետրոսյանի վերջնամասից 2-րդ թաղամասի ետնամասով Աղաբաբյան փողոց տանող շրջանցիկ հատված,
2. Փողոցների, այգիների, բակային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների բարձր մակարդակով կազմակերպման անհրաժեշտություն,
3. Մելքումովի սեփական սեկտորի 1-ին և 2-րդ թաղամասերի վերին հատվածի, Ձոր 2-րդ և 3-րդ թաղամասի, գյուղի սեփական սեկտորի տարածքում ջրահեռացման համակարգի ստեղծման, արտաքին լուսավորության անցկացման, ինչպես նաև գրունտային ճանապարհների ասֆալտապատման անհրաժեշտություն,
4. Ոռոգման ցանցի արդիականացման անհրաժեշտություն,
5. Վերելակների վերանորոգման անհրաժեշտություն,
6. Կանաչ տարածքների ընդլայնման, ծառերի տնկման, հանգստյան գոտիների ստեղծման անհրաժեշտություն,
7. Համատիրությունների գործունեության խիստ վերահսկման անհրաժեշտություն,
8. Դպրոցների ճաշարանների վերահսկման անհրաժեշտություն,
9. Տանիքների վերանորոգման անհրաժեշտություն,
10. Վերգետնյա և ստորգետնյա անցումների ոչ բավարար քանակ,
11. Դավթաշեն վարչական շրջանի սեփական սեկտորում կառուցել նոր մանկապարտեզ,
12. Դավթաշեն վարչական շրջանում աշխատակազմի համար վարչական շենքի կառուցում,
13. Բարեգործական ճաշարանի կառուցում կամ համապատասխան շենքի տրամադրում,
14. Երևանի հ՝ 59 մսուր-մանկապարտեզի հիմնանորոգում,
15. Բոլոր մսուր-մանկապարտեզներում ոռոգման ցանցի անցկացում,
16. Մսուր-մանկապարտեզներում մեթոդակաբինետների հարստացում, մարզական գույքի, նոր խաղալիքների ձեռքբերում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Վարչական շրջանի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր	Վարչական շրջանի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտնաբերված կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի պլանավորում, ինչպես նաև ծառայությունների կազմակերպում և իրականացում: Տոն և հիշատակի օրերին միջոցառումների կազմակերպում՝ ուղղված հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացմանը: Բնակիչների կենսամակարդակի բարելավում:	Երևանի քաղաքապետարան	2024-2025թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
2.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին: Բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում (կենցաղային տեխնիկա, կահույք և այլն)*:* Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին բնաիրային փաթեթների տրամադրում:	Երևանի քաղաքապետարան	2024-2025թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
3.	Երեխաների շահերի պաշտպանության ծրագիր	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում, դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում, լողավազանի աբոնեմենտի և այլ պարագաների տրամադրում, էքսկուրսիայի կազմակերպում, երեխաների շահերի պաշտպանություն:	Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ	2024-2025թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
4.	Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպման ծրագիր	Ծրագիրն ուղղված է Դավթաշեն վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին օգնություն ցուցաբերելուն: Ծրագիրը ներառում է հարազատ չունեցող անձանց և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար հուղարկավորության ծախսերի մասնակի ապահովում:	Երևանի քաղաքապետարան	2024-2025թթ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
5.	Դավթաշեն վարչական շրջանում	Վարչական շրջանում մշակութային կյանքի ակտիվացում, բնակիչների շրջանում հետաքրքիր և բովանդակալից առօրյայի կազմակերպում,	Վարչական շրջանի կրթամշակութային	2024 թ. յուրաքանչյուր տարի

	մշակութային միջոցառումների անցկացում	մշակութային արժեքների ձևավորում և բարձրացում, ՀՀ տոների և հիշատակի օրերի, ազգային տոնակատարությունների, ավանդույթների, եկեղեցական տոների վերաբերյալ իրազեկում, երիտասարդության շրջանում ժողովրդական ստեղծագործությունների խրախուսում և տարածում, մշակութային ժառանգության պահպանում և փոխանցում սերունդներին: ՀՀ պետական, ազգային և եկեղեցական տոների կազմակերպում և անցկացում բնակչության ներգրավմամբ:	կազմակերպություններ, Արարատյան հայրապետական թեմ, անհատներ	կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
6.	Դավթաշեն վարչական շրջանում սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում	Վարչական շրջանում առողջ ապրելակերպի քարոզում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացում, սպորտի դերի և նշանակության բարձրացում, երեխաների զբաղվածության ապահովում, շնորհալի պատանիների հայտնաբերում, բնակչության ներգրավածություն սպորտային կյանքին, ֆիզիկապես պատրաստված երիտասարդության ձևավորում: Ուսումնամարզական ծրագրերի իրականացման միջոցով բնակչության շրջանում առողջ ապրելակերպի քարոզում, տարբեր տարիքային խմբերի բնակիչների ընդգրկում մարզական մրցույթներում:	ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ, մարզադպրոցներ, բնակչություն	2024 թ.կնքված պայմանգրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
7.	Դավթաշեն վարչական շրջանում կրթական միջոցառումների կազմակերպում	Կրթական միջոցառումների կազմակերպմամբ մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորում, ազգային և համամարդկային արժեքները պահպանող, արժանապատիվ և կրթված երիտասարդների դաստիարակում: Կկազմակերպվեն միջոցառումներ գրողների հոբելյանական տարելիցներին նվիրված, հանդիպումներ ժամանակակից գրողների հետ, գրքի շնորհանդեսներ: Կրթական միջոցառումների կազմակերպում, ծանոթացում արդի գրականության և ժամանակակից գրողների հետ:	ՀԿ-ներ, ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, ՀՀ մարզերի դպրոցներ, Արարատյան հայրապետական թեմ	2024թ. կնքված պայմանգրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
8.	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում: Տարվա ընթացքում ասֆալտ-բետոնե ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում՝ ճանապարհի անխափան երթևեկությունն ապահովելու համար: Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է Դավթաշեն վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի գույքագրում: Գույքագրման արդյունքում կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացում (մինչև 10%) և 3-4սմ ասֆալտ-բետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

		անձրևորսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում: Վերանորոգման ենթակա, գույքագրված ա/բ ծածկի վերանորոգում 2450 քմ:		
9.	Եզրաքարերի վերանորոգում	Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների, մայթերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով: Ծրագիրը ներառում է Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների, մայթերի բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում: Վերանորոգման ենթակա,գույքագրված տարածքների եզրաքարերի վերանորոգում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
10.	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում	Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում: Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ տանիքների հիմնանորոգում իզոգամով, պատերի ամրացում: Կիրականացվի հին վնասված շերտի քանդում, ցեմենտահարթեցնող շերտի իրականացում, նոր իզոգամի տեղադրում, օդափոխության խողովակների վրա մետաղական ծածկի տեղադրում: Հարթ տանիքների հիմնանորոգում:	Համատիրություններ	2024թ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
11.	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում	Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմաններ ապահովելու համար: Ծրագիրը ներառում է Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, որը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորով: Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի հիմնական վերանորոգում:	Համատիրություններ	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
12.	Կանաչ տարածքների հիմնում և պահպանում	Դավթաշեն վարչական շրջանի կանաչ տարածքների սիզամարգերի և ծաղիկների խնամում, հնձում և բարելավում: Դավթաշեն վարչական շրջանի կանաչ տարածքների մաքրում աղբից: Կանաչ տարածքների հիմնում և պահպանում:	Երևանի քաղաքապետարան, ՀՈԱԿ-ներ	2024 թվականի ընթացքում

ԷՐԵԲՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Էրեբունի վարչական շրջանում հիմնական և մասնակի նորոգման ու բարելավման կարիք ունի վարչական շրջանին պատկանող ճանապարհային ցանցը, մասնավորապես՝ անհրաժեշտ է իրականացնել բակային տարածքների, փողոցների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի մասնակի վերանորոգում: Ճանապարհների անխափան երթևեկությունն ապահովելու համար 2024թ. ընթացքում կկատարվի ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և փոսալցում (մոտ 50 000 քմ):

Էրեբունի վարչական շրջանում 2024թ. նախատեսված է իրականացնել բազմաբնակարան բնակելի շենքերի 4 թեք տանիքների հիմնանորոգում, հարթ տանիքների վերանորոգում՝ մոտ 7200 քմ, ինչպես նաև շենքերի 25 մուտքերի վերանորոգում, որն իր մեջ ներառում է թեքահարթակների պատրաստում, պատերի և առաստաղների, դռների ու պատուհանների վերանորոգում, նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում:

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում է 3 մասնավոր և 21 պետական հանրակրթական դպրոց (2 ավագ, 16 հիմնական, 3 միջնակարգ), 3 մասնավոր և Երևանի ենթակայության 12 մանկապարտեզ: Վարչական շրջանն ունի նաև 4 գրադարան: Վարչական շրջանում առկա է մեկ մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, մեկ արվեստի դպրոց, մեկ երաժշտական դպրոց, մեկ մարզադպրոց և մեկ շախմատի դպրոց:

Հիմնախնդիրներ

1. Ոռոգման ցանցի հիմնական և մասնակի վերանորոգման, կոյուղագծերի և նստած դիտահորերի նորոգում, ինչպես նաև շենքերի խմելու ջրի և կոյուղագծերի հիմնանորոգում,
2. Բազմաբնակարան շենքերի տակ ստորերկրյա ջրերի վերացման նպատակով դրենաժային համակարգի կառուցում,
3. Վթարային շենքերի ամրացման կամ բնակչության տեղափոխման անհրաժեշտություն,
4. Հանգստի նոր գոտիների ստեղծում, կանաչ տարածքների ընդլայնում, բակային նոր տարածքների բարեկարգում, միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում,
5. Հենապատերի վերանորոգում (հիմնանորոգում),
6. Կոյուղագծերի կառուցում,
7. Հհ. 64 և 73 մանկապարտեզների հիմնանորոգում,
8. Մեկ նոր մանկապարտեզի կառուցում,
9. Նոր բազմաֆունկցիոնալ սպորտդպրոցի կառուցում,
10. Էրեբունի մանկապատանեկան կենտրոնի լողավազանի հիմնանորոգում,
11. Կրպակների և խանութների արտաքին տեսքի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
12. Էրեբունի վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչներին անվճար պրոֆիլակտիկ ստուգման և բժշկական խորհրդատվության տրամադրման պարբերական ակցիաների կազմակերպում,
13. Առաջնային ուշադրություն և հոգածություն սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչների առողջական և սոցիալական խնդիրների լուծման հարցում, արտոնությունների տրամադրման և աջակցության հատուկ ծրագրերի շարունակականություն,

14. Վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային նոր ծրագրերի պլանավորում, ինչպես նաև ծառայությունների կազմակերպում և իրականացում,
15. Թեքահարթակների կառուցում,
16. Քաղաքաշինական միջավայրի բարելավման և արդյունավետ հողօգտագործման ապահովում,
17. Գոյություն ունեցող բնակֆոնդի սեյսմիկ անվտանգության բարձրացում,
18. Բազմաբնակարան շենքերի կրող կոնստրուկցիաների հետազոտում և անհրաժեշտության դեպքում վերակառուցում,
19. Նոր ճանապարհների կառուցում,
20. Ներբակային տարածքների բարեկարգման ծրագրերի մշակում և իրականացում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման և պահպանման ծրագիր	Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների, փողոցների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի մասնակի վերանորոգում: Ճանապարհների անխափան երթևեկությունն ապահովելու համար տարվա ընթացքում ասֆալտ-բետոնե ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում: Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է Էրեբունի վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի գույքագրում: Գույքագրման արդյունքում կատարվում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդման, առաջացած շինաղբի բարձման, թափոնատեղի տեղափոխման, խճե հիմքի իրականացման, դիտահորերի և անձրևորսիչների նիշերի ուղղման և վերատեղադրման աշխատանքներ:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
2.	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման ծրագիր	Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ բնակիչների կենսապայմանների բարելավում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում: Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վնասված հատվածների իզոգամներով վերանորոգում: Նախատեսված է բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում՝ 7200 քմ:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
3.	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում	Վերանորոգել բազմաբնակարան շենքերի թեք տանիքները՝ բնակիչների բնակարանները և աստիճանավանդակները մթնոլորտային տեղումներից պահպանելու համար: Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ թեք տանիքների վնասված հատվածների թիթեղյա կամ կղմինդրե ծածկերով վերանորոգում: Նախատեսվում է իրականացնել 4 բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
4.	Վերելակների հիմնանորոգման ծրագիր	Վերելակային տնտեսության հիմնահարցի լուծմանն ուղղված աշխատանքների իրականացում, Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգում և հիմնանորոգում, վերելակային տնտեսության արդիականացում՝ բնակիչների անվտանգության ապահովման նպատակով: Ծրագիրը ներառում է վարչական շրջանի բազմահարկ շենքերի վերելակների հիմնանորոգում և առանձին հատվածների ընթացիկ նորոգում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

5.	Բազմաբնակարան շենքերում բարեկարգման աշխատանքների իրականացման ծրագիր	Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի և աստիճանավանդակների պատշաճ տեսքի ապահովում՝ բնակիչների հարմարավետ կյանքի, բարենպաստ պայմանների ապահովման նպատակով: Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, որի մեջ մտնում են թեքահարթակների պատրաստում, սալապատում, պատերի և առաստաղների, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորով: Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի 25 մուտքերի և աստիճանավանդակների վերանորոգում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
6.	Հուշարձանների վերանորոգման և պահպանման ծրագիր	Էրեբունի վարչական շրջանի տարածքում զբոսաշրջության և համաչափ զարգացման, ինչպես նաև պատմամշակութային արժեքների պահպանման նպատակով վարչական շրջանում գտնվող հուշարձանների և մշակութային արժեքների պահպանում և վերանորոգում: Մասնավորապես՝ Սասունցի Դավթի արձանի, Գաջեգործների փողոցում գտնվող Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի, Լուսաղբյուր, Արգիշտի և այլ հուշարձանների արտաքին տեսքի պահպանում և դրանց շրջակա տարածքի բարեկարգում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
7.	Մշակութային միջոցառումների իրականացման ծրագիր	Էրեբունի վարչական շրջանում, ըստ ժամանակացույցի, որպես պարտադիր ծրագիր իրականացվում են շուրջ 19 մշակութային միջոցառումներ:	ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
8.	Սպորտային միջոցառումների իրականացման ծրագիր	Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է նպաստել Էրեբունի վարչական շրջանի բնակչության շրջանում սպորտի մասսայականացմանը, ինչպես նաև ապահովել բնակչության ակտիվ մասնակցությունը սպորտային միջոցառումներին, խրախուսել առողջ ապրելակերպը: Էրեբունի վարչական շրջանում ըստ ժամանակացույցի որպես պարտադիր ծրագիր իրականացվում են շուրջ 9 սպորտային միջոցառում:	ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
9.	Վարչական շրջանի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված	Վարչական շրջանի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտնաբերված կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի պլանավորում, ինչպես նաև ծառայությունների կազմակերպում և իրականացում: Տոն և	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն

	նպատակային ծրագրեր	հիշատակի օրերին միջոցառումների կազմակերպում՝ ուղղված հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացմանը: Անհատական սոցիալական ծրագրերով սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում սոցիալական աջակցության կարիք ունեցող և պատերազմից տուժած ընտանիքներին (տանիքի, սանհանգույցի, բնակարանի վերանորոգում, պատուհանների փոխարինում նորերով, լամինատապատում և այլն): Ելնելով հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացման, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներից ոչ ոքի չանտեսելու սկզբունքից՝ նախատեսվում է տոն և հիշատակի օրերին իրականացնել միջոցառումներ (կազմակերպել էքսկուրսիաներ):		սահմանված ժամանակացույցի
10.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին: Բազմազավակ ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում (կենցաղային տեխնիկա, կահույք և այլն): Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին բնաիրային փաթեթների տրամադրում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
11.	Երեխաների շահերի պաշտպանության ծրագիր	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին գրենական պիտույքների տրամադրում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին հագուստի և այլ պարագաների տրամադրում:	Երևանի քաղաքապետարան	2024թ կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
12.	Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպման ծրագիր	Ծրագիրն ուղղված է Էրեբունի վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին օգնություն ցուցաբերելուն: Ծրագիրը ներառում է հարազատ չունեցող անձանց և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար հուղարկավորության ծախսերի մասնակի ապահովում:	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	2024թ կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կենտրոն վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին:

Կենտրոն վարչական շրջանի տարածքը կազմում է 1335 հա, բնակչությունը՝ 126,5 հազ. մարդ: Շրջանը բաժանված է 6 թաղամասերի՝ Փոքր Կենտրոն, Նորագյուղ, Նոր Կիլիկիա, Այգեստան, Կոնդ և Ձորագյուղ:

Վարչական շրջանն ունի 701 բազմաբնակարան բնակելի շենք, 160-ը՝ բարձրահարկ (9-16 հարկանի), 7162 բնակելի տուն, 544 վերելակ, 4 վթարային շենք: Հաշվառված է 13 գետնանցում, 4 վերգետնյա անցում: Փողոցների թիվը՝ 167, երկարությունը՝ 106 կմ, մակերեսը՝ 106,0 հազ. քմ: Շրջանում հաշվառված է թվով 500 թեքահարթակ:

Վարչական շրջանի ջրամատակարարումը իրականացվում է 9 աղբյուրներից, շրջանում գործում է 1 ջրամբար:

Շրջանի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը 45 հա է, գործում է ընդհանուր 47500 գծմ երկարությամբ ոռոգման ցանց:

Շրջանում գործում է 28 դպրոց (4 ավագ, 24 հիմնական), 21 մանկապարտեզ, 1 գրադարան, Կենտրոն վարչական շրջանի ենթակայությամբ գործում է 2 մարզադպրոց և 1 շախմատի դպրոց, 2 արվեստի դպրոց (Բ. Կանաչյանի անվան և Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցներ), 1 Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոն (այսուհետ՝ ՄՍԳԴԿ):

Հիմնախնդիրներ

1. Նոր հանգստի գոտիների, խաղահրապարակների ստեղծում,
2. Փողոցների (այդ թվում՝ մայթերի) հիմնանորոգում, հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում,
3. Հենապատերի հիմնանորոգում, անվտանգության աստիճանի բարձրացում,
4. Կամուրջների և ուղետարների հիմնանորոգում,
5. Զբոսայգիների բարեկարգում և ընդլայնում,
6. Վերելակային տնտեսության արդիականացում,
7. Կոյուղու, ջրամատակարարման և ջրահեռացման նոր ցանցի կառուցում,
8. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորության ցանցի անցկացում,
9. Կանաչապատ տարածքների ընդլայնում և ստեղծում,
10. Նոր ոռոգման ցանցերի ստեղծում,
11. Բնակֆոնդի (բազմաբնակարան շենքերի) բարելավում (տանիք, մուտքեր, ջրահեռացման և ջրամատակարարման ցանց),
12. Առողջապահական ծառայությունների որակի բարձրացում, բժշկական ընկերությունների գույքի արդիականացում, վերազինում,
13. Բնակչությանը մատուցվող սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակի ընդլայնում,

14. Ալկոհոլային և թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց հարկադիր բուժման վերականգնում,
15. Ընտանեկան բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարանով ապահովում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Ծրագրի անմիջական նպատակը քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության ապահովումն է: Կիրականացվեն ասֆալտապատման աշխատանքներ շրջանի այն թաղամասերում և փողոցներում, որտեղ առկա են առաջնահերթ խնդիրներ: Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն մի շարք հասցեներում, ինչպես նաև այն հասցեներում, որտեղ կլինի ընթացիկ վերանորոգման անհրաժեշտություն: Կտարվեն մշտական աշխատանքներ՝ պահպանելու ասֆալտ-բետոնե ծածկը: Կիրականացվեն փոսալցման աշխատանքներ: 36940 քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
2.	Եզրաքարերի վերանորոգում	Կիրականացվեն եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ այն հասցեներում, որտեղ առկա մաշված եզրաքարերի ապամոնտաժման և նոր եզրաքարերի տեղադրման անհրաժեշտություն: Այն հասցեներում ևս, որոնք ընդգրկված են ասֆալտապատման ծրագրում, ասֆալտապատմանը զուգահեռ կիրականացվեն 4523 գծմ եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
3.	Հենապատերի վերանորոգում	Քաղաքացիների բարեկեցության, անվտանգության, շենքի ճարտարապետական տեսքի ապահովում: Հենապատերի վերանորոգում (930 քմ):	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
4.	Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում	Կիրականացվեն մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում, ընթացիկ վերանորոգում: 18 հատ մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
5.	Թեքահարթակների կառուցում	Կիրականացվեն թեքահարթակների վերանորոգման աշխատանքներ այն հասցեներում, որտեղ առկա է անհրաժեշտություն: 50 հատ թեքահարթակների կառուցման աշխատանքներ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված

				ժամանակացույցի
6.	Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)	Դեռատիզացիոն և դեզինֆեկցիոն աշխատանքներ կիրականացվեն պարբերաբար վարչական շրջանի սեփական տնատիրություններ ունեցող փողոցներում: Ախտահանման և միջատազերծման ծառայությունները վարչական շրջանում կմատուցի հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը: Շրջանի բոլոր սեփական տնատիրություններում պարբերաբար կկատարվեն կանխարգելիչ և ըստ անհրաժեշտության ախտահանման, միջատազերծման աշխատանքներ: Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում նշված աշխատանքներն իրականացվում է համատիրությունների կամ կառավարման մարմինների կողմից՝ պայմանագրի համաձայն: Ախտահանման և միջատազերծման ծառայությունների անընդմեջ իրականացում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
7.	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում: Կկատարվեն հարթ տանիքների իզոգամի մասնակի նորոգում կամ հին, վնասված իզոգամի փոխարինում նորով: Թեք տանիքների դեպքում կիրականացվի տանիքի ծածկանյութի (ազբոշիֆեր կամ թիթեղ) փոխարինում նորով, իսկ հիմնանորոգման ընթացքում՝ փայտյա կարկասի փոխարինում: Թվով 12000 քմ թեք տանիքների վերանորոգում, 5600 քմ հարթ տանիքների վերանորոգում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
8.	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում	Ծրագրի նպատակն է՝ ապահովել քաղաքացիների ժամանցը և հանգիստը: Կիրականացվեն ցանկապատ կամ ինքնակամ զավթված տարածքների ցանկապատերից ազատում, ապամոնտաժում, կտեղադրվեն մանկական խաղեր, աղբամաններ ու նստարաններ, կստեղծվեն ասֆալտապատ անցուղիներ: Տարածքներում կիրականացվեն կանաչապատման, ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ: Արդեն բարեկարգված բակային տարածքներում ու խաղահրապարակներում կիրականացվի կանաչապատ տարածքների խնամք, գույքի ընթացիկ վերանորոգում: Կիրականացվի թվով 44 բակերի հիմնանորոգում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
9.	Մուտքերի վերանորոգում	Մուտքերի վերանորոգում՝ դռների տեղադրում, պատերի հարթեցում և ներկում, ապակեպատում, պատուհանների տեղադրում, շքամուտքի հարթակի բետոնապատում, բազրիքների տեղադրում, աստիճանավանդակի նորոգում: Կիրականացվի թվով 180 մուտքերի վերանորոգում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
10.	Վթարային պատշգամբների	Վթարային պատշգամբների պատերի հարթեցում և ներկում: Կիրականացվի թվով 30 պատշգամբների վերանորոգում:	Համատիրություններ, գործարար ոլորտ,	2024թ. ընթացքում կնքված

	նորոգում		բարերարներ	պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
11.	Սպորտային միջոցառումների կազմակերպում	Քաղաքացիների շրջանում առողջ ապրելակերպի խթանման նպատակով կիրականացվի կրթության, մշակույթի և սպորտի նախարարության, Երևանի քաղաքապետարանի սպորտի բաժնի և վարչական շրջանի ծրագրերով նախատեսված մարզական միջոցառումներ, տարբեր տարիքային խմբերի շրջանում, խմբակային մարզաձևերի մասսայականացմանն ուղղված աշխատանքների իրականացում: Նախատեսվում է իրականացնել մարզական միջոցառումենրի շարք: Տարեկան ծրագրերով միջոցառումների իրականացում:	Համագործակցության մարզական միջոցառումներ կիրականացվեն ՀՀ մարզերի և Երևան քաղաքի միջև: Առանձնակի ուշադրության կենտրոնում կլինի ռազմական հաստատությունների փոխայցելությունները, որտեղ նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիները կծանոթանան ռազմական հմտություններին	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
12.	Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն	Նախատեսվում է բարելավել նախադպրոցական և արտադպրոցական կրթություն իրականացնող կազմակերպությունների շենքային պայմանները՝ առաջնային ուշադրություն դարձնելով տանիքի, ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի և ջերմամեկուսացման և էներգախնայողության աշխատանքներին: Նախատեսվում է մանկապարտեզների խմբասենյակներն ապահովել գույքով, դիդակտիկ պարագաներով, իսկ բակերը համալրել մանկական խաղերով: Նպաստել երեխայի խոսքի զարգացմանը, ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը, օգնել տիրապետել ծավալուն խոսքին, որով կկարողանա արտահայտել իր զգացմունքներն ու պահանջները: Իրականացնել գիտելիքների հաղորդման, արտադպրոցական կրթության տարբեր ուղղությունների գծով ունակությունների և հմտությունների ձևավորման, անձի տվյալներին և պահանջներին համապատասխան մտավոր ու ստեղծագործական ընդունակությունների, ֆիզիկական որակների	ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության, Երևանի քաղաքապետարան և անհատ բարերարներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

		զարգացման գործընթաց: Տարեկան ծրագրերով միջոցառումների իրականացում:		
13.	Մշակութային միջոցառումների իրականացում	Պարբերաբար կազմակերպվող բացօթյա համերգների և մշակութային միջոցառումների շնորհիվ ապահովել բնակչության հանգիստը, հնարավորություն տալ մարդկանց շփվել տարբեր արտիստների, մշակութային գործիչների և նրանց արվեստի հետ: Մշտապես ուշադրության կենտրոնում պահել երիտասարդ սերնդի հոգևոր դաստիարակության խնդիրը: Ճիշտ կազմակերպելով նրանց ժամանցը՝ զերծ պահել փողոցային, աղանդավորական, քրեական վտանգավոր երևույթներից: Մասսայական միջոցառումների շնորհիվ ծանոթացնել համաշխարհային և ազգային մշակութային ժառանգության լավագույն նմուշներին: Մշտապես ուշադրության կենտրոնում պահել մշակույթի և կրթության ոլորտի երախտավորներին,խրախուսել նրանց աշխատանքը տարբեր միջոցառումներով և անակնկալներով: Երևանցիների և քաղաքի հյուրերի առօրյան դարձնել ավելի ուրախ, հետաքրքիր և բովանդակալից, նրանց մասնակից դարձնել քաղաքում իրականացվող տարաբնույթ միջոցառումներին: Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, ինչպես նաև շրջանի այգիներում, պուրակներում և հանգստյան այլ գոտիներում ժամանակացույցով նախատեսված մշակութային միջոցառումներ: Տոն և հիշատակի օրերին նվիրված շուրջ 32 մշակութային միջոցառում:	Առաջիկա տարիների ընթացքում մշակութային համագործակցությանն ուղղված ծրագրեր կիրականացվեն Արցախի Հանրապետության, արտերկրի քաղաքների, ՀՀ մարզերի հետ: Կկատարվեն փոխայցելություններ և փորձի փոխանակում, կկազմակերպվեն համատեղ մշակութային միջոցառումներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
14.	Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	Ժամանցի կազմակերպում, մշակույթին, հայրենասիրական դաստիարակությանը, պետականությանը, ազգային և պետական խորհրդանիշերին, ավանդույթներին, կրոնին, տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում: Ամառային արձակուրդներին երեխաների ժամանցը անցկացնելու համար կազմակերպել բակային ճամբարներ, կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ Երևան քաղաքում և հանրապետության այլ շրջաններում: Նախատեսվում է կազմակերպել դասական և ազգային երաժշտության բացօթյա համերգներ, որոնց նպատակն է հաղորդակցվել ազգային երգին ու մշակույթին: Վարչական շրջանի այգիներում, պուրակներում և ժամանցի այլ վայրերում կիրականացվեն ժամանցային միջոցառումներ: Տարեկան ժամանակացույցով հաստատված միջոցառումներ:	Վարչական շրջանի ենթակայության հիմնարկներ, բնակչություն, մշակութային կազմակերպություններ, անհատ կատարողներ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
15.	Գրադարանային ծառայությունների մատուցում	Գրադարանային ֆոնդի համալրում և պահպանում: Ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է իրականացնել գրքային ֆոնդի թարմացում, պահպանում, հասանելիության բարձրացում, ընթերցողների թվի ավելացում: Նախատեսվում է գրքային ֆոնդը համալրել 500 հատ գրքով:	Իրականացնել համագործակցություն ՀՀ մարզերի, Արցախի Հանրապետություն և արտերկրի	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն

			գրադարանների հետ	սահմանված ժամանակացույցի
16.	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն	ԿԴԻՀ ընտանիքների կոմունալ ծախսերի մասնակի փոխհատուցում: Տարերային կամ տեխնածին աղետներից տուժած ընտանիքներին շինանյութի տրամադրում (փլուզում, հրդեհ, ջրհեղեղ և այլն): Արտակարգ իրավիճակներում կամ նմանատիպ այլ դեպքերում շահառուներին տրամադրվող աջակցության միջոցով հոգածության դրսևորում, ստեղծված իրավիճակի հաղթահարում:	Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժիններ, գերատեսչություններ և բարեգործական հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
17.	Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում	Կենտրոն վարչական շրջանում հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում: Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում:	Երևանի քաղաքապետարանի «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	2024թ. ընթացքում կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
18.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի երեք և ավել երեխա ունեցող, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին: Բազմազավակ, երիտասարդ, որոնց տարիքի հանրագումարը չի գերազանցում 70 տարին, գործազուրկ, բայց ոչ կենսաթոշակի տարիքի և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում ըստ կարիքի, օրինակ՝ կենցաղային տեխնիկայի, անհրաժեշտ կահույքի տրամադրում և այլն: Աջակցություն կտրամադրվի երեք և ավել երեխա ունեցող, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին՝ ըստ կարիքի, որը կնպաստի թիրախային խմբերի կենսամակարդակի բարելավմանը:	Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժին, գերատեսչություններ և բարեգործական հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
19.	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	Երևան համայնքի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտնաբերված կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի պլանավորում (օր. սոցիալապես անապահով, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձ (ընտանիք)), ինչպես նաև ծառայությունների կազմակերպում և իրականացում (օր.՝ պատվիրակում, համաֆինանսավորում, մրցույթ և այլն): Տոն և հիշատակի օրերին միջոցառումների կազմակերպում՝ ուղղված հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացմանը: Տեղական սոցիալական ծրագրերի	Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժիններ, գերատեսչություններ և բարեգործական հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում

		իրականացում (օր.՝ անհրաժեշտ շինանյութի տրամադրում և այլն): Տեղական սոցիալական ծրագրերի իրականացում ուղղված վիրավոր զինվորների կենսամակարդակի պայմանների բարելավմանը՝ ըստ անհրաժեշտության և կարիքի: Ելնելով հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացման, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներից ոչ ոքի չանտեսելու սկզբունքից՝ նախատեսվում է իրականացնել միջոցառումներ տոն և հիշատակի օրերին: Կազմակերպել և իրականացնել տեղական և անհատական սոցիալական ծրագրեր, որի արդյունքում կբարելավվի բնակիչների կենսամակարդակը (առաջնային անհրաժեշտության պայմաններ): Տոն և հիշատակի օրերին կազմակերպվող միջոցառումները միտված կլինեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին չանտեսելու սկզբունքի պահպանմանը, նրանց արժևորմանը և կենսամակարդակի բարելավմանը:		
20.	Խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին վերապահված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի կատարում	Խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին վերապահված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ծախսերի կատարում: Ամսվա կտրվածքով մեքենայի վառելիքի կտրոնի տրամադրում, անհրաժեշտության դեպքում այլ ծախսեր:	Կենտրոն վարչական շրջանի Խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժիններ, գերատեսչություններ և բարեգործական հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
21.	Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու համար երեխաներին	Երեխաների ամառային հանգիստը կազմակերպելու համար ուսապարկերի, սպորտային գնդակների տրամադրում: Սոցիալական աջակցություն կստանան թիրախային խմբերում ընդգրկված անձինք և ընտանիքները:	Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժիններ, գերատեսչություններ և բարեգործական	2024 թվականի ընթացքում

	ուսապարկերի, իսկ ճամբարին սպորտային գնդակների տրամադրում		հասարակական կազմակերպություններ	
22.	Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաների, դպրոցական երեխաներին գրենական պիտույքների, պայուսակների տրամադրում	Դպրոցական երեխաներին գրենական պիտույքների, պայուսակների տրամադրում: Սոցիալական աջակցություն կստանան թիրախ խմբերում ընդգրկված անձինք և ընտանիքները:	Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժիններ, գերատեսչություններ և բարեգործական հասարակական կազմակերպություններ:	2024 թվականի ընթացքում
23.	Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաների հագուստի և կոշիկների տրամադրում	Սոցիալական աջակցություն կստանան թիրախ խմբերում ընդգրկված անձինք և ընտանիքները:	Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժիններ, գերատեսչություններ և բարեգործական հասարակական կազմակերպություններ:	2024 թվականի ընթացքում
24.	Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, արտակարգ իրավիճակում հայտնված ընտանիքներին փորձաքննությունների և այլ նմանատիպ ծախսերի համար աջակցություն	Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, արտակարգ իրավիճակում հայտնված ընտանիքներին փորձաքննությունների և այլ նմանատիպ դեպքերի համար անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում, իրականացում: Շահառուներին տրամադրվող աջակցության միջոցով հոգածության դրսևորում, ստեղծված իրավիճակի հաղթահարում: Նմանատիպ դեպքերում ընտանիքներին կտրամադրվի համապատասխան սոցիալական աջակցություն, որը միտված կլինի ստեղծված իրադրության հաղթահարմանը:	Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համապատասխան բաժիններ, գերատեսչություններ և բարեգործական հասարակական կազմակերպություններ:	2024 թվականի ընթացքում

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններին: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 2516 հա մակերես, բնակչությունը կազմում է 142,655 հազ. մարդ:

Շրջանն ունի՝ 1,6949 բնակելի տուն (66153 բնակիչ) և 592/76502 բնակիչ բազմաբնակարան բնակելի շենք, որոնցից 494-ը բարձրահարկ են՝ (9-16 հարկանի) և կառուցվել են 1970-1980-ական թվականներին: Բոլոր շենքերում պարտադիր են վերանորոգման և կանխարգելիչ աշխատանքների կազմակերպումը: Առկա է 92 թեք տանիք, 497՝ հարթ, 1001 վերելակ: Վարչական շրջանն ունի 149 փողոց, նրբանցք և փակուղի, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 110,219 կմ: Դրանց ընդհանուր մակերեսն է 1545742 քմ: Ճանապարհների ասֆալտ-բետոնե ծածկույթի մակերեսը կազմում է 1312841 քմ: Շրջանի փողոցների և բակերի արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 98,1 կմ է, հենասյուների քանակը՝ 3207 հատ, իսկ լուսատուների քանակը՝ 3904 հատ: Վարչական շրջանում առկա է 138 վերանորոգված խաղահրապարակ, 23 մինի ֆուտբոլի դաշտ, 631 խաղեր և կարուսելներ, 203 մարզասարքեր, 204 զրուցատաղավարներ, 1905 նստարաններ, 708 աղբամաններ: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում է գտնվում 9 այգիներ և պուրակներ՝ 86317 քմ ընդհանուր մակերեսով, (ոռոգման ցանցի երկարությունը 40,7 կմ է): Վարչական շրջանում գործում է 22 մսուր- մանկապարտեզ, հաճախող երեխաների թիվը՝ 800 աշխատակիցների թիվը՝ 724, 24 դպրոց, որից՝ ավագ դպրոց՝ 4, միջնակարգ՝ 1 դպրոց, կրթահամալիր՝ 1, հիմնական՝ 14 , մասնավոր՝ 4 «Երևակ», «Վարուժնակ», «Տաթև», Խորեն և Շուշանիկ Ավետիսյանների անվան: Հանրակրթական դպրոցներում աշակերտների ընդհանուր թիվը 20156 է, աշխատակիցներինը՝ 1839: Վարչական շրջանում առկա է 4 մշակութային օջախ՝ Ալ. Աճեմյանի անվան երաժշտական դպրոց (սաների թիվը՝ 430, աշխատակիցների թիվը՝ 78),
Կ. Օրբելյանի անվան արվեստի դպրոց (սաների թիվը՝ 194, աշխատակիցների թիվը՝ 49), «Սեբաստիա» մշակութային կենտրոն (սաների թիվը՝ 90, աշխատակիցների թիվը 14), Գրադարանային համակարգ (ընթերցողների թիվը՝ 1180, աշխատակիցների թիվը՝ 19, գրքային ֆոնդը՝ 66270), 4 մարզադպրոց մանկապատանեկան համալիր մարզադպրոց (սաների թիվը՝ 1200, աշխատակիցների թիվը՝ 32): Վարչական շրջանում է գտնում Վ. Զատիկյանի անվան մարզակումբը (սաների թիվը՝ 83, աշխատակիցների թիվը՝ 10), Շախմատի դպրոցը (սաների թիվը՝ 267, աշխատակիցների թիվը՝ 18), օլիմպիական հերթափոխի հանրապետական մարզադպրոցը: Վարչական շրջանում գործում է՝ «Աստղիկ» ԲԿ, «Արմենիկում» ԲԿ, «Սուրբ Աստվածածին» ծննդատունը, թվով 6 պոլիկլինիկաներ, որից 2-ը՝ ատամնաբուժական: Շրջանում բնակչությունը ամբուլատոր պոլիկլինիկական և հիվանդանոցային բժշկական օգնություն ստանում է հիմնականում շրջանում գործող նշված բուժհիմնարկներում, զբաղվածության կենտրոնում հաշվառված գործազուրկների (16-ից 63 տարեկան աշխատանք փնտրողների) թիվը կազմում է 2161 մարդ: Այն իր հետ բերում է սակավ ապահովված ընտանիքների թվի աճ և ՄՍԾՏԿ-ում փաստագրված ընտանիքների թվի աճ: Շրջանի Միասնական սոցիալական ծառայության (ՄՍԾ) անապահովների գնահատման համակարգում (ԱԳՀ) փաստագրված ընտանիքների թիվը 1829 է, իսկ նպաստառու ընտանիքների թիվը 1468:

Հիմնախնդիրներ

1. Բակային տարածքների բարեկարգում, ասֆալտապատում, խաղահրապարակների ստեղծում և պահպանում, ֆուտբոլի դաշտերի վերակառուցում,
2. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում,
3. Մայթերի կառուցում և վերանորոգում,եզրաքարերի վերանորոգում,
4. Թեքահարթակների կառուցում,
5. Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում ու պահպանում,
6. Հանգստի գոտիների ստեղծում, այգիների կանաչապատում, ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում,
7. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում, վարչական շրջանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում,
8. Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում,
9. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում, վերելակների վերանորոգում և նորերի տեղադրում, բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում,
10. Հասարակական զուգարանների վերանորոգում և պահպանում,
11. Սուբսիդիաներ ոչ պետական (ոչ համայնքային) ոչ ֆինանսական կազմակերպությունների (էներգախնայողության ծրագրի նպատակով), շքամուտքերի վերանորոգում,
12. Կրթօջախների, մարզական և մշակութային կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում՝ հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի, բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում, կանաչապատում, տաղավարների և բակային խաղերի տեղադրում,
13. Սոցիալապես աջակցության կարիք ունեցող անձանց համար ապահովել բժշկական օգնությունների՝ հետազոտությունների և բուժումների անվճար կազմակերպում,
14. Իրականացնել աջակցության հատուկ ծրագրերի շարունակականությունը՝ տոն օրերի համատեքստում («ՀՀ Անկախության օր», «Հաշմանդամների միջազգային օրվա», «Տարեցների միջազգային օր», «Սուրբ Զատիկի», «Ամանորի և Սուրբ ծնունդ», «Երեխաների պաշտպանության միջազգային օր», «Ընտանիքի միջազգային օր», «Կանանց միամսյակ»),
15. Բազմազավակ, երիտասարդ, տարեց, հաշմանդամ, պատերազմից տուժած և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն (սննդի փաթեթի տրամադրում, կենցաղային տեխնիկայի տրամադրում, մեծահասակների և երեխաների հագուստի և մեկանգամյա օգտագործման տակդիրների տրամադրում և այլն),
16. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն (պատերազմից տուժած, բազմազավակ, հաշմանդամ երեխա ունեցող, միածնող այլ խմբերին պատկանող ընտանիքների երեխաներին աջակցության ծրագրերի իրականացում, երեխաների ամառային հանգստի կազմակերպում) աջակցության ծրագրերի շարունակականություն,
17. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բնակվող բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր (միջոցառումներ, էքսկուրսիաներ, ներկայացումներ և այլն):

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Նախատեսվում է իրականացնել 150 000 քմ մակերեսով ճանապարհների ընթացիկ նորոգում: Ծրագրի նպատակն է տրանսպորտային միջոցների երթևկությունը և բնակիչների տեղաշարժը դարձնել առավել անվտանգ և հարմարավետ:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
2.	Եզրաքարերի վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել 8000 գմ եզրաքարերի վերանորոգում: Ծրագրի նպատակն է ապահովել հարմարավետ երթևեկությունը, մարդկանց տեղշարժը և ամրապնդել փողոցների ու մայթերի եզրերը:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
3.	Հենապատերի վերանորոգում	Նախատեսվում է վարչական շրջանի տարածքում իրականացնել հենապատերի վերանորոգման, ամրացման աշխատանքներ և վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ (Բաբաջանյան փ.հհ. 31,35 շ-երի հարող տարածք, Հ.181 դպրոցի ետնամաս):	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
4.	Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում	Նախատեսվում է իրականացնել 50 000 քմ մայթերի կառուցման և վերանորոգման, եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ: Ծրագրի նպատակն է հետիոտնի տեղաշարժը դարձնել առավել հարմարավետ, անվտանգ և ապահով:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
5.	Թեքահարթակների կառուցում	Նախատեսվում է իրականացնել փողոցների մայթերին կից թեքահարթակների կառուցում: Ծրագրի նպատակն է ստեղծել հարմարվետություն սայլակով տեղաշարժվող մարդկանց համար, հատկապես հաշմանդամների համար:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
6.	Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում	Փողոցների, հրապարակների և այգիների կահավորման համար նախատեսվում է ձեռք բերել 300 հատ նստարաններ և տեղադրել: Ծրագրի նպատակն է ապահովել մարդկանց անվտանգ տեղաշարժը, ինչպես նաև սահմանափակել մեքենաների կայանումը չնախատեսված տեղերում:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
7.	Վերելակների հիմնանորոգում	Կստեղծվի առավել անվտանգ և ապահով շահագործվող վերելակներ: Նախատեսվում է վերելակների վերանորոգում և նորերի տեղադրում, -Մետաղական ճոպան 10,5 մմ-5920 մ, -Մետաղական ճոպան 8,3 մմ-5487 մ:	Համատիրություններ	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը
8.	Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում	Նախատեսվում է վարչական շրջանի տարածքում հրատապ լուծում պահանջող աշխատանքների (ծառայությունների իրականացում) ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում: Կիրականացվեն հրատապ լուծում պահանջող աշխատանքներ, որոնք ընդգրկված չեն	Համատիրություններ	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2024 թվականի

		բարեկարգման ծրագրերում և կբարելավվի բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը: Հնարավորություն կստեղծվի կանաչ տարածքների առավել որակով խնամքին և պահպանմանը:		դեկտեմբերի 25-ը
9.	Հասարակական զուգարանների վերանորոգում և պահպանում	Նախատեսվում է իրականացնել հասարակական զուգարանների պահպանում և սպասարկում (3 հատ՝ Երիտասարդական այգի, Վահան Զատիկյանի անվան այգի, ՀՄՊՀ 40 ամյակի անվան այգու): Ծրագրի նպատակն է բարելավվել հանգսի գոտիներից օգտվողներին մատուցվող ծառայությունները:	Համատիրություններ	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը
10.	Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում	Նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում՝ Միքայելյան փ.հ.82 շենքից դեպի Անդրանիկի փ.հ.117 շենք տանող փողոց, Օհանովի փ.հ. 80 շենքից դեպի հ. 97 մանկապարտեզ տանող ճանապարհ, Օհանովի փ.հ. 80 շենքից դեպի Սվաճյան փ.հ. 12 շենք տանող ճանապարհ, Անդրանիկի փ.հ. 109 շենքից դեպի Անդրանիկի փողոց տանող ճանապարհ: Կստեղծվի հարմարվետություն գիշերային ժամերին բնակիչների և տրանսպորտի տեղաշարժի համար:	Համատիրություններ	Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 25-ը
11.	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի 8000 քմ հարթ տանիքների վերանորոգում: Ծրագրի իրականացման արդյունքում կկանխվի տանիքների քայքայումը և կաթոցները վերջին հարկերի բնակարաններում:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
12.	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում. -Մետաղական թիթեղ/1.2x2.0x0.5/-253 քմ, -Մետաղական թիթեղ ԿՊ 21 055-1197 քմ, -Տախտակ փայտյա/3x20x600/-4 խմ, -Տախտակ փոյտյա/5x10x600/-1,3 խմ: Ծրագրի իրականացման արդյունքում կկանխվի տանիքների կաթոցները և կստեղծվեն ապահով տանիքներ:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
13.	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում	Բնակիչների հանգստի և խաղերի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում: Նախատեսվում է իրականացնել 36 բակային տարածքների բարեկարգում, ասֆալտապատում, խաղահրապարակների ստեղծում և պահպանում, ֆուտբոլի դաշտերի վերակառուցում:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
14.	Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ՝	Նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի 35 շքամուտքերի վերանորոգում: Ծրագրի նպատակն է բնակիչների համար ապահով, մաքուր և հարմարավետ մուտքերի ապահովումը:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում

	շքամուտքերի վերանորոգում և սուբսիդիաներ, ոչ պետական, ոչ համայնքային, ոչ ֆինանսական կազմակերպություններին էներգախնայողություն ծրագրի նպատակով			
15.	Վթարային պատշգամբների նորոգում	Նախատեսվում է իրականացնել վթարային պատշգամբների նորոգում Սեբաստիա և Միքայելյան փողոցների շենքերի թվով 20 հասցեներում: Ծրագրի նպատակն է անվտանգ և ապահով պայմաններ ստեղծել պատշգամբներից օգտվողների համար:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
16.	Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում	Նախատեսվում է կազմակերպել օրացուցային պլանով նախատեսված թվով 16 սպորտային միջոցառումներ: Ծրագրի իրականացման նպատակն է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակիչների սպորտային կյանքի ակտիվացում, ներգրավվածության բարձրացում, առողջ ապրելակերպի խրախուսում: Պատանիների, երիտասարդների ֆիզիկական պատրաստվածության և առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումներին բնակիչների մասնակցության բարձրացում: Ֆիզիկական դաստիարակության զարգացում մանկապարտեզներում և դպրոցներում, սպորտի խրախուսում, բնակչության ներգրավածության ակտիվացում:	ՀԿ-եր, ՊՈԱԿ-ներ	2024 թվականին կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
17.	Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում	Նախատեսվում է ստեղծել հանգստի գոտիներ, կանաչապատել այգիները, կառուցել և վերանորոգել ոռոգման ցանցը Միքայելյան փ.հհ.18-26 տների և Արարատյան 1-ին զանգ. 12,14 շենքերի դիմացի տարածք): Ծրագրի իրականացման նպատակն է բնակիչների հանգսի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծումը:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
18.	Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում ու պահպանում	Նախատեսվում է իրականացնել սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում ու պահպանում՝ (սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում ու պահպանում: -Բ-3 թաղ.Միքայելյան փ.հ.82 շենքի դիմացի ֆուտբոլի դաշտի վերակառուցում): Ծրագրի նպատակն է բնակիչների համար սպորտային և խաղային միջոցառումների պայմանների ստեղծումը, ֆիզիկական դաստիրակության զարգացումը:	Համատիրություններ	2024 թվականի ընթացքում
19.	Մշակութային միջոցառումների իրականացում	Նախատեսվում է իրականացնել թվով 7 կրթական և 24 մշակութային միջոցառումներ: Ծրագրի նպատակն է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում մշակութային միջոցառումների իրականացումը՝ բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման, երեխաների	Բարեգործական կազմակերպություններ, ՀԿ-ներ, ՀՄՊ վետերաններ,	2024 թվականին կնքված պայմանգրի ժամկետներով՝

		ընդգրկվածության մեծացման, բակային ընկերասիրության, տոն և հիշատակի օրերի համատեղ անցկացման միջոցով: Ծրագրի իրականացումը կնպաստի մշակութային կյանքի ակտիվացմանը, բնակչության տարբեր խավերի ներգրավմանը միջոցառումներին, ինչպես նաև մշակույթի պրոպագանդմանը: Ծրագրի նպատակն է ապահովել կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների շարունակականությունը՝ ավելի կրթված և զարգացած սերունդ դաստիարակելու համար: Դպրոցահասակ երեխաների զարգացման ու կրթական աշխատանքների նպաստում, ընթերցանության խրախուսում:	Ժողովրդական երգի-պարի համույթներ, (միջոցառումների և ծրագրերի կատարմանը կմասնակցեն վարչական շրջանում գործող մշակութային կենտրոնների սաները, բարեգործներ, ՀԿ-ներ, վարչական շրջանում գտնվող դպրոցներ և համույթներ):	համաձայն սահմանված ժամանակացույցի
20.	Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում ԿԴԻՀ անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի իրականացում: 1) Սոցիալապես անապահով, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ԿԴԻՀ) ընտանիքներին պատկանող անձանց հուղարկավորության կազմակերպում, 2) հարազատ չունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ԿԴԻՀ) անձանց հուղարկավորության կազմակերպում: Արտակարգ իրավիճակներում կամ նմանատիպ այլ դեպքերում շահառուներին տրամադրվող աջակցության միջոցով հոգածության դրսևորում, ստեղծված իրավիճակի հաղթահարում:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականին կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
21.	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բնակվող՝ բազմազավակ, միածնող, հաշմանդամություն ունեցող և այլ խմբերին պատկանող երեխաներին աջակցության ծրագրի իրականացում: Աջակցության տրամադրում բազմազավակ, երտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքների երեխաներին՝ ըստ կարիքի, որը կնպաստի թիրախային խմբերի կեսամակարդակի բարելավմանը: 1) Երեխաների պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 1-ին, կազմակերպել մեկ օրյա հանգիստ (էքսկուրսիա Սևան, Դիլիջան, Հաղարծին, Գոշավանք, Պարզ լիճ) 50 անձի համար, 2) պատերազմից տուժած, բազմազավակ, հաշմանդամ երեխա ունեցող, միածնող և այլ խմբերին պատկանող ընտանիքների երեխաների աջակցության ծրագրով կկազմակերպվի՝ · այցելություն «Էրեբունի» թանգարան 50 երեխայի համար, · այցելություն «Երևանի պատմության թանգարան» և	Երևանի քաղաքապետարան	2024 թվականին կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

		Մատենադարան 50 երեխայի համար, • հանգստի կազմակերպում՝ Պլանետարիում 50 երեխայի համար, • ներկայացման դիտում ՀՀ Թումանյանի անվան տիկնիկային թատրոնում՝ 50 երեխայի համար, 3) բազմազավակ, երիտասարդ, այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցության ծրագրով՝ մինչև 2 տարեկան երեխաների համար նախատեսված կերակրման սեղան-աթոռակի ձեռքբերում (15 երեխայի համար): 4) պատերազմից տուժած, բազմազավակ, հաշմանդամ երեխա ունեցող, միածնող և այլ խմբերին պատկանող ընտանիքների երեխաներին աջակցության ծրագրով կտրամադրվի գրենական պիտույքներ՝ պայուսակ լրակազմով (200 երեխայի համար), 5) ԿԴԻՀ, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների դպրոցահասակ երեխաներին կտրամադրվի դպրոցական համազգեստ (60 երեխայի համար), 6) ԽՀՀ դատական նիստերին ներկայությունն ապահովելու, սոց. աշխատողների տնային այցելությունները և այլ անհրաժեշտ աջակցություններ իրականացնելու նպատակով տաքսի ծառայության ապահովման համար:		
22.	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր	Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտաբերված կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի պլանավորում: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտաբերված կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի պլանավորում: Տոն և հիշատակի օրերի միջոցառումները միտված կլինեն կյանքի դժվարին իրավիճակում հայտված անձանց և ընտանիքներին չանտեսելու սկզբունքի պահպանմանը, նրանց արժևորմանը: Կկազմակերպվեն և կիրականացվեն սոցիալական ծրագրեր, որոնց արդյունքում կբարելավվի վարչական շրջանի պատերազմից տուժած ընտանիքների և աջակցության կարիք ունեցող բնակիչների կենսամակարդակը (առաջնային անհրաժեշտության պայմաններ): Բարելավման նպատակով կիրականացվի նաև շինարարական աշխատանքներ:	Երևանի քաղաքապետարան	2024 թվականին կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
23.	Բազմազավակ, երիտասարդ	Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով	Երևանի	2024 թվականին

	և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	աջակցության տրամադրում բազմազավակ, երիտասարտ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սոցիալական կարիքների գնահատման արդյունքում հայտաբերված կարիքավոր բազմազավակ, բազմանդամ, կյանքի դժվարին իրավիճակում հայտված անձանց և ընտանիքների բարելավմանն ուղղված աջակցության ծրագրերի մշակում և իրականացում:	քաղաքապետարան	կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիսարևելյան հատվածում, սահմանակից է Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Բնակչությունը կազմում է 134,6 հազ. մարդ, տարածքը կազմում է 1411,0 հա, որը Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 15,4% է: Փողոցների և ճանապարհների երկարությունը 87,4 կմ է, շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք, գործում է 593 վերելակ: Բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 30 համատիրությունների միջոցով: Վարչական շրջանում առկա է 335 բակային տարածք, 143 խաղահրապարակ և 18 մինի ֆուտբոլի դաշտ, տեղադրված են 307 խաղեր, 150 մարզասարքեր, 126 զրուցատաղավարներ, 700 նստարաններ: Կանաչ տարածքների մակերեսը՝ 65,2 հա, առկա է 23 զբոսայգի և պուրակ: Ոռոգման ցանցի երկարությունը 35,1 կմ է: Շրջանում առկա է 22 մանկապարտեզ, 20 դպրոց, 4 մարզադպրոց, 1 ԲՈՒՀ, 1 արվեստի և 1 երաժշտական դպրոց, միջին մասնագիտական 2 քոլեջ, 1 ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ճեմարան, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, 1 հայորդաց տուն, 2 եկեղեցի և 1 թանգարան, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, գործում է 2 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 2 բարեգործական ճաշարան:

Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժինը համագործակցում է վարչական շրջանում գործող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի, երկու ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկների, երկու բարեգործական ճաշարանների, տարբեր հասարակական կազմակերպությունների, ՄՄԾ տարածքային կենտրոնի, ոստիկանության և այլ հիմնարկությունների հետ:

Համապատասխան մասնագետների կողմից կազմակերպվում և իրականացվում են տնային այցելություններ, որոնց արդյունքում գնահատված սոցիալական կարիքի հիման վրա կազմվում են անհատական սոցիալական ծրագրեր: Բաժնի շահառու հանդիսացող սոցիալական աջակցության կարիք ունեցող, ինչպես նաև ԿԴԻՀ ընտանիքներին աջակցելու, ստեղծված իրավիճակը հաղթահարելու նպատակով իրականացվում են բազմաթիվ ծրագրեր:

Վարչական շրջանի առևտրի, ծառայությունների և գովազդի ոլորտում կատարվում է տեղական տուրքերի գանձում և համապատասխան թույլտվությունների տրամադրում, հսկողության իրականացում, իրավախախտում հայտնաբերելու դեպքում արձանագրությունների կազմում, գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ բազայի կազմում և ճշգրտում:

Վարչական շրջանի քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտում կատարվում է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների ինքնակամ զավթման, առանց համապատասխան քաղաքաշինական փատաթղթերի ինքնակամ շինությունների կառուցումը կասեցնելու և հսկողության իրականացում, իրավախախտում հայտնաբերելու դեպքում արձանագրությունների կազմում:

Հիմնախնդիրներ

1. Բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն,
2. Բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտապատման, լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն,
3. Մայթերի եզրաքարերի ու ասֆալտ-բետոնե ծածկույթի մասնակի և հիմնական վերանորոգման, հենապատերի հիմնանորոգման և նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն,

4. Հանգստյան գոտիների համալրման անհրաժեշտություն,
5. Նոր խաղահրապարակների կառուցման և առկա խաղահրապարակներում մանկական խաղերի ու մարզասարքերի համալրման, պահպանման անհրաժեշտություն,
6. Ոռոգման ցանցի ընդլայնման, ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգման, անհրաժեշտություն,
7. Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն,
8. Բազմաբնակարան շենքերում և հարակից տարածքների սանիտարական նորմերի պատշաճ մակարդակի ապահովման անհրաժեշտություն,
9. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, արտաքին պատերի և կախովի պատշգամբների, շքամուտքերի վերանորոգման, պատուհանների փոխարինման անհրաժեշտություն,
10. Վերելակների ձեռքբերման և տեղադրման, վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն,
11. Վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող, ինչպես նաև ԿԴԻՀ ընտանիքների սոցիալական խնդիրների և կենսապայմանների բարելավմանն ուղղված սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում,
12. Նոր Նորք վարչական շրջանի մսուր-մանկապարտեզների, մարզական և մշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավման, ինչպես նաև նոր գույքով համալրելու անհրաժեշտություն,
13. Նոր Նորք վարչական շրջանի մսուր-մանկապարտեզների բակային տարածքների բարեկարգման անհրաժեշտություն՝ ցանկապատերի նորոգում, նոր ցանկապատերի տեղադրում, բակային մանկական խաղերի, մարզասարքերի տեղադրում, զրուցարանների վերանորոգում, նոր զրուցարանների տեղադրում,
14. Համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքների ազատման և ինքնակամ, առանց համապատասխան փաստաթղթերի կառուցված շինությունների քանդման աշխատանքների իրականացում,
15. Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կատարում,
16. Առևտրի, հանրային սննդի, կենցաղային ծառայությունների և գովազդի ոլորտների օրենսդրական պահանջների կատարում,
17. Ապօրինի բացօթյա առևտրի բացառում,
18. Օրենսդրական պահանջներին չհամապատասխանող գովազդների ապամոնտաժում,
19. Տնտեսվարող սուբյեկտների տվյալների տիրապետում,
20. Վարչական շրջանի տարածքում առևտրի, ծառայությունների, կենցաղային ծառայությունների և արտաքին գովազդի ոլորտում տեղական տուրքերի գանձում և համապատասխան թույլտվությունների տրամադրում, հսկողության իրականացում, իրավախախտում հայտնաբերելու դեպքում արձանագրությունների կազմում,
21. Վարչական շրջանի տարածքում հողազավթումների դեպքերի հայտնաբերում,
22. Ինքնակամ կառուցվող շինությունների ապամոնտաժում,
23. Տրված շին. թույլտվությամբ իրականցվող շին. աշխատանքների վերահսկում՝ նախագծային շեղումները և շին. հրապարակի նորմերի պահպանման ուղղությամբ՝ իրավախախտում հայտնաբերելու դեպքում արձանագրությունների կազմում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում	Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում (12500 քմ): Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների նորոգում գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով: Նախատեսվում է իրականացնել 2840 քմ մակերեսով թեք տանիքների հիմնանորոգում:	Երևանի քաղաքապետարան, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպություն, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, համատիրություններ	2024թ. կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
2.	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում	Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում՝ կաթոցների և հալոցների կանխում, վերջին հարկերում բնակվող բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում (12000 քմ): Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ տանիքների նորոգում իզոգամով: Նախատեսվում է իրականացնել 12000 քմ մակերեսով հարթ տանիքների նորոգում:	Երևանի քաղաքապետարան, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպություն, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, համատիրություններ	2024թ. կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
3.	Վերելակային տնտեսության արդիականացում և հիմնանորոգում	Վերելակային տնտեսության արդիականացում, հիմնանորոգում: Ծրագիրը նախատեսում է ապահովել վերելակային տնտեսության նորոգում և անվտանգ շահագործում:	Վարչական շրջանի համատիրություններ	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
4.	Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում	Ավարտին հասցնել բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգման աշխատանքները (35 մուտք): Ծրագիրը նախատեսում է բնակելի ֆոնդի շենքային պայմանների բարելավում և բնակիչների համար հարմարավետ պայմանների ստեղծում:	Վարչական շրջանի համատիրություններ	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

5.	Քաղաքային կահավորանքի վերանորոգում և ավելացում	Հանրային օգտագործման տարածքներում քաղաքային կահավորանքի վերանորոգում և ավելացում: Ծրագիրը նախատեսում է փողոցներում, զբոսայգիներում, պուրակներում, բակային տարածքներում 100 նստարանների, 10 զրուցատաղավարների և 25 աղբամանների ավելացում, բնակիչների համար հարմարավետ պայմանների ստեղծում:	Վարչական շրջանի համատիրություններ	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
6.	Բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի վերանորոգում, ասֆալտապատում	Վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերի վերանորոգում՝բնակիչների համար հարմարավետ բակեր, խաղահրապարակներ և երթևեկելի հարթ ճանապարհներ ու մայթեր ապահովելու նպատակով (35 000 քմ): Վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված տեխ.պայմանների: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտ-բետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, նոր փոսերի ձևավորվում և ասֆալտապատում: Նախատեսվում է իրականացնել 35000 քմ բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի վերանորոգում:	Երևանի քաղաքապետարան, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպություն	2024թ. յուրաքանչյուր տարի կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
7.	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում, հանգստի գոտիների ստեղծում	Նոր Նորք վարչական շրջանի բնակիչների՝ մեծահասակների և փոքրերի համար հանգստի և խաղերի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների ստեղծում և ընդարձակում (7 բակային տարածք): Ծրագիրը նախատեսում է բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ բակերում մայթերի եզրաքարերի վերանորոգում, սալիկների , նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների, գիշերային լուսավորության հենասյուների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով՝ սիզամարգերի կանաչապատում, ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում: Նախատեսվում է իրականացնել 7 և ավելի բակային տարածքների հիմնանորոգում, բարեկարգում, կառուցում:		2024թ. կնքված պայմանգրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
8.	Սոցիալական	Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով	Բազմազավակ, միածնող,	2024 թվականի

	աջակցության կարիք ունեցող բազմազավակ, միածնող, երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխա ունեցող միայնակ մայրերին, պատերազմից տուժած ընտանիքներին և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցության տրամադրում	աջակցություն կտրամադրվի բազմազավակ, միածնող, երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխա ունեցող միայնակ մայրերին, պատերազմից տուժած ընտանիքներին և այլ ընտանիքներին պատկանող խմբերին: Համապատասխան մասնագետների կողմից կկազմակերպվի և կիրականացվի տնային այցելություններ, որոնց արդյունքում գնահատված սոցիալական կարիքի հիման վրա կկազմվեն անհատական սոցիալական ծրագրեր: Շահառու կարող են հանդիսանալ բազմազավակ, միածնող, երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխա ունեցող միայնակ մայրերի, պատերազմից տուժած ընտանիքներ և այլ ընտանիքների պատկանող խմբերը: Համապատասխան մասնագետների կողմից կկազմակերպվի և կիրականացվի տնային այցելություններ, որոնց արդյունքում գնահատված սոցիալական կարիքի հիման վրա կկազմվեն անհատական սոցիալական ծրագրեր:	երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ երեխա ունեցող միայնակ մայրերի, պատերազմից տուժած ընտանիքներ և այլ ընտանիքներին պատկանող խմբեր	ընթացքում
9.	Երեխաների շահերի պաշտպանությանն ուղղված սոցիալական ծրագրերի իրականացում	Երեխաների համար աջակցության ծրագրերի մշակում և իրականացում: ԿԴԻՀ և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաներին տրամադրվող աջակցության միջոցով հոգածության դրսևորում, ստեղծված իրավիճակի հաղթահարում:	Երևանի քաղաքապետարան, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպություն	2024 թվականի ընթացքում
10.	Նոր Նորք վարչական շրջանի սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	Երեխաների համար աջակցության ծրագրերի մշակում և իրականացում: Կազմակերպել և իրականացնել անհատական սոցիալական ծրագրեր, որի արդյունքում կբարելավվի բնակիչների կենսամակարդակը (առաջնային անհրաժեշտության պայմաններ): Տոն և հիշատակի օրերին կազմակերպվող միջոցառումները միտված կլինեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին չանտեսելու սկզբունքի պահպանմանը, նրանց արժևորմանը:	Երևանի քաղաքապետարան, մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպություն	2024 թվականի ընթացքում
11.	Հարազատ չունեցող և սոցիալապես անապահով բնակիչների հուղարկավորության կազմակերպում	Հարազատ չունեցող սոցիալապես անապահով բնակիչների հուղարկավորության կազմակերպում: Դիատար մեքենայի և դագաղի տրամադրում, փոս փորելու ծախսերի հոգում:	Պայմանագիր՝ Երևանի քաղաքապետարան, մրցույթի արդյունքում հաղթած մասնակից կազմակերպություն	2024 թվականի ընթացքում

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը զբաղեցնում է 476 հա տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 2.1%-ը: Այն սահմանակից է Կենտրոն, Էրեբունի և Նոր-Նորք վարչական շրջանների հետ: Նորք-Մարաշ վարչական շրջանի բնակչության թիվը կազմում է 11,8 հազ. մարդ, որը Երևանի բնակչության թվաքանակում կազմում է 1,1%:

Հիմնախնդիրներ

1. Կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ,
2. Փողոցների, բակերի և մայթերի ասֆալտապատման, նոր գրունտային փողոցների և մայթերի ասֆալտապատման անհրաժեշտություն,
3. Փողոցներում և բակային տարածքներում արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ,
4. Ոռոգման ցանցի կառուցման, ընդլայնման և բարելավման անհրաժեշտություն,
5. Բակային տարածքների բարեկարգում, ցանցապատված տարածքների ապամոնտաժում, խաղահրապարակների, արահետների և կանաչ տարածքների ստեղծում, զրուցարանների, լուսատուների, աղբամանների և նստարանների տեղադրում,
6. Հենապատերի հիմնանորոգում,
7. Մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում,
8. Նորքի անտառների վերականգնում (միգուցե արգելանոցի տեսքով),
9. Հիմնանորոգում և բակային տարածքների բարեկարգում Երևանի թիվ 121, 122, 123, 124 մսուր-մանկապարտեզներում,
10. Երևանի Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց ՀՈԱԿ-ի հիմնանորոգում,
11. Բազմաֆունկցիոնալ դաշտերի բարեկարգում,
12. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացում,
13. Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովում,
14. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում, սոցիալական ներառում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում և պահպանում	Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի ասֆալտ-բետոնե ծածկի ընթացիկ՝ փոսային, ճաքալցման և հիմնանորոգման աշխատանքներ: Վարչական շրջանի բնակիչների հարմարավետ տեղաշարժման համար կատարվող բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև կատարված աշխատանքների պատշաճ մակարդակով պահպանում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
2.	Եզրաքարերի կառուցման և վերանորոգման ծրագիր	Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի փողոցների բարեկարգում, հետիոտների հարմարավետության, երթևեկության կանոնների անվտանգության ապահովում: Ծրագրով նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի մայթերի եզրաքարերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ՝ 1175 գծմ ընդամենը ծավալով, մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ նորոգում, եզրաքարերի նորոգման աշխատանքներ՝ բնակչության հարմարավետ երթևեկությունն ապահովելու համար:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
3.	Հենապատերի կառուցման և վերանորոգման ծրագիր	Ծրագրի նպատակն է պահպանելու և անվտանգ շահագործելու վարչական շրջանի քաղաքային և համայնքային նշանակության փողոցները (ճանապարհները) և կառույցները: Ծրագրով նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի Սերո Խանզադյան փողոցի արգելապատնեշների կառուցման աշխատանքներ, Ա Արմենակյան փողոցում հենապատի կառուցում, Նորքի Այգիներ փողոցից դեպի եկեղեցի տանող պարսպի կառուցում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
4.	Ոռոգման ցանցի հիմնանորոգման ծրագիր	Կանաչապատ տարածքների պահպանում և խնամք, ոռոգման ջրի կորուստների հնարավորինս նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում: Ըստ ծրագրի նախատեսվում է վարչական շրջանում ոռոգման ցանցի կառուցում և հիմնանորոգում՝ հասարարական հանգստի վայրերի (այգիների) և խաղահրապարակների կանաչապատ տարածքների խնամք և պահպանում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
5.	Ախտահանման և միջատազերծման (դեռատիզացիա) ծրագիր	Ախտահանման և միջատազերծման ծառայությունների իրականացում: Դեռատիզացիոն և դիսենկցիոն ծառայությունների իրականացում, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, բնակիչների, մանկապարտեզների, դպրոցների սաների անվտանգության ապահովում, վարչական շրջանի տարածքում գտնվող աղբամանների շրջակայքի սանիտարական նորմերի ապահովում: Տաք սեզոնին սողունների վերացում, վնասազերծում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

6.	Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման ծրագիր	Բնակչության համար հասարակական նշանակության հանգստի գոտիների ստեղծում՝ կանաչ տարածքների ավելացման միջոցով, առողջ ապրելակերպի քարոզում՝ բակային խաղահրապարակներում մարզական խաղերի տեղադրման միջոցով: Այգիների, հանգստի գոտիների, պուրակների ստեղծում, հիմնադրում, կանաչ պարածքների ընդլայնում, բակային տարածքների և խաղահրապարակների ընթացիկ վերանորոգում: Մարզական խաղահրապարակների կառուցում՝ հավասարաչափ բաշխված ըստ թաղամասերի, հարմարեցված ըստ տնատիրության տարածքների:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
7.	Մայթերի և փողոցների վերակառուցման և նորոգման ծրագիր	Ծրագրի իրականացման նպատակն է ապահովել վարչական շրջանում հետիոտների համար անվտանգ ճանապարհ, ինչպես նաև ապահովել վարչական շրջանի ճանապարհների երթևեկության անվտանգությունը և հարմարավետությունը:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
8.	Փողոցների, հրապարակների և այգիների կահավորման ծրագիր	Ծրագրի նպատակն է պահպանել և անվտանգ շահագործել վարչական շրջանի համայնքային նշանակության փողոցները (ճանապարհները): Ապահովել վարչական շրջանի ճանապարհների երթևեկության անվտանգությունը և հարմարավետությունը:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
9.	Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման ծրագիր	Վարչական շրջանի բնակիչների պահանջ-խնդրանքի համաձայն՝ 2024թ-ին նախատեսվում է իրականացնել Լուսինե Զաքարյան փողոցից դեպի Բուժաշխատողների փողոցի կապուղու, Ա. Արմենակյան դպրոցի դիմային հատվածի և Նորքի Այգիներ փողոցի արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
10.	Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների և ծառայությունների իրականացման ծրագիր	Ծրագրի նպատակն է վարչական շրջանում հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների և ծառայությունների իրականացումը: Ապահովել վարչական շրջանի տարածքում առկա, բայց չնախատեսված շինարարական և բարեկարգման աշխատանքների (այգիների խնամքի, շինաղբի հեռացման, տեխնիկաների ծառայության մատուցման և այլ նպատակներով) իրականացումը:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

11.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների իրականացման ծրագիր	Ծրագրի նպատակն է հաջորդող տարիների համար սահմանված կարգով կազմելու և նախապատրաստելու կապիտալ բնույթի շին-վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը: Ապահովել օբյեկտների կապիտալ բնույթի շինվերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ սահմանված կարգով լիազոր մարմինների կողմից տրված փորձաքննությամբ:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
12.	Մշակութային միջոցառումների իրականացման ծրագիր	Մշակութային կյանքի ապահովում, պետական, ազգային ու ավանդական տոների պահպանում: ՀՀ պետական, ազգային և եկեղեցական տոների կազմակերպում և անցկացում՝ բնակչության ներգրավմամբ, բնակիչների մասնակցություն ազգային տոներին:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
13.	Սպորտային միջոցառումների իրականացման ծրագիր	Առողջ ապրելակերպի քարոզում: Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ բնակչության տարբեր տարիքային խմբերի մասնակցությամբ, վարչական շրջանի երիտասարդ ընտանիքների ընդգրկում սպորտային ծրագրերին:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
14.	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագիր	Սոցիալական աջակցության կարիք ունեցող, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների ու անձանց կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում: Շահառու ընտանիքների կենսապայմանների և սոցիալական վիճակի բարելավման նպատակով, ըստ գնահատված կարիքի, սոցիալական ծրագրերի իրականացում (սոցիալական աջակցության տրամադրում և ծառայությունների մատուցման կազմակերպում): Հասարակության սոցիալական բևեռացման մեղմացման նպատակով միջոցառումների կազմակերպում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
15.	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագիր	Սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման միջոցով աջակցության ցուցաբերում բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին ու անձանց: Ելնելով հասարակության սոցիալական բևեռվածության և աղքատության մեղմացման, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներից ոչ ոքի չանտեսելու սկզբունքից՝ տոն և հիշատակի օրերին իրականացվող միջոցառումներ (շրջագայություն, հյուրասիրություն, նվերների տրամադրում):	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

16.	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագիր	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր, սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար աջակցության ծրագրերի իրականացում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին բնաիրային փաթեթների և հիգիենայի պարագաների ձեռք բերում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
17.	Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպման ծրագիր	Հարազատ չունեցող անձանց համար հուղարկավորության կազմակերպում (գերեզմանափոսի պատրաստում, դագաղի, դիատար ավտոմեքենայի տրամադրում): Հարազատ չունեցող անձանց համար հուղարկավորության կազմակերպում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
18.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցության ծրագիր	Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազավակ, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին: Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին՝ ըստ կարիքի, որը կնպաստի թիրախային խմբերի կենսամակարդակի բարելավմանը:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
19.	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագիր	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հուղարկավորության կազմակերպում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նուբարաշեն վարչական շրջանը սահմանակից է Կոտայքի և Արարատի մարզերին, Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 1724 հա, բնակչությունը՝ 10,4 հազ. մարդ: Նուբարաշեն վարչական շրջանի փողոցների երկարությունը կազմում է 22,934 կմ: Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար կառուցված են 46 թեքահարթակներ: Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում տեղադրված են 175 աղբամաններ, 425 նստարաններ, 70 զրուցարաններ, 145 մարզական գույք, 31 խաղային գույք: 27 փողոցներում առկա է արտաքին լուսավորության ցանց, 6 թաղամասերում բացակայում է:

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում եզրաքարերի երկարությունը կազմում է 3890 գծմ, որից վերանորոգված են 2974 գծմ, 916 գծմ եզրաքարեր ենթակա են վերանորոգման: Նուբարաշեն վարչական շրջանում հաշվառված է 1605 սեփական տնտեսություն, 36 բազմաբնակարան շենք, հարթ տանիքները 7-ն են, թեք տանիքները՝ 29, գործում է 6 վերելակ:

Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքները կազմում են 5,1283 հա, փողոցների սիզամարգերը ՝ 0,0186 հա, պուրակները՝ 0,16 հա, առկա է 1785 ծառ:

Հիմնախնդիրներ

1. Աղբավայրի կոնսերվացիայի իրականացում և վերամշակման գործարանի կառուցում,
2. Կանգառների արդիականացման անհրաժեշտություն,
3. Էլ. սնուցման ցանցի և արտաքին լուսավորության ցանցի վթարային հենասյուների փոխարինում,
4. Նորաստեղծ թաղամասերում գազաֆիկացման, ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի կառուցում,
5. Տնամերձ հողամասերի վրա գտնվող բարձրավոլտ հոսանքալարերի հենասյուների տեղափոխման անհրաժեշտություն,
6. Նուբարաշեն վարչական շրջանի «Վիլլի Մոկացյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի բարձր վարձավճարներ, որի հետևանքով զգալիորեն նվազել է երաժշտական դպրոց հաճախող սաների թիվը,
7. Ոռոգման ցանցի արդիականացում և նոր տարածքներում հասանելիության ապահովում,
8. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանեցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների պահանջներին,
9. Մանկապարտեզների բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում և կանաչապատում,
10. Մատաղ սերնդի առողջ և ներդաշնակ զարգացման համար Երևանի հ.175 միջնակարգ դպրոցի սպորտ դահլիճի հիմնանորոգում ու գույքի հագեցվածության ապահովում,
11. Կրթամշակութային և մարզական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում, գույքի թարմացում,

12. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտություն,
13. Անբարենպաստ պայմաններում բնակվող խիստ անապահով ընտանիքներին բնակարաններով, կացարաններով ապահովում, բնակարանային պայմանների բարելավում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Նուբարաշեն վարչական շրջանի փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում	Վարչական շրջանի փողոցների, մայթերի և միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ և կապիտալ վերանորոգում բնակիչների համար հարմարավետ բակեր, խաղահրապարակներ և երթևեկելի հարթ ճանապարհներ ու մայթեր ապահովելու նպատակով: Նուբարաշեն վարչական շրջանի վարչական տարածքում գտնվող փողոցների, մայթերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն՝ հիմնանորոգման և մասնակի վերանորոգման նպատակով: Կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի վերանորոգման աշխատանքների իրականացում: 5000 քմ բակերի բարեկարգում և ասֆալտապատում, 500 գծմ մայթերի վերանորոգում:	Շահող կազմակերպություն	2024թ.կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
2.	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում	Բնակչների զբաղվածության համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակներում մարզասարքերի, խաղերի տեղադրում, և ասֆալտապատում: Բակերն ավելի հարմարավետ ու գեղեցիկ դարձնելու նպատակով բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների իրականացում: Հիմնանորոգվող բակային տարածքներում բնակիչների համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, արտաքին լուսավորության կառուցում, կանաչապատում, ինչպես նաև զրուցարանների, սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, կանաչապատման, ծաղկապատման աշխատանքների իրականացում: Նուբարաշեն վարչական շրջանի 9-րդ փողոց կենտրոնական զբոսայգու շատրվանին կից բարեկարգման աշխատանքներ:	Շահող կազմակերպություն	2024թ.կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
3.	Նուբարաշեն վարչական շրջանում կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում	Բնակիչների համար առավել հարմարավետ և գեղեցիկ պայմաններ ստեղծելու նպատակով Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում կանաչ տարածքների պահպանում և ընդլայնում: Ծրագիրը նախատեսում է նոր այգիների ստեղծում, կանաչ տարածքների ընդլայնում, ծառատունկ, ծառերի բնաբաժակների փորում և փխրեցում, սնուցում հանքային պարատանյութերով և բուժում թունաքիմիկատներով: Ծաղկապատում, սիզամարգերի բարեկարգում: Կիրականցվի չոր ծառերի հատում և երիտասարդացում, հիվանդ ծառերի խոր էտ, սիզամարգերի մաքրում թափված տերևներից,	«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ	2024թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի

		չորուկներց: Ծրագրում կներառվեն նաև 6 հուշարձանների հարակից տարածքների պահպանման և խնամքի աշխատանքներ, ծաղկապատում և ծառատունկ:		
4.	Նոր ջրագծերի, կոյուղատար և հեղեղատար և համակարգերի կառուցման աշխատանքներ	Ծրագրի նպատակն է վարչական շրջանի տարածքում բնակիչների կենսապայմանների բարելավման նպատակով կոյուղագծեր, ջրագծեր, ջրահեռացման համակարգեր: Նուբարաշեն վարչական շրջանում նոր ջրագծերի, կողուղագծերի կառուցման և արդիականացման աշխատանքներ: Նուբարաշեն վարչական շրջանի «Ա» թաղամասի այգետարածքի հարակից տարածքում 1500-2000 մ երկարությամբ ջրագծի արտաքին ցանցի կառուցման աշխատանքներ:	Շահող կազմակերպություն	2024թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
5.	Ֆուտբոլի դաշտին կից հանդերձարանի կառուցման աշխատանքներ	Վարչական շրջանի տարածքում ակտիվ մշակութային և մարզական կյանքի ապահովում: Ծրագրի նպատակն է ապահովել երեխաների զբաղվածությունը, կրթությունը, դաստիարակությունը և զարգացումը: Մարզիկների համար սպորտային պարապմունքներին մասնակցելու նպատակով պատշաճ և հարմարավետ պայմանների ստեղծում:	Շահող կազմակերպություն	2024թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
6.	Մշակութային և կրթական միջոցառումներ	Մշակութային ծրագրերի իրականացմամբ բնակչության մեջ մշակութային արժեքների ձևավորում և բարձրացում: Տոն և հիշատակի օրերի, ազգային տոնակատարությունների, եկեղեցական տոների, ժողովրդական ավանդույթների վերաբերյալ իրազեկում երիտասարդության շրջանում: Մշակութային միջոցառումների կազմակերպմամբ բնակիչների հետաքրքիր և բովանդակալից առօրյայի կազմակերպում, բակային ճամբարների, սպորտային խաղերի և մրցույթների կազմակերպմամբ երեխաների զբաղվածության ապահովում, ազգաբնակչության տարբեր տարիքային անձանց ընդգրկում մարզաառողջարարական ծրագրերում: Ծրագիրը նախատեսում է կրթական և մշակութային կազմակերպությունների գործունեության կազմակերպում:	Վարչական շրջանի ենթակայության ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, բնակչություն, մշակութային կազմակերպություններ, անհատ կատարողներ, Արարատյան Հայրապետական Թեմ	2024թ. կնքված պայմանագրերի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի
7.	Սպորտային միջոցառումներ	Սպորտային ծրագրերի իրականացմամբ տարբեր տարիքային անձանց ընդգրկում մարզաառողջարարական ծրագրերում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացում, շնորհալի պատանիների հայտնաբերում և ընդգրկում մանկապատանեկան մարզադպրոցներում, վարչական շրջանի բնակիչների ներգրավվածություն սպորտային կյանքին, մարզաառողջարարական ծրագրերին, առողջ ապրելակերպի սերմանում, ֆիզիկապես պատրաստված երիտասարդության ձևավորում: Ծրագրի շրջանակներում 2024 թվականին վարչական շրջանում կիրականացվեն տարեկան օրացուցային պլանով նախատեսված 8 սպորտային միջոցառումներ: Կկազմակերպվեն նաև	Վարչական շրջանի ենթակայության ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ, բնակչություն, մարզադպրոցներ, բնակչություն	2024թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի

		տոն և հիշատակի օրերին նվիրված հեծանվաշքերթներ, շախմատի մրցաշարեր, տարեցների մասնակցությամբ նարդու և շախմատի մրցումներ: Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների մասնակցությամբ կկազմակերպվեն սպորտլանդիաներ:		
8.	Սոցիալական ապահովության ծրագրեր	Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների հայտնաբերում, կարիքի գնահատում, ուղղորդում, համապատասխան աջակցության ցուցաբերում, կանխարգելում, սոցիալապես անապահով ընտանիքների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծում: Երևանի քաղաքապետարանի կողմից կամավոր ծրագրի շրջանակում ԿԴԻՀ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին տրվող սոցիալական աջակցության անհատական ծրագրի շրջանակներում ըստ կարիքի, աջակցության տրամադրում:	«ՍՕՍ-Մանկական գյուղեր» ԲՀ «Ապագա» բարեգործական հիմնադրամ, «Ամբրա» հոգեկան բարեկեցության կենտրոն, «ՍՈՐՍ» սոցիալական ՀԿ, «Փրկություն հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» ԲՀԿ, «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» ԲՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Քայլ առաջ» սոցիալական ՀԿ, «Վորլդ Վիժն» ՄՄԾՏԿ, տեղամասային պոլիկլինիկա, «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ, անհատ բարերարներ:	2024 թվականի ընթացքում Երևան համայնքի բյուջե

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շենգավիթ վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջաններին և Արարատի և Արմավիրի մարզերին: Շենգավիթ վարչական շրջանի տարածքը կազմում է 4060 հա, բնակչությունը՝ 136,3 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 18,2%: Վարչական շրջանը գտնվում է երկրաշարժերի օջախի Արարատյան տարածքում: Ունի շուրջ 6000-ամյա պատմություն:

Շրջանն ընդգրկում է Նոր Խարբերդ, Չարբախ, Ն. Չարբախ, Վ. Շենգավիթ, Ն. Շենգավիթ, Աէրացիա, Նորագավիթ թաղամասերը, Գ.Նժդեհ, Բագրատունյաց, Արշակունյաց, Արտաշիսյան և հարակից փողոցներով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Վարչական շրջանն ունի 650 բազմաբնակարան բնակելի շենք, 147-ը՝ բարձրահարկ (9-16 հարկանի), 13645 անհատական բնակելի տուն, 299 վերելակ: Շրջանում հաշվառված է 236 թեքահարթակ, 48 վթարային շենք, 145 բակային խաղահրապարակ:

Շենգավիթ վարչական շրջանում կա 5 գետնանցում, 2 վերգետնյա անցում: Շրջանի փողոցների երկարությունը կազմում է 149,7 կմ, մակերեսը՝ 2153,9 հազ. քմ, երթևեկելի մասի երկարությունը՝ 127,9 կմ:

Շենգավիթ վարչական շրջանի կանաչապատ տարածքների մակերեսը կազմում է 30,25 հա, ոռոգման ցանցի երկարությունը 105,3 կմ է, պուրակները, այգիները և հանգստի գոտիները 5-ն են: Վարչական շրջանի ջրամատակարարումն իրականացվում է 5 աղբյուրներից, շրջանում գործում է 1 ջրամբար:

Շենգավիթ վարչական շրջանում գործում է 29 դպրոց (4 ավագ, 25 հիմնական), 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 3 մարզադպրոց («Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ) և 1 մարզակումբ, («Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» ՀՈԱԿ), 2 երաժշտական դպրոց («Երևանի Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, «Երևանի Ստ. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ) և 3 կրթամշակութային կազմակերպություն («Երևանի Շենգավիթ վարչական շրջանի թիվ 5 մշակույթի կենտրոն», Երևանի Շենգավիթ վարչական շրջանի «Պատանեկության ստեղծագործական կենտրոն» և «Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Կ. Նիկողոսյանի անվան մանկապատանեկան արվեստի կենտրոն» ՀՈԱԿ-ներ):

Վարչական շրջանի տարածքում գործում են առողջապահական կազմակերպություններ, այդ թվում՝ 4 պոլիկլինիկա («Արտաշիսյան», «Արշակունյաց», «Թիվ 13 պոլիկլինիկա», «Կարմիր Բլուր»), 3 բժշկական կենտրոն («Շենգավիթ», «Սուրբ Աստվածամայր»), 2 ատամնաբուժական կլինիկա («Դենտա Էլիտա») և թիվ 3 մանկական ատամնաբուժական պոլիկլինիկա: Կան բժշկական ծառայություններ մատուցող այլ մասնավոր կլինիկաներ: Շրջանում «Առաքելություն Հայաստան» ՀԿ ենթակայությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են մի շարք սոցիալապես անապահով ընտանիքներ, միայնակ տարեցներ՝ շուրջ 110 շահառուներ, ինչպես նաև ԿԴԻՀ ընտանիքների երեխաների համար մատուցում են սոցիալ վերականգնողական ծառայություններ, զարգացման խմբակներ: Վարչական շրջանում գործող պոլիկլինիկաների հետ համագործակցությամբ սոցիալապես անապահով (կարիքավոր) ընտանիքների համար տրամադրվում են միջնորդագրեր՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով:

Խնամակալության և հոգաբարձության մարմինն իր լիազորությունների շրջանակներում ապահովում է երեխաների, ինչպես նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն:

Հիմնախնդիրներ

1. Փողոցների հիմնանորոգում, հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում, կամուրջների և ուղետարների հիմնանորոգում, վերգետնյա անցումների կառուցում,
2. Վերելակային տնտեսության արդիականացում,
3. Կոյուղու, ջրամատակարարման և ջրահեռացման ու ոռոգման ջրի նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն,
4. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորության ցանցի անցկացում,
5. Վթարային պատշգամբների վերանորոգում,
6. Կանաչապատ տարածքների ընդլայնման և ստեղծման անհրաժեշտություն,
7. Նոր Խարբերդ թաղամասում գազատարի, խմելու և ոռոգման ջրագծերի կառուցման անհրաժեշտություն,
8. Մանկապարտեզների վերանորոգում կամ հիմնանորոգում, կրթական մակարդակի բարելավում,
9. Կրթական կենտրոնների շենքային պայմանների բարելավում,
10. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին մատուցվող սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակի ընդլայնում,
11. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների արժևորման և կենսամակարդակի բարելավմանն ուղղված տոն և հիշատակի օրերին սոցիալական ծրագրերի ընդլայնման անհրաժեշտություն՝ վերջիններիս ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման նպատակով,
12. Հաշմանդամություն ունեցող երեխաների և անձանց առավել մատչելի միջավայրի ապահովում՝ տանը և դրսում, անկախ կյանքի հմտությունների զարգացման հնարավորությունների զարգացում, հասարակական կյանքին նրանց մասնակցության խթանում, ներառականության ապահովում,
13. Հաշմանդամություն ունեցող երեխաների համար սոցիալ-վերականգնողական կենտրոնների, ինչպես նաև սպորտային և ժամանցային խմբակների անհրաժեշտություն,
14. Ժամանակակից աջակցող միջոցների և պարագաների տրամադրման անհրաժեշտություն՝ հավասար հնարավորությունների ստեղծման և ինտեգրման նպատակով,
15. Սոցիալական գործառնման ուղղությամբ համայնքի զարգացում,
16. Տրանսպորտային հասանելիության և մատչելիության խնդիրներ (գործող սոցիալ-վերականգնողական կենտրոնները, որոնք պետության կողմից պատվիրակած անվճար ծառայություններ են մատուցում հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաներին գտնվում են համայնքից դուրս, ինչը խնդիր է կարիքավոր ընտանիքների համար),
17. Տարեցների արժևորման, կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ՝ ծերապարտեզների, խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծման անհրաժեշտություն,
18. Արտակարգ, անհետաձգելի լուծում պահանջող իրավիճակներում արագ արձագանքման հնարավորությունների ընդլայնում,

19. Կրթական համակարգից դուրս մնացած կամ կրթությունից դուրս մնալու վտանգի առաջացման դեպքում երեխաների արագ հայտնաբերմանն և կանխարգելմանն ուղղված արդյունավետ մեխանիզմների ստեղծում,
20. ԿԴԻՀ երեխաների համար ցերեկային հոգածության կենտրոնների անհրաժեշտություն,
21. Իրավասության սահմաններում տեղեկատվական շտեմարանների հասանելիություն՝ ճշգրիտ և արագ տեղեկատվություն ստանալու նպատակով,
22. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների միասնական տեղեկատվական համակարգերի հասանելիություն՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի պատասխանատու աշխատողի միջոցով՝ պահպանելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները,
23. Միայնակ, առանց խնամքի մնացած և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար սոցիալական ծառայությունների ապահովում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգում	Ծրագրի անմիջական նպատակը քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության ապահովումն է: Կիրականացվեն 40000 քմ և 2000 քմ (հողային պաստառով) ասֆալտապատման աշխատանքներ շրջանի այն թաղամասերում և փողոցերում, որտեղ առկա են առաջնահերթ խնդիրներ: Կտարվեն մշտական աշխատանքներ՝ պահպանելու ասֆալտ-բետոնե ծածկը: Կիրականացվեն փոսալցման աշխատանքներ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024 թվականի ընթացքում
2.	Եզրաքարերի հիմնանորոգում և վերանորոգում	Կիրականացվեն եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ այն հասցեներում, որտեղ առկա է անհրաժեշտություն: Մաշված, վնասված եզրաքարերի ապամոնտաժում և նոր եզրաքարերի տեղադրում՝ 200գմ, եզրաքարերի տեղադրում՝ 2000գմ, եզրաքարերի վերատեղադրում՝ 250գմ: Այն հասցեներում ևս, որոնք ընդգրկված են ասֆալտապատման ծրագրում, ասֆալտապատմանը զուգահեռ կիրականացվեն եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-3-րդ եռամսյակներ
3.	Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում	Կիրականացվեն սալիկների տեղադրման աշխատանքներ այն հասցեներում, որտեղ առկա է անհրաժեշտություն: 4000 քմ սալիկապատման աշխատանքներ՝ մայթերի բետոնե սալերի, ասֆալտ-բետոնե ծածկույթի քանդում (ապամոնտաժում) և նոր սալիկների տեղադրում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-3-րդ եռամսյակներ
4.	Թեքահարթակների կառուցում	Կիրականացվեն թեքահարթակների կառուցման աշխատանքներ այն հասցեներում, որտեղ առկա է անհրաժեշտություն: 100 հատ թեքահարթակների կառուցման աշխատանքներ՝ մայթերի բետոնե սալերի, ասֆալտ-բետոնե ծածույթի քանդում /ապամոնտաժում/ և թեքահարթակների կառուցում: Այն հասցեներում ևս, որոնք ընդգրկված են ասֆալտապատման ծրագրում, ասֆալտապատմանը զուգահեռ կիրականացվեն թեքահարթակների կառուցման աշխատանքներ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-3-րդ եռամսյակներ
5.	Բակային տարածքների բարեկարգում	Ծրագրի նպատակն է ապահովել քաղաքացիների ժամանցը և հանգիստը: Վերանորոգվելու է 50 բակ, ընթացիկ վերանորոգվելու է 45 բակ: Նախկինում կառուցված խաղահրապարակների 5000 քմ հատակի փոխարինում ռետինե գորգով, տեղադրվելու են 50 մանկական խաղերի և վարժասարքերի հավաքածուներ, 25-ական 3,4Х4.4 և 3,0Х2,4 զրուցատաղավարներ, 580 հատ նստարաններ և 250 հատ աղբամաններ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024 թվականի ընթացքում
6.	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի հարթ տանիքի՝ 1500 քմ և թեք տանիք՝ 10000 քմ վերանորոգում: Կկատարվեն հարթ տանիքների իզոգամի մասնակի նորոգում կամ հին, վնասված իզոգամի փոխարինում նորով: Թեք	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-3-րդ եռամսյակներ

		տանիքների դեպքում կիրականացվի տանիքի ծածկանյութի (ազբոշիֆեր կամ թիթեղ) փոխարինում նորով, իսկ հիմնանորոգման ընթացքում՝ փայտյա տարրերի փոխարինում:		
7.	Մուտքերի վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել մուտքերի վերանորոգում՝ 30 մուտք, 150 քմ մուտքի դուռ, 1300 քմ պատուհան, պատերի հարթեցում և ներկում, ապակեպատում, պատուհանների յուղաներկում, շքամուտքի հարթակի բետոնապատում, բազրիքների վերանորոգում, աստիճանավանդակի նորոգում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-3-րդ եռամսյակներ
8.	Գեղարվեստական լուսավորում, լուսավորության ցանցի վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի գլխավոր փողոցների՝ Գ.Նժդեհի, Բագրատունյաց փողոցներ և Արշակունյաց պողոտա, շենքերի գեղարվեստական լուսավորման աշխատանքներ, ինչպես նաև տեղադրել 5550 լուսատուներ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-3-րդ եռամսյակներ
9.	Վերելակների վերանորոգում	Կիրականացվեն վերելակների վերանորոգում շրջանի բոլոր բազմաբնակարան շենքերում, կսահմանվի մշտական հսկողություն վերելակների անվտանգության և անխափան աշխատանքի ուղղությամբ: Կշարունակվի հսկողությունը վարչական շրջանի բոլոր բազմաբնակարան շենքերի վերելակների աշխատանքի և անվտանգության նկատմամբ, առաջացած թերություններն ու խնդիրները կկարգավորվեն համապատասխան ծառայության կողմից: Մի շարք բազմաբնակարան շենքերում, որտեղ առկա են բեռնատար վերելակներ, կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ՝ բեռնախցիկի, ճոպանների փոխարինում, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում: Կվերանորոգվի 3 վերելակ:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024 թվականի ընթացքում
10.	Վթարային պատշգամբների վերանորոգում	Կիրականացվեն պատշգամբների ամրացում և վերանորոգում շրջանի մի շարք բազմաբնակարան շենքերում: Պատշգամբների ամրացում և վերանորոգում (95 պատշգամբ) շրջանի մի շարք բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև այն հասցեներում որտեղ առկա է քաղաքացիների անվտանգությունն ապահովելու խնդիր:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-4-րդ եռամսյակներ
11.	Ախտահանման և միջատազերծման ծառայություններ (դեռատիզացիա)	Ապահովել քաղաքացիների բարեկեցությունը, անվտանգությունը, ինչպես նաև սանիտարահիգիենիկ պայմանները: Դեռատիզացիոն աշխատանքներ կիրականացվեն պարբերաբար վարչական շրջանի սեփական տնատիրություններ ունեցող փողոցներում: Ախտահանման և միջատազերծման ծառայությունները վարչական շրջանում կմատուցի հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը: Շրջանի բոլոր սեփական տնատիրություններում պարբերաբար կկատարվեն կանխարգելիչ և ըստ անհրաժեշտության ախտահանման, միջատազերծման աշխատանքներ: Վարչական շրջանի	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024 թվականի ընթացքում

		բազմաբնակարան շենքերում նշված աշխատանքներն իրականացվում է համատիրությունների կամ կառավարման մարմինների կողմից՝ պայմանագրի համաձայն: Կիրականացվեն 1 մլն քմ ախտահանման աշխատանքներ:		
12.	Հենապատերի վերանորոգում	Կիրականացվեն հենապատերի վերանորոգման աշխատանքներ այն հասցեներում, որտեղ առկա է անհրաժեշտություն: 200 քմ հենապատերի վերանորոգում՝ քանդված և կամ փլուզված հատվածների վերանորոգում և ամրացում:	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ	2024թ. 2-3-րդ եռամսյակներ
13.	Նոր Խարբերդ թաղամասում գազատարի կառուցում	Քաղաքացիների բարեկեցության, որակյալ կյանքի ապահովում: Նախատեսվում է 45 կմ գազատարի կառուցում:	Գործարար ոլորտ, բարերարներ	2024 թվականի ընթացքում
14.	Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն	Նպատակն է ապահովել երեխաների ուսուցումը, ժամանցը և հանգիստը: Տարվա կտրվածքով մշտապես իրականացնել մանկապարտեզների տնօրենների, մանկավարժների, բուժ. աշխատողների համար վերապատրաստման դասընթացներ՝ միտված նոր գիտելիքների, կարողությունների և հմտությունների միջոցով ոլորտում ժամանակակից, նորարական մեթոդների կիրառմանը: Հսկողություն սահմանել մանկապարտեզներում ներառական կրթության կազմակերպման նկատմամբ՝ տարբերակելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին և համապատասխան աշխատանք իրականացնել ծնողների և երեխաների հետ: Նպաստել երեխայի խոսքի զարգացմանը, ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը, օգնել տիրապետել ծավալուն խոսքին, ինչի շնորհիվ կկարողանա արտահայտել իր զգացմունքներն ու պահանջները: Իրականացնել գիտելիքների հաղորդման, արտադպրոցական կրթության տարբեր ուղղությունների գծով ունակությունների և հմտությունների ձևավորման, անձի տվյալներին և պահանջներին համապատասխան մտավոր ու ստեղծագործական ընդունակությունների, ֆիզիկական որակների զարգացման գործընթաց: Բարելավել նախադպրոցական և արտադպրոցական կրթություն իրականացնող կազմակերպությունների շենքային պայմանները՝ առաջնային ուշադրություն դարձնելով տանիքի, ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի, ջերմամեկուսացման ու էներգախնայողության աշխատանքներին:	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Երևանի քաղաքապետարան, ՀԿ-ներ և ԲՀԿ-ներ	2024թ. համար նախատեսված և կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
15.	Մշակութային միջոցառումների իրականացում	Բնակչության հանգստի և ազատ ժամանցի պատշաճ կազմակերպում, պատանի ստեղծագործողների բացահայտում: Վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել տոն և հիշատակի օրերին նվիրված 26 միջոցառումներ, ինչպես նաև շրջանի այգիներում,	Երևան քաղաքի այլ վարչական շրջաններ, վարչական շրջանի ենթակայության ՀՈԱԿ-	2024թ. համար նախատեսված և կնքված պայմանագրի

		պուրակներում և հանգստյան այլ գոտիներում ժամանակացույցով նախատեսված մշակութային միջոցառումներ:	ներ, ՀՀ մարզեր	ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
16.	Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում	Ժամանցի կազմակերպում, մշակույթին, հայրենասիրական դաստիարակությանը, պետականությանը, ազգային և պետական խորհրդանիշերին, ավանդույթներին, կրոնին, տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում:	Վարչական շրջանի ենթակայության ՀՈԱԿ-ներ, ՀԿ-ներ, ԲՀԿ-ներ, այլ ստորաբաժանումներ	2024թ. համար նախատեսված և կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
17.	Սպորտային միջոցառումների կազմակերպում	Քաղաքացիների շրջանում առողջ ապրելակերպի խթանման նպատակով կիրականացվի ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի և վարչական շրջանի ծրագրերով նախատեսված մարզական միջոցառումներ, տարբեր տարիքային խմբերի շրջանում, խմբակային մարզաձևերի մասսայականացմանն ուղղված աշխատանքների իրականացում:	ՀՀ մարզեր, առանձնակի ուշադրության կենտրոնում կլինի ռազմական հաստատությունների փոխայցելությունները, որտեղ նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիները կծանոթանան ռազմական հմտություններին:	2024թ. համար նախատեսված և կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
18.	Գրադարանային ծառայությունների մատուցում	Ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է իրականացնել գրքային ֆոնդի թարմացում, պահպանում, հասանելիության բարձրացում, ընթերցողների թվի ավելացում:	Երևան քաղաքի և ՀՀ մարզերի գրադարաններ	2024թ. համար նախատեսված և կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի
19.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքների կյանքի որակի բարելավում՝ աղքատության կանխարգելում, ինչպես նաև առաջնային սոցիալական	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի	2024 թվականի ընթացքում

	ընտանիքներին աջակցություն	կարիքների բավարարում: Աջակցության ծրագրերի իրականացման միջոցով վարչական շրջանի՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների կենսամակարդակի բարելավում, աղքատության կանխարգելում:	նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, հասարակական կազմակերպություններ, բարերարներ	
20.	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր	Ելնելով հասարակության սոցիալական բևեռվածության և աղքատության կանխարգելման, ոչ ոքի չանտեսելու սկզբունքից, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման անհրաժեշտ կենսամակարդակի ապահովման, կենսապայմանների բարելավման, ներառականության, անկախ կյանքի հմտությունների զարգացման, հավասար իրավունքների, մատչելի միջավայրի, ժամանակակից մոտեցումների անհրաժեշտությունից՝ կանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքների համար անհատական սոցիալական ծրագրերի, ինչպես նաև տոն և հիշատակի օրերին միջոցառումների իրականացում: Հնարավորինս բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքները: Աջակցության ծրագրերի իրականացման միջոցով՝ ԿԴԻՀ ընտանիքների կյանքի որակի բարելավում, ինչպես նաև վերջիններիս ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացմանն ուղղված միջոցառումներ:	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,հասարակական կազմակերպություններ, բարերարներ	2024 թվականի ընթացքում
21.	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն	Նպատակն է իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների լավագույն շահերի պաշտպանություն: Շենգավիթ վարչական շրջանում կոորդինացնել երեխաների իրավիճակի վերաբերյալ բազմաբնույթ տվյալների հավաքագրումը, վերլուծությունն ու	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ՀՀ	2024 թվականի ընթացքում

		օգտագործումը երեխաների կյանքի ու առողջության, մշակութային և հասարակական կյանքին մասնակցության ապահովման նպատակով: Կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաների համար ֆիզիկական և հոգևոր-մշակութային զարգացման նպատակով էքսկուրսիաների կազմակերպում: Մանկական աղքատության փուլային հաղթահարման նպատակով համապասխան հագուստի ձեռքբերում և տրամադրում:	ոստիկանություն, ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն,հասարակական կազմակերպություններ, բարերարներ	

ՔԱՆԱՔԵՌ-ՋԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը գտնվում է մայրաքաղաքի հյուսիսարևելյան հատվածում և զբաղեցնում է 775 հա տարածք: Սահմանակից է Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջաններին: Բնակչությունը կազմում է 75,0 հազ.մարդ:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում փողոցների ընդհանուր երկարությունը 68,6 կմ է, երթևեկելի մասի երկարությունը՝ 59,4 կմ, ասֆալտ-բետոնե ծածկի ընդհանուր մակերեսը՝ 543533 քմ, որից 402340 քմ-ն ասֆալտապատված է, 141193-ը՝ ենթակա է ասֆալտպատման: Վարչական շրջանում տեղադրված է 601 նստարան, 420 աղբաման, 65 զրուցարան: Վարչական շրջանում առկա են լուսավորված փողոցներ՝ 69000գծմ:

Վարչական շրջանում առկա են 375 բազմաբնակարան շենք: Հարթ տանիքների ընդհանուր մակերեսը 82034 քմ է, որից վերանորոգված են 24900 քմ, ենթակա են վերանորոգման ՝ 57134 քմ, թեք տանիքների ընդհանուր մակերեսը՝ 191200 քմ, որից վերանորոգված է 24600 քմ, ենթակա է վերանորոգման՝ 166600 քմ, վերելակների ընդհանուր թիվը կազմում է 270, որից 116-ը՝ նոր վերելակներ են, 154-ը՝ ենթակա են փոխարինման, շենքերի մուտքերի թիվը՝ 977 է, որից վերանորոգված են 365-ը, 612-ը՝ ենթակա են վերանորոգման:

Վարչական շրջանում առկա է 5 հանգստի գոտի, բակային տարածքներ, խաղահրապարակներ՝ 67, թեքահարթակներ՝ 61, հենապատ՝ 1:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ենթակայությամբ գործում են թվով 15 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ, 9 հիմնական դպրոց, 1 «Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամ, 1 ավագ դպրոց, 1 հատուկ ֆիզմաթ դպրոց, ՌԴ ՊՆ 1 միջնակարգ դպրոց, 1 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոն, 1 կերպարվեստի դպրոց, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 կենտրոնացված գրադարանային համալիր՝ 2 մասնաճյուղով, 1 մարզադպրոց, 1 մշակութային կենտրոն, 1 շախմատի դպրոց, 3 թանգարան, 5 ԲՈՒՀ, 2 քոլեջ, պետական արհեստագործական 1 ուսումնարան:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մանկապարտեզներն անվճար են:

Վարչական շրջանի բոլոր կրթօջախները ջեռուցվում են:

Վարչական շրջանում գործում է 1 մանկատուն, երեխաների աջակցության 3 կենտրոն, 3 բարեգործական ճաշարան, 1 սոցիալական տուն, 6 հիվանդանոց և 2 պոլիկլինիկա, շրջանում գործում են նաև բժշկական ծառայություններ մատուցող մասնավոր այլ կազմակերպություններ:

Հիմնախնդիրներ

1. Կոյուղագծերի հիմնանորոգման աշխատանքներ,
2. Անձրևատարերի կառուցման աշխատանքներ,
3. Վերելակների ամբողջական փոխարինման կամ անվտանգ աշխատանքի ապահովման անհրաժեշտություն,
4. Փողոցների, բակերի և մայթերի ասֆալտապատման, նոր գրունտային փողոցների և մայթերի ասֆալտապատման անհրաժեշտություն,
5. Բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման բարելավման (պատուհանների և դռների փոխարինում) անհրաժեշտություն,
6. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգման անհրաժեշտություն,

7. Փողոցներում և բակային տարածքներում արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման աշխատանքներ,
8. Ոռոգման ցանցի ընդլայնման և բարելավման անհրաժեշտություն,
9. Բակային տարածքների բարեկարգում, ցանցապատված տարածքների ապամոնտաժում, խաղահրապարակների, արահետների և կանաչ տարածքների ստեղծում, զրուցարանների, լուսատուների, աղբամանների և նստարանների տեղադրում,
10. Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգում,
11. Հենապատերի հիմնանորոգում,
12. Մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում,
13. Հիմնանորոգում հ.հ. 148; 156; 157; 159 մսուր-մանկապարտեզներում,
14. Մանկապարտեզների բակային տարածքների բարեկարգում, խաղահրապարակների ստեղծում՝ հ.հ. 148; 150; 151; 152; 153; 155; 156; 157; 158; 159; 161; 162 մսուր-մանկապարտեզներում,
15. Ոռոգման ցանցերի անցկացում, կոյուղագծերի հիմնանորոգում հ՝հ՝150 և 151 մսուր-մանկապարտեզներում,
16. Ա. Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգում,
17. Դ՝Անհաղթի անվան պուրակի հիմնանորոգում,
18. Բացօթյա միջոցառումների կազմակերպման համար Մ՝Ավետիսյանի անվան պուրակում բեմահարթակի կառուցում ՝ իր հարմարություններով,
19. Նորաստեղծ այգու՝ Դրո և Պ՝ Սևակի խաչմերուկում գտնվող, բարելավման և ընդարձակման աշխատանքներ,
20. Բազմաֆունկցիոնալ դաշտերի բարեկարգում,
21. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացում,
22. Երեխայի գերակա շահի առաջնահերթություն,
23. Երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի ապահովում,
24. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում, սոցիալական ներառում,
25. Տարեցների ցերեկային խնամքի և զբաղվածության կենտրոնի (ծերապարտեզ) ստեղծում,
26. Անօթևաններին ժամանակավոր կացարանով ապահովում:

2024թ. նախատեսվող ծրագրեր				
Հ/հ	**Ծրագրի անվանում**	**Ծրագրի նպատակ, համառոտ նկարագրություն**	**Համագործակցություն**	**Սկիզբ և ավարտ**
1.	Փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում	Ասֆալտապատ բակային տարածքների և փողոցների կապիտալ վերանորոգում՝ 18000 քմ: Վերանորոգման աշխատանքները ներառում են ա/բ ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում: Վարչական շրջանի փողոցների, մայթերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտ-բետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգմանաշխատանքների իրականացում ըստ կազմված տեխ.պայմանների:	Երևանի քաղաքապետարան	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
2.	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել 3000 քմ միաշերտ և 3000 քմ երկշերտ հարթ տանիքների նորոգման աշխատանքներ: Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ տանիքների հիմնանորոգում իզոգամով, պատերի ամրացում: Կիրականացվի հին վնասված շերտի քանդում, ցեմենտահարթեցնող շերտի իրականացում, նոր իզոգամի տեղադրում, օդափոխության խողովակների վրա մետաղական ծածկի տեղադրում:	Համատիրություններ	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
3.	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել 4400 քմ թեք տանիքների նորոգման աշխատանքներ: Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների հիմնանորոգում ազբոհերձաքարով: Կկատարվի նաև պատերի ամրացում: Հին ազբոշիֆերի ապամոնտաժում, փայտյա կոնստրուկցիաների մասնակի փոխարինում, նոր ջրհորդանների տեղադրում, նոր ցինկապատ ծածկաթիթեղի տեղադրում:	Համատիրություններ	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
4.	Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում	Նախատեսվում է 9000 քմ վերակառուցման և նորոգման աշխատանքներ: Վարչական շրջանի մայրուղիների և փողոցների վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած քանդված հատվածների ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված տեխ.պայմանների:	Երևանի քաղաքապետարան	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի

5.	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	Նախատեսվում է իրականացնել 33 մուտքերի վերանորոգման աշխատանքներ:Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի շքամուտքի, մուտքի, առաստաղի մասնակի քերում, միջհարկային տարածքում տեղադրված ճաղավանդակների ապամոնտաժում, դռների ներկում, պատերի սվաղում, նոր մետաղապլաստե պատուհանների, դռների տեղադրում, մուտքի մետաղական դռան պատրաստում և տեղադրում, մալուխների տեղադրում կաղապարի մեջ, աստիճանավանդակների նորոգում:	Համատիրություններ	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
6.	Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում	Ծրագիրը նախատեսում է բակային տարածքների կապիտալ և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ բակերում մայթերի եզրաքարերի փոխարինում, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև նոր գեղարվեստական բետոնե սալիկներ, երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով կստեղծվեն նոր սիզամարգեր, կիրականացվի ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում, լուսավորության և ոռոգման նոր ցանցերի անցկացում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
7.	Քաղաքային կահավորանքի վերանորոգում և ավելացում	Նախատեսվում է 110 նստարանների, 15 աղբամանների տեղադրման աշխատանքներ: Ծրագիրը նախատեսում է բակային տարածքներում և փողոցներում նստարանների, աղբամանների ավելացում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
8.	Մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակիչների՝ մեծահասակների և փոքրերի համար նախատեսված է 3 մինի ֆուտբոլի դաշտի կառուցում: Ծրագիրը նախատեսում է մինի ֆուտբոլի դաշտի կառուցում:	Երևանի քաղաքապետարան	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
9.	Հենապատերի կառուցում	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակիչների՝ մեծահասակների և փոքրերի համար նախատեսված է իրականացնել հենապատի կառուցում: Ծրագիրը նախատեսում է 2 հենապատի կառուցման աշխատանքներ:	Երևանի քաղաքապետարան	2024թ. ըստ կնքված պայմանագրի և պայմանագրով սահմանված ժամանակացույցի
10.	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կրթամշակութային	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում և անցկացում: Կրթության նշանակության և ուսուցչի դերի արժևորում երեխաների ձևավորման և	ՀՈԱԿ-ներ, ՊՈԱԿ-ներ	2024 թվականի ընթացքում ՝ըստ կնքված պայմանգրի և

	միջոցառումների անցկացում	դաստիարակության գործընթացում: Կրթական, ճանաչողական ծրագրերի իրականացում: Ծրագիրը նախատեսում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կողմից կրթամշակութային հաստատությունների՝ մշակույթի կենտրոնի, կենտրոնացված գրադարանային համալիրի, երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության կազմակերպում, դրանց շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում:		պայմանագրով սահմանված ժամանակացույցի
11.	Վարչական շրջանի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում	Սոցիալական աջակցության կարիք ունեցող, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների ու անձանց կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում:		2024 թվականի ընթացքում
12.	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման միջոցով աջակցության ցուցաբերում բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին ու անձանց: Կարիքների գնահատման արդյունքում սոցիալական աջակցության տրամադրման անհատական ծրագրերի կազմում: Ըստ գնահատված կարիքի բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքների կենցաղային պայմանների բարելավման նպատակով համապատասխան աջակցության տրամադրում: Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների երեխաներին համապատասխան աջակցության ցուցաբերման միջոցով այդ ընտանիքների սոցիալական բեռի թեթևացում:	Հասարակական կազմակերպություններ	2024 թվականի ընթացքում
13.	Հարազատ չունեցող անձանց և սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների անդամների հուղարկավորության կազմակերպում	Հուղակավորության կազմակերպման հարցում աջակցության ցուցաբերում: Հարազատ չունեցող անձանց, ինչպես նաև սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների անդամների հուղարկավորության կազմակերպման ծառայությունների մատուցում (գերեզմանափոսի պատրաստում, դագաղ, դիատար ավտոմեքենայի տրամադրում):		2024 թվականի ընթացքում

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի՝ Երևանի զարգացման ծրագիրը փաստաթուղթ է, որը բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կանխատեսումները: Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) առանձին բաժիններով ներկայացված են Երևանի վարչական շրջանների զարգացման ծրագրերը:

Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի հիմնական նպատակն է՝ նախանշել քաղաքային տնտեսության զարգացման ուղղությունները մեկ տարվա կտրվածքով՝ հաշվի առնելով առկա հիմնախնդիրները:

Ծրագրի կառուցվածքում առանձին ներկայացված են քաղաքային տնտեսության ոլորտները և Երևանի վարչական շրջանները: Յուրաքանչյուր բաժին հիմնականում բաղկացած է հետևյալ ենթաբաժիններից՝ «Վիճակի բնութագիր», «Հիմնախնդիրներ» և «2024 թվականին նախատեսվող աշխատանքներ»:

2024 թվականին նախատեսվող աշխատանքներն ու ծրագրերը կազմվել են՝ հիմք ընդունելով Երևանի զարգացման 2024-2028թթ. հնգամյա ծրագրի նախագծի գերակայությունները և առկա հիմնախնդիրները:

Տրանսպորտի ոլորտում 2024 թվականին նախատեսվում է իրականացնել Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրման գործընթաց, հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում, մետրոպոլիտենի վագոնների արդիականացում, նոր ավտոբուսների կամ էլեկտրաբուսների ձեռք բերում (18 մետր 249 հատ և 8.5 մետր երկարությամբ 171 հատ), նոր տրոլեյբուսների (71 հատ) ձեռք բերում, երթևեկության կազմակերպման թվայնացման ծրագրային համակարգի մշակում և ներդրում, թվով 350 լուսացույցների աշխատանքը կանոնակարգելու համար լուսացույցների նոր համակարգերի ներդրում, կանգառասրահներում ցուցատախտակների տեղադրում: Նախատեսվում է իրականացնել թվով 420 էլեկտրալիցքավորման կայանների կառուցման և էլեկտրաբուսների լիցքավորման աշխատանքների կազմակերպում:

Կոմունալ տնտեսության ոլորտում նախատեսվում են իրականացնել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի թվով 600 վերելակների փոխարինում, բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում, բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի

իրականացում, Երևան քաղաքի ջրագծերի, կոյուղագծերի և հեղեղատար համակարգերի կառուցում:

Արտաքին լուսավորության ոլորտում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի ընթացիկ շահագործման, պահպանման և արդիականացման աշխատանքներ, «Երևանի քաղաքային լուսավորություն» ծրագրի շրջանակում Երևան քաղաքի 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացում:

Բնապահպանության ոլորտում նախատեսվում է իրականացնել Կենդանաբանական այգու ընդլայնում, «Դալմայի այգիներ» հանրապետական նշանակության նորահայտ հուշարձանի տարածքում համայնքային զբոսայգու հիմնում, Երևանի ջրային տարածքների էկոլոգիական վիճակի բարելավում: Նախատեսվում է ձեռք բերել կանաչ տարածքների և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումներ:

Կարևորվում է բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովումը ինչպես Երևանի բնակիչների, այնպես էլ մայրաքաղաքի հյուրերի համար, մասնավորապես՝ հանգստի գոտիների ստեղծումը, կանաչ տարածքների պահպանումն ու ավելացումը, շենքերի և բակային տարածքների բարեկարգումը, ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը, հարմարավետ և անվտանգ տեղաշարժի ապահովումը, բնակչության սակավաշարժ խմբերի համար համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը:

Ծրագրի նախագիծը 2023թ. նոյեմբերի 9-ին տրամադրվել է Երևանի քաղաքապետի՝ 2023թ. նոյեմբերի 6-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատելու և Երևանի քաղաքապետի 2019 թվականի հունիսի 7-ի հ. 1881-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ. 3637-Ա որոշմամբ հաստատված խորհրդի անդամներին, որոնք նոյեմբերի 16-ին հրավիրված նիստի ընթացքում կողմ են քվեարկել (17 կողմ, 0 դեմ) ծրագրի նախագիծը հանրային քննարկման ներկայացնելուն:

Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական (www.e-draft.am) կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական (www.yerevan.am) կայքում հրապարակվել է ծրագրի նախագծի էլեկտրոնային տարբերակը:

2023 թվականի դեկտեմբերի 1-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի դեկտեմբերի 4-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նիստին ներկա խորհուրդի անդամների ձայների մեծամասնությամբ տրվել է դրական

եզրակացություն Երևանի զարգացման 2024 թվականի ծրագրի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելուն:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածը, համաձայն որի Երևանի քաղաքապետը տարեկան բյուջեի նախագիծը մշակելիս հաշվի է առնում Երևանի բնակչության կենսական շահերը, Երևանի զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները՝ որոշման նախագծով Երևանի ավագանու հաստատմանն է ներկայացվում Երևանի զարգացման 2024 թվականի ծրագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ.ԱՎԻՆՅԱՆ